



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Սիրելի հաւատացեալ ընթերցասէրներ.

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովս, ուրախութեամբ կը շարունակէ լոյս ընծայել «Լոյս» Պարբերաթերթը, որ սկսաւ լոյս ընծայուիլ Թեմիս Անդրանիկ եւ Բարեջան Առաջնորդին՝ Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի նախաձեռնութեամբ եւ խմբագրութեամբ՝ գաղութիս գաւակներէն, գրող եւ հրատարակագիր՝ Տիար Բարգէն Թօփճեանի: Առաւել քան 14 տարի, «Լոյս»ը մեր իմացական եւ հոգեւոր աշխարհներուն համար եղաւ աղբիւր լոյսի եւ շնորհքի:

Ահաւասիկ, տարիներու երկար ճանապարհորդութենէ ետք, «Լոյս»ը կը շարունակէ իր ընթացքը, նոյն հաւատքով եւ առաքելութեան նոյն հասկացողութեամբ:

Բոլոր անոնք, որոնք հոգեւոր դաստիարակութեան կամ նիւթերու վերաբերեալ զըրուութիւններ ունին եւ կ'ուզեն զանոնք հրատարակուած տեսնել, «Լոյս»ը պատրաստ պիտի ըլլայ իր էջերը տրամադրելու միշտ պահելով իր առաքելութիւնը:

Այս առիթով, անհունօրէն կը շնորհաւորենք եւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանին, որ անցեալ տարիներուն իր Հայրական հոգածութեան արժանացուց «Լոյս»ը: Երախտագիտութեան նոյն զգացումներով, կ'ուզենք շնորհակալութիւն յայտնել խմբագիր եւ գրող՝ Տիար Բարգէն Թօփճեանին, որ անցնող շուրջ 14 տարիներուն խղճմտանքով եւ անօրինակ նուիրուածութեամբ կատարեց խմբագրութիւնը «Լոյս»ին, զայն ճառագայթող իրականութեան վերածելով:

Թող Աստուած, այս օրերու մեր ճիգերն ու աշխատանքները շարունակէ արդիւնաւորել եւ օրհնել, որպէսզի կարենանք իր անուան փառաբանութեան նուիրուած նուազարանի մը վերածել «Լոյս»ը:

ՄԵՐ ՄԵԾԵՐԸ Կ'ԸՍԵՆ

Ով որ իր սիրտն ու հոգին կը մաքրէ ախտերէ,
անիկա կը պարուրուի աստուածային գեղեցկութեամբ:

Ս. ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱԽ

Ինչ որ ունինք՝ թող Աստուծոյ նուիրուած ըլլայ:

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

Ինչպէս որ անկարելի է մէկ աչքով երկինք նայիլ, իսկ միւսով՝ երկիր,
այնպէս ալ՝ անհնար է թէ՛ երկնաւոր եւ թէ՛ երկրաւոր սիրով Աստուծոյ հաճելի ըլլալ:

ԻՍՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՅԻ

Առաջին մարդը ուզեց աստուածանալ,
սակայն անկարող ըլլալով՝ հետեւեցաւ սուտ աստուածներու:

Այդ պատճառով ալ Աստուած մարդացաւ, որպէսզի ճանչնանք միակ եւ ճշմարիտ աստուածը:

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ


Վախէն տարուբերող հոգիին նաւահանգիստը՝ սէրն է:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին Եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ**



**«ԵԹԷ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԿՈՂՄՆ Է,
ՈՐՎ ԿՐՆԱՅ ՄԵՉԻ ՀԱԿԱՌԱԿ ԸԼԼԱԼ»**



Աստուածային ճշմարտութեան պատգամաբերները, մարգարէները իրենց ժողովուրդի պատմութեան ամէնէն ճգնաժամային պահերուն պատգամեցին՝ մի՛ վախնաք, որովհետեւ Աստուած մեզի հետ է: Այս հաւատքով շաղախուած ու յոյսով գօտեպնդուած երրայեցի ժողովուրդը յաղթահարեց ամէն տեսակ չար ու չարիք, որոնք յաճախ շրջապատեցին զինք իր դաւաճող պատմութեան ընթացքին:

Աստուածաշունչը յստակօրէն կը պարզէ թէ՛ Աստուած երբեք չլքեց մարդը, չըհեռացաւ իր Արարիչէն հեռացած արարածէն: Աստուած նո՛յնիսկ մեղքի տիրապետութեան ենթակայ դարձած մարդուն հետ եղաւ, որպէսզի զինք ազատագրէ չարին կալանքներէն: Հին Կտակարանը մարդուն հետ ըլլալու, մարդը դէպի ազատագրութիւն ու արդարութիւն, այլ խօսքով՝ փրկութիւն առաջնորդելու Աստուծոյ սիրոյն պատմութիւնն է, հակառակ Աստուծոյ սէրը մերժելու ու պատուէրը անտեսելու մարդուն բացասական վարքագծին ու ժխտական վերաբերումին:

Մարդուն հետ ըլլալու, մարդուն առջեւ հաւատքի, յոյսի ու սիրոյ ճանապարհը բանալու Աստուծոյ յանձնառութիւնը իր գերագոյն արտայայտութիւնը կը գտնէ

Նոր Կտակարանին մէջ: Ինչպէս կը հաստատէ Աւետարանիչը, Աստուած այնքան սիրեց մարդը, որ նո՛յնիսկ իր Միածին Որդին դրկեց աշխարհ (ՅՀ 3.16): Բեթղեհէմի ճամբով Աստուած



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, արսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

դա՛րձեալ, եւ այս անգամ աւելի շօշափելի ու տեսանելի կերպով, եղաւ մարդուն հետ: Արդարեւ, Աստուած ո՛չ միայն մարդուն հետ եղաւ, այլ նաեւ՝ մարդուն համար: Իր ուսուցումներուն ու հրաշագործութիւններուն ճամբով Աստուծոյ մարդեղացեալ Որդին յիշեցուց մեղաւորին ու հիւանդին, գրկեալ ու հայածուող մարդուն, թէ՛ մի՛ վախնար, այլ՝ հաւատա՛, որովհետեւ Աստուած քեզի հետ է:

Քրիստոսի Աւետարանին քարոզիչները, Աւետարանիչներ ու Առաքեալներ, յաճախակի կերպով յիշեցուցին կեանքի մաքառումներուն ու տազնապներուն դէմ գտնուող Քրիստոսի հետեւորդներուն թէ՛ «եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռ 8.31):

Արդարեւ, Աստուածաշունչը սոսկ աստուածային յայտնութեան դրուագները պարունակող գիրք է: Ան Աստուծոյ յաւերժաբան պատգամն է: Աստուածաշունչի ճամբով Աստուած կը խօսի մեզի հետ, եթէ մենք պատրաստ ենք լսելու զինք: Աստուածաշունչի ճամբով Աստուած մեզի հետ կ'ըլլայ, եթէ մենք պատրաստ ենք իր հետ ըլլալու:

Աստուծոյ խօսքը լսող առաջին ժողովուրդը եղանք: Մեր պատմութեան ուրախ ու մռայլ օրերուն Աստուած մեզի հետ եղաւ: Աստուծոյ ներկայութեամբ զօրացած, հաւատքով ու քաջութեամբ քայեցինք Աւետարանի ճամբէն: «Ո՛չ» ըսինք յուսահատութեան ու կառչեցանք յոյսին. «Ո՛չ» ըսինք վախին ու քաջութեամբ զինուեցանք. «Ո՛չ» ըսինք մահուան ու քալեցինք դէպի կեանք: Մենք հաւատացինք Առաքեալի վկայութեան ու խոստումին թէ՛ «եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ»...:

2015 տարուան սեմին, Առաքեալին նոյն բառերը դա՛րձեալ կը հնչեն Հայ կեանքէն ներս:

Պահ մը երեւակայեցէք 1915 թուականը մեր ժողովուրդի պատմութեան մէջ. Չարդ, աքսոր, անորոշութիւն... մէկուկէս միլիոն զոհ, հարիւր հազարաւոր որբեր, գաղթականներ՝ անօթի ու անտուն...:

Ու այսօր, 2015 թուականին, Յեղասպանութեան ու հայրենագրկումի ենթարկուած ժողովուրդը ունի իր հաւատքով ու յոյսով կերտուած, իր արիւնով ու քրտինքով վերանկախացած Հայրենիք, ազատագրուած Արցախ, կազմակերպուած Սփիւռք եւ յառաջդիմելու ու հզօրանալու հոգեկան, մտաւոր ու տնտեսական լայն կարելիութիւններ:

Արդարեւ, 100 տարին ոչի՛նչ է ազգի մը դարաւոր պատմութեան մէջ: Արդ, այս կարճ ժամանակահատուածի ընթացքին, ազգի մը համար մահէն կեանք քայելը, իր անկախութիւնը վերահաստատելը եւ ցեղասպանին ու աշխարհին դիմաց ամուր վճռակամութեամբ կանգնած, իր բռնաբարուած իրաւունքները պահանջելը փաստօրէն հրաշքի համագօր երեւոյթ է:

Աստուած անոնց հետ է, որ ծարաւ են արդարութեան ու կը պայքարին ի խնդիր արդարութեան (Մտ 5.6): Արդարութիւնը աստուածատուր պարգեւ է. ո՛չ ոք իրաւունք ունի զայն խլելու ուրիշէն: Քրիստոս երանի տուաւ բոլոր անոնց, որոնք յանձնառու են արդարութեան համար գործելու: Արդարութիւնը նաեւ աստուածատուր առաքելութիւն է. իւրաքանչիւր անհատ թէ՛ ազգ կոչուած է զայն պաշտպանելու ու իրագործելու: Հետեւաբար, ան որ արդարութեան համար կը պայքարի, Աստուած անոր հետ է եւ հետեւաբար, ո՛չ ոք կրնայ հակառակ ըլլալ անոր: Ա՛յս է մեր քրիստոնէական հաւատքը:

Այս հաւատքէն մղուած արդարութեան համար պայքարը դարձուցինք ամէնօրեայ տազնապ. արդարութեան ծարաւը միշտ մնաց անբաժան իւրաքանչիւր Հայու կեանքէն. արդարութեան ձգտումը վերանորոգ հաւատք ու յոյս ներշնչեց մեր ժողովուրդին: Ի խնդիր արդարութեան Հայ ժողովուրդի պայքարը կը շարունակուի, պէ՛տք է շարունակուի...:

Աստուծոյ Որդւոյն ծնունդը յիշեցում մըն է թէ՛ Աստուած արդար է, արդարին ու արդարութեան հետ:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան էին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Աստուծոյ Որդւոյն ծնունդը յիշեցում մըն է, որ Աստուած մեզի հետ եղաւ ու միշտ մեզի հետ է:

Արդ, Ժողովուրդ Հայոց, թող արդարութեան տիրանալու քու հաւատքդ երբեք ընկրկու՞մ չունենայ, քու յոյսդ՝ տկարացում, քու պայքարդ՝ նահանջ. միշտ հաւատա՛ արդարութեան յաղթանակին: Մի՛ մոռնար քու նահատակներդ, հաւատարիմ մնացիր անոնց սրբազան կրտակին: Միասնական ոգիով ու վճռակամ կեցուածքով արդարութի՛ւն պահանջէ: Եւ ա՛յս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ արժեւորէ 2015 թուականի իւրաքանչիւր օրը քու եւ քու ազգիդ կեանքին մէջ:

Աստուածայայտնութեան հոգեպարար տօնին առիթով, Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահ՝ Տիար Սերժ Սարգսեանը, մաղթելով իրեն արդիւնաշատ հայրենանուէր գործունէութիւն:

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հայցելով Ամէնաբարին Աստուծմէ, որ իրեն շնորհէ եկեղեցաշէն իրագործումներով հարուստ երկար գահակալութիւն: Նո՛յն սիրով կ'ողջունենք Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամէնապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք՝ Ամէնապատիւ Տ. Մեսրոպ Արք. Մուլթաֆեանը, մաղթելով իրենց եկեղեցանուէր ծառայութեամբ լեցուն գահակալութիւն:

Հայրական անհուն սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ մեր Թեմակալ Առաջնորդները, Հոգեւորական Դասը, Ազգային Իշխանութեանց մարմինները եւ մեր սիրելի Ժողովուրդին զաւակները, աղօթելով որ Բեթղեհէ՛մի Փրկիչը առաջնորդ ու պահպան ըլլայ իրենց:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

6 Յունուար, 2015
Անթիլիաս-Լիբանան

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐԸ

Ի՞նչ կրնանք ըսել այս բոլորին դիմաց: Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ: Եթէ Աստուած իր Որդիին չխնայէց, այլ՝ մինչեւ իսկ զայն մահուան մատնեց մեզի համար, անոր հետ նաեւ ամէն բան պիտի չշնորհէ՞ մեզի: Ո՞վ է որ պիտի մեղադրէ Աստուծոյ ընտրեալները: Ո՛չ որ, քանի Աստուած է արդարացնողը: Կամ ո՞վ պիտի դատապարտէ: Յիսուս Քրիստո՞ւք, որ մեզի համար մեռաւ՝ բաց մանաւանդ յարութիւն առաւ, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար: Անշուշտ ո՛չ: Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի սէրէն. նեղութի՛ւնը, անձկութի՛ւնը, հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՛ւնը, վտա՞նգը կամ սո՞ւրբ: Ինչպէս Սաղմոսներուն մէջ գրուած է.-

«Քեզի համար՝


մարդիկ մեզ կը սպաննեն ամէն օր.

ոչխարի պէս սպանդանոց կը տանին»:

Բաց այս բոլորէն շա՛տ աւելի յաղթական դուրս կու գանք շնորհիւ անոր՝ որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած եմ, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ ռեւէ գորութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայենական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ սխտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):



ԱՌԱՄ

**ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՄԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԳԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ
ՇՆՈՐՀՔ, ՍԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ
ԵՒ ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԷՆԶ**

ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

**ԹԵՄԱԿԱԼ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՅ, ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ
ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ,
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ, ԳԱԲԱՌԱԿԱՆ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆՅ,
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԾԱՌԱՅԻՅ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ,
ԴԱՍՏԻԱՐԱԿ ՌԵՍՈՒՅՉԱՅ ԵՒ ՄԱՄԼՈՅ ՍՊԱՄԱՒՈՐԱՅ,
ԵՒ ՀԱՄՕՐԷՆ ՀԱԲԱՏԱՅԵԱԼ ՀԱՐԱԶԱՏԱՅ ՄԵՐՈՅ
ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԱԶԳԻ ՈՐ Ի ՍՓԻՒՍ ԱՇԽԱՐՀԻ, ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴՆԻ ՄԻՐՈՅ
ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂԶՈՅՆ Ի ՄԷՆԶ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ:
ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ, ՍԵՐ ՈՐԴԻՈՅՆ ՄԻԱԾՆԻ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՀՈԳԻՈՅՆ
ՍՐԲՈՅ ԵՂԻՅԻՆ ԸՆԴ ԶԵՉ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԵԱՆԴ. ԱՄԷՆ:**

2015 տարին հարիւրամեակն է Հայոց Յեղասպանութեան: Հետեւաբար, իր խորքով ու իմաստով, իր նպատակով ու պատգամով տարբեր թուական մը պէտք է դառնայ 2015 տարին իւրաքանչիւր Հայու ու ողջ Հայութեան կեանքին մէջ:

Հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ իր անջնջելի դրոշմն է ձգած Հայոց Յեղասպանութիւնը: Աշխարհի վրայ չկայ Հայ, որուն արեան հետ չէ թրծուած ու կեանքին հետ չէ շողախոսած Հայոց Յեղասպանութիւնը: Աշխարհի վրայ չկայ Հայ, որուն ընտանիքը ենթարկուած չըլլայ Յեղասպանութեան, տարագրումի, հայրենագրկումի կամ սփիւռքացումի:

Հարիւր տարի յիշեցինք խոնկով ու աղօթքով մեր մէկուկէս միլիոն նահատակները, որոնք զոհ գացին Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ մէջ Հայ ժողովուրդին դէմ Օսմանեան թուրք պետութեան կողմէ ծրագրուած ու գործադրուած Յեղասպանութեան:

Հարիւր տարի յիշեցինք ողբով ու ցասումով մեր մշակութային ու կրօնական դարաւոր արժէքներուն՝ եկեղեցիներուն, վանքերուն, խաչքարերուն, սրբավայրերուն, ձեռագիրներուն ու հոգեմտաւոր անթիւ արժէքներուն քանդումն ու փճացումը նո՛յն յեղասպանին կողմէ:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հարիւր տարի յիշեցինք պոռթկումով ու պահանջատիրական ոգիով մեր ազգապատկան, եկեղեցապատկան ու անհատական բազմահազար կալուածներու բռնազրաւումը ցեղասպանին կողմէ:

Արդարեւ, 1915-ին, Յեղասպանութեան ու տարագրումի հետեւանքով ամայացան հայութեան ստեղծագործ ոգիով շէնցած ու ծաղկած քաղաքներն ու գիւղերը Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ: Որքա՛ն կը պատշաճին Սաղմոսին հետեւեալ բառերը Հայոց Յեղասպանութեան յառաջացուցած մահուան ու քանդումին.- «Ո՛վ Աստուած, հեթանոսները քու ժառանգութեանդ մէջ մտան, քու սուրբ տաճարդ պղծեցին, Երուսաղէմը ակերակներու դարձուցին: Քու ծառաներուդ դիակները երկնքի թռչուններուն կերակուր տուին, քու սուրբերուդ մարմինները՝ երկրի գապաններուն: Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուսաղէմի ջուրջը ու մէկը չկար որ պանոնք թաղէր...» (Սղ 79.1-3):

Յեղասպանին ոճրային նպատակն էր՝ Յեղասպանութեան, տարագրումի ու հայաթափումի ճամբով բնաջնջել Հայ ժողովուրդը ու ջնջել Հայաստանը աշխարհի քարտէսէն...:

Սակայն, իր դարաւոր հայրենի հողերէն արմատախիլ եղած, գաղթական ու որբ դարձած Հայ ժողովուրդի վերապրող զաւակները երբեք չմոռցան իրենց նահատակները, չմոռցան անոնց սրբազան կտակը: Անոնք լսեցին պատգամը Քրիստոսին, թէ՛ «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել» (Մտ 10.28): Այս հաւատքով գօտեպնդուած ու Հայ ժողովուրդի վերածննդեան տեսիլքով հզօրացած, վերակազմակերպեցին իրենց անհատական ու հաւաքական կեանքը. Եկեղեցի ու դպրոց շինեցին, համայնքային կառույցներ հաստատեցին ու կազմակերպութիւններ յառաջացուցին Սփիւռքի տարածքին: Անոնք նաեւ ցեղասպանին ու համայն մարդկութեան յիշեցուցին անպատիժ մնացած Յեղասպանութիւնը իրենց ժողովուրդին եւ՝ արդարութիւն պահանջեցին:

Արդարեւ, անցնող հարիւր տարիներուն, մեր եկեղեցին, Հայ Դատի մարմինները, մեր քաղաքական կազմակերպութիւնները եւ վերջին երկու տասնամեակներուն վերանկախացած մեր հայրենի պետութիւնը, քարոզչական, քաղաքական, յարաբերական եւ այլ միջոցներով ո՛չ միայն յիշեցուցին աշխարհին Հայոց Յեղասպանութիւնը, այլ նաեւ՝ հետեւողական կերպով ու անխոնջ աշխատանքով հետապնդեցին քսաներորդ դարու անպատիժ մնացած Առաջին Յեղասպանութեան ճանաչումը: Այսօր, փաստօրէն մեծ թիւով պետութիւններ, եկեղեցիներ ու կազմակերպութիւններ պաշտօնապէս ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը: Հայերու կարգին օտար մտաւորականներ բազմաթիւ աշխատասիրութիւններ հրատարակած են՝ Հայոց Յեղասպանութեան զանազան ծախքերը ուսումնասիրող ու անոր ճանաչումը պահանջող:

Արդ, մեր ժողովուրդի զաւակները իրենց կեանքի ամէնէն դժուար պայմաններուն մէջ իսկ հաւատարիմ մնացին իրենց նահատակներու անմեռ կտակին եւ ուխտեցին, դարձեալ Սաղմոսին բառերով՝ «Ո՛վ Երուսաղէմ, եթէ քեզ մոռնամ, թո՛ղ իմ աջ ձեռքս իր պաշտօնը մոռնայ: Թո՛ղ իմ լեզուս իմ քիմքիս փակչի, եթէ քեզ չյիշես...» (Սղ 137.5-6): Հարիւր տարիներ շարունակ մեր ժողովուրդի արի զաւակները յիշեցին ու յիշեցուցին՝ թակելով մարդոց փակ սրտերուն ու մտքերուն դռները եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը դարձնելով իրենց պայքարին կիզակէտը:

Սիրելի՛ ժողովուրդ Հայոց,

Նուիրական նոյն պայքարը անհրաժեշտ է որ շարունակուի համազգային մաշտապով ու վերանորոգ թափով: Ժամանակը հասած է, որ մեր ժողովուրդը իր պահանջատիրութեան նոր ուժականութիւն ու այժմէականութիւն տայ գալն փոխադրելով իրաւական դաշտ՝ միջազգային օրէնքի տուեալներու լոյսին տակ հետապնդելու իր բռնաբարուած իրաւունքները:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [իին] պիտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արինն անդադար կ'աղաղակէ, [րսելով]։ «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց)։

Յեղասպանութեան ու Մարդկային Իրաւանց Հոչակագրերը յստակօրէն կը շեշտեն, որ Յեղասպանութիւնը ոճի՛ր է մարդկութեան դէմ եւ, հետեւաբար, ցեղասպանը, ըլլայ ան անհատ, կազմակերպութիւն թէ պետութիւն, պէտք է ներկայանայ միջազգային արդարութեան ատեանին։ Միջազգային օրէնքը նաեւ կը շեշտէ թէ՛ Յեղասպանութեան ճանաչումը կ'ենթադրէ հատուցում։ Հետեւաբար, Հայոց Յեղասպանութեան ճանաչումը պէտք չէ նկատել վախճանակէտը Հայ ժողովուրդի պահանջատիրութեան։ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ու հատուցումը, որպէս իրարու հետ սերտօրէն ընդելուզուած մէկ ու անբաժանելի ամբողջութիւն, պէտք է դառնայ Հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարին ամուր հիմքը ու յստակ նպատակը։ Կրնայ ըլլալ, որ աշխարհաքաղաքական ներկայ պայմանները նպաստաւոր չըլլան մեր պահանջատիրութեան։ Կրնայ ըլլալ, որ ցեղասպանը իր դիւանագիտական ու տնտեսական ազդու միջոցներով արգելակէ մեր ժողովուրդին կողմէ այս ուղղութեամբ կատարուող ոեւէ փորձ։ Սակայն, հակառակ այս դառն իրականութեան, մեր ժողովուրդը առաւել՛ հաւատքով ու յանձնառութեամբ կոչուած է շարունակելու իր պահանջատիրական երթը։

Հայ ժողովուրդը Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի մէջ միասնական ոգիով ու միակամ ճիգով կը պատրաստուի նշել հարիւրամեակը Յեղասպանութեան։ Սովորական ամեակ մը չէ, պէտք չէ՛ դառնայ, Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը։ Բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութեամբ ու նպատակասլաց մօտեցումով հարկ է արժեւորել այս թուականը մեր ազգի կեանքէն ներս։ 100-ամեակը դարձակէտ մը պէտք է դառնայ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման պայքարին մէջ։ Վեհափառ Հայրապետներու նախագահութեամբ յառաջիկայ Ապրիլ 23, 2015-ին Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունենալիք Հայոց Յեղասպանութեան նահատակներու հաւաքական սրբաղասումը վստահաբար կարելորդ է պէ՛տք մը պիտի դառնայ 100-ամեակի ծիրէն ներս։

Հարկ է նաեւ նայիլ 100-ամեակէն անդին...։ Յարափոփոխ աշխարհի պայմանները ու առաջնահերթութիւնները յաճախ կը պահանջեն մօտեցումներու, գործելաձեւերու ու շեշտաւորումներու վերատեսութիւն՝ որպէսզի Հայ Դատին հետապնդման աշխատանքները դառնան համահունչ մեզ չըջապատող իրականութիւններուն։ Հարկ է ըլլալ արթուն ու միշտ միակամ։ Հարկ է նաեւ ճի՛շդ կարգալ «ժամանակի նշանները»...։

Հայ Դատը իւրաքանչիւր Հայուն ու ամբողջ Հայութեան դատն է, մեր նահատակներուն դատն է, մեր ապագայ սերունդներուն դատն է։ Արդ, իւրաքանչիւր Հայ կոչուած է իր ներդրումը կատարելու մեր իրաւունքներու վերատիրացման համահայկական ճիգին։

Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի սեմին, սոյն Հայրապետական Սրբատառ Կոնդակով կոչ կ'ուղղենք,

- մեր թեմերու ն՛ ժողովրդային լայն խաւերու մասնակցութեամբ, կրօնական արարողութիւններու, հրապարակային հանդիսութիւններու եւ այլ ձեռնարկներու ճամբով արժարժ պահելու մեր բիւրաւոր նահատակներու անմեռ յիշատակը ու կենդանի՝ անոնց յաւերժապաստան պատգամը։

- մեր ազգի կեանքէն ներս գործող կապմակերպութիւններու ն՛ հաւաքական ճիգով ու միասնական ոգիով ծրագրելու ու արժեւորելու այս կարելորդ դէպքը մեր կեանքէն ներս։

- մեր դպրոցներու ն՛ Հայ աշակերտի մարդակերտումի ու հայակերտումի աշխատանքին մէջ յատուկ տեղ տալու 100-ամեակի իմաստին ու պատգամին։

- մեր մտաւորականներու ն՛ աշխատասիրութիւններու ու դասախօսութիւններու ճամբով անդրադառնալու Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման հրամայականին։



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

- մեր ժողովուրդի բոլո՛ր պաւակներուն՝ **զործնապէս մասնակից դառնալու ընդհանրապէս Հայ Դատի աշխատանքներուն ու մասնաւորաբար 100-ամեակին առթիւ տեղի ունենալիք ձեռնարկներուն:**

Թող մեր մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակը միշտ մնայ վառ ու անոնց կտակը՝ միշտ հնչեղ մեր անհատական թէ համայնական կեանքէն ներս:

Քրիստոնէական հաւատքով վերանորոգուած ու մեր նահատակներուն պատգամով հզորացած քալենք յառաջ՝ դէպի մեր ժողովուրդի պայծառ ապագան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ**

Տոլաւ կոնդակս ի Կաթողիկոսարանիս
 Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
 Որ յԱնթիլիաս, Լիբանան
 Ի 28-ն Դեկտեմբերի, 2014 թուին Քրիստոսի, եւ
 Ի թուին Հայոց ՌՆԿԴ.
 Ընդ համարաւ Վ/ՅԿԱ





Չմայլեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղենն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Pontifical Encyclical of His Holiness Aram I on the 100th Anniversary of the Armenian Genocide



The year 2015 is the 100th anniversary of the Armenian Genocide. Therefore, the year 2015 must become a different year in its depth and meaning with its goal and message for each and every Armenian.

The Armenian Genocide has left an indelible imprint on the collective memory of the Armenian people. There is no Armenian in the world whose blood has not been forged, or whose life has not been engulfed by the Armenian Genocide. There is no Armenian on earth whose family has not experienced genocide, exile, homelessness, or dispersion.

For one hundred years we remembered with incense and prayers our million and a half martyrs, who were sacrificed in Western Armenia and Cilicia during the genocide planned and executed by the Turkish Ottoman Empire.

For one hundred years we remembered with lament and anger the destruction and ruins of our centuries - old cultural and religious sacred treasures - churches, monasteries, cross-stones, sacred sites, manuscripts, and innumerable spiritual intellectuals by the hand of the same genocidal perpetrator.

We remembered for one hundred years with eruptions and demands for the many thousands of national, religious, and individual properties that were confiscated during the genocide.

Truly, following the 1915 genocide and exile the beautified and flourishing cities and villages produced by the creative Armenian spirit in Western Armenia and Cilicia became a wasteland. How appropriate are the following words of the psalmist for the death and destruction of the Armenian genocide: “O God, the nations have come into your inheritance; they have defiled your holy temple;



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

they have laid Jerusalem in ruins. They have given the bodies of your servants to the birds of the air for food, the flesh of your faithful to the wild animals of the earth. They have poured out their blood like water all around Jerusalem, and there was no one to bury them.” (Psalm 79:1-3).

The criminal intent of the genocidal perpetrator was genocide, exile, and the destruction of the Armenian people, and with the dispersion to erase the Armenian people from the world map....

Thereafter, the orphaned Armenian people - the children of the survivors - uprooted from their ancestral land never forgot the martyrs; did not forget their sacred legacy. They heard Christ's commandment, “Do not fear those who kill the body but cannot kill the soul” (Matthew 10:28). Girded with this faith and strengthened by the vision of the rebirth of the Armenian people, they re-organized their individual and collective life. They built churches and schools, established community institutions and organizations throughout the Diaspora. They also reminded the perpetrator and all humanity of the unpunished genocide and demanded justice for their people.

Truly, during the last one hundred years, our Church, our Armenian Cause, organizations, and for the past two decades our re-established Armenian Republic, through advocacy, politics, relationships, and other means not only reminded the world about the Armenian genocide, but also continuously and tirelessly pursued recognition of the 20th century's first genocide that remains unpunished. In fact, today there are a large number of countries, churches, and organizations that have officially recognized the Armenian genocide. Along with Armenians, many non-Armenian scholars have published many works studying the many facets of the Armenian genocide and advocating its recognition.

The children of our people remained faithful, even during their most difficult times, to the legacy of the martyrs and made an oath, again in the words of the psalmist, “If I forget you, O Jerusalem, let my right hand wither! Let my tongue cling to the roof of my mouth if I do not remember you” (Psalm 137:5-6). For one hundred continuous years our people's brave children remembered and reminded others by knocking on the door of people's closed hearts and minds and making the recognition of the genocide the center of their struggle.

Dear Armenian People,

It is necessary to continue that same sacred struggle with pan-Armenian measures and renewed effort. The time has come for our people to give our demands new impetus and contemporary by bringing it into the judicial realm and in the light of international law pursue their violated rights.

Genocide and human rights declarations clearly state that genocide is a crime against humanity and therefore the criminal, be it an individual, an organizations, or a government, must come before the international court of justice. International law also emphasizes that recognition of genocide means reparation. Therefore, the recognition of the Armenian genocide must not be considered to be the goal of the Armenian people's demands. Recognition and reparation must be considered together, closely connected as one and indivisible entity and must become the strong foundation and clear goal of the Armenian people's struggle. It is possible that the current geopolitical conditions are not favorable for our demands. Perhaps, the genocidal perpetrator, with its diplomatic and economic effective means will hinder any attempts by our people toward this direction. However, in spite of this harsh reality our people are summoned to continue their demands with even greater faith and commitment.

The Armenian people in Armenia, Artsakh, and the Diaspora, are preparing to commemorate the centennial of the genocide with unified spirit and unified effort. This 100th anniversary is not, nor should it become, an ordinary anniversary. It is our duty to make this date a worthy event in our nation's life with a high level of zeal and purpose. The 100th anniversary must become a turning point in our people's struggle to regain our just rights.



Չմայլեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ սխտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

The collective sanctification of the martyrs that will take place on April 23, 2015, in Holy Etchmiadzin under the presidency of the Catholicos, will most certainly be an important event in the 100th anniversary sphere.

It is also necessary to look beyond the 100th anniversary.... The ever-changing world conditions and priorities often need re-examination of approaches, way of acting, and emphasis so that the effort in the pursuit of the Armenian Cause becomes compatible with the reality that surrounds us. It is a duty for us to be alert and always united in our purpose. It is also necessary to properly read “the signs of the times.”

The Armenian Cause is the cause of each Armenian and all Armenians. It is our martyrs’ cause, the cause of our future generations. So every Armenian is called upon to contribute in our pan-Armenian efforts to regain our rights.

On the threshold of the 100th anniversary of the genocide, with this Pontifical Holy Encyclical, we call upon:

- Our Prelacies, for the extensive participation of our people at religious services, public meetings, and other events to keep the memory of our martyrs and to keep alive their eternal message.
- Our organizations working within the life of our nation, to make collective efforts and with a unified spirit organize and evaluate this important event in our lifetime.
- Our educational institutions, to be attentive to the formation of the students in human and Armenian values and give special attention to the 100th anniversary in our schools, teaching our students about the meaning and message of this anniversary.
- Our intellectuals, through their research and lectures, to focus on the imperative of recognition of the genocide and the demand for reparations.
- To all Armenians, to be full-hearted participants in the efforts on behalf of the Armenian Cause in general, and for the 100th anniversary events in particular.

May the memory of our one-and-one-half million martyrs always remain alive, and their legacy always resonate in our individual and collective lives.

Let us walk forward toward our bright future, renewed with our Christian faith and strengthened by our martyrs’ message.

May you live forever in the Lord, be strengthened with the grace of the Holy Spirit and be forever blessed by us. Amen.

ԱՐԱՄ Դ
CATHOLICOS
OF THE GREAT HOUSE OF CILICIA

*Encyclical delivered at the Catholicosate of Cilicia,
in Antelias, Lebanon
December 28, 2014,
In the year of our Lord.*





Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իհն եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [իհն] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

**ԱՌԱՋԱՌՈՒԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՆ
ՆՈՐ ՏԱՐՈՒԿԱՆ ԱՌԻՅՈՎ**



ՔՐԻՍՏՈՍՈՎ ՆՈՐՈԳՈՒԻԻԼ

«ՈՆԵԷ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ»:

(Բ.Կր 5.17)



Նոր Տարուան այս գեղեցիկ օրերուն, երբ ամէն կողմ խինդ ու ծիծաղկուն ժպիտներ կան: Երբ Կաղանդի ծառերուն շողշողուն լոյսերն ու սիրուն զարդերը հոգեկան ցնծութիւն կ'առթեն մեր սրտերուն: Երբ Կաղանդ Պապան իր փոխանցած նուէրներով մեր մանուկներուն երազային աշխարհին թուիչք կու տայ: Երբ ե՛ւ մեծերը, ե՛ւ փոքրերը, հին տարուան հետ, չարութիւնները մոռնալու փափաքով զիրար կ'ողջունեն, ինչո՞ւ չուրախանալ, ուրախալի բազմաթիւ այս առիթներուն համար:

Բայց միւս կողմէ ալ, ճշմարիտ է, որ այսօրուան աշխարհին մէջ չարութիւնները անպակաս են: Մարդիկ ամէն օր զիրար կը նեղեն, կը կողոպտեն, կը հալածեն, կը սպաննեն: Չարին ձեռքին գործիք դարձած, անմարդկային արարքներու գործադրմամբ՝ կը հեռանան Աստուծմէ:

Այս երկու՝ ուրախութեան եւ տառապանքի աշխարհներուն մէջ մնացած, որպէս քրիստոնեաներ, կը մտածենք. ի՞նչ ընենք:

Ու կը մտածենք: Ո՞վ է յանցաւորը: Ուրախացո՞ղը, թէ՛ տխրողը:

Պէ՞տք է ուրախանալ, երբ աշխարհը արիւն կու լայ: Պէ՞տք է տխրիլ, երբ կարելի է ուրախանալ:

Կը հաւատա՛նք, որ Քրիստոնեային չէ վիճակուած դատելն ու դատապարտելը: Անոր համար ալ, որպէս Գանատայի այս խաղաղ երկինքին տակ ապրող Քրիստոնեաներ, Նոր Տարուան այս ժամանակաշրջանին պէտք է մենք զմեզ վերակազմակերպենք ու յիշենք Առաքեալին խօսքը, որ կ'ըսէ. «ՈՆԵԷ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ էր նախապէս, որովհետեւ ամբողջութեամբ նորոգուեցաւ»:

Նոր Տարուան առիթով նորոգուելն է կարեւորը, հինին փորձառութեամբ հարստացած եւ գալիքին՝ վառ յոյսերով նայելու քաջութեամբ սպառազինուած: Անոր համար ալ, ուրախ պէտք է ըլլանք մեր նուաճումներուն ու յաջողութեանց համար ու մտահոգ մեր միւս կէսով, որ այս օրերուն զրկուածութեան մէջ է: Մտահոգ, ո՛չ թէ պարտուողական հոգիով, այլ՝ ամբողջութեամբ նորոգուած տեսներու ակնկալութեամբ, յոյսով ու մանաւանդ հաւատքով:



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, ասրսփեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Նոր Տարին Քրիստոսի միանալու եւ Անոր հետ ըլլալու լաւագոյն ժամանակն է: Որովհետեւ Առաքեալը մեզի կը վստահեցնէ, որ եթէ մենք միանանք Քրիստոսի, պիտի նորոգուինք, եւ ամբողջութեամբ պիտի նորոգուինք:

Եթէ նորոգուինք, նո՛ր պիտի դառնանք, նո՛ր վիճակ պիտի ստանանք: Ու մեզի պիտի տրուի Մովսէս Մարգարէին տրուած գաւազանին նման ծաղկեալ գաւազան մը, որով մեր կեանքի բոլոր փակուած եւ այնպիսի ծովերը պիտի հանդարտին ու բացուին:

Եթէ նորոգուինք, պիտի վերափոխուինք: Որովհետեւ մեզի պիտի տրուի Յակոբին գործածած գաւազանին նման գաւազան մը, որով պիտի կարենանք աւելի առողջ ու զօրաւոր սերունդներ յառաջ բերել:

Եթէ նորոգուինք, նորով՝ վայելչապէս պիտի զարդարուինք: Որովհետեւ մեր կեանքը պիտի ծաղկի Ահարոնի գաւազանին նման, որ ծաղկեցաւ որպէս նշան Աստուծոյ օրհնութեան:

Եթէ նորոգուինք, վերստին պիտի կանգնինք ու շարունակենք մեր յաղթական երթը, դէպի լուսաւոր ապագայ, որովհետեւ մեզի պիտի տրուի Յովնաթանին ունեցած գաւազանին նման ցուպ մը, որով պիտի ճաշակենք մեր երթին քաղցրահամ մեղրախորիսխը:

Եթէ նորոգուինք, պիտի բարեփոխուինք, նոր կերպ պիտի ստանանք, եւ որպէս յարուցեալ ժողովուրդ, մեր օրինակելիութեամբ գոյատեւելու ներշնչում պիտի պարգեւենք բոլոր իրաւագրկուածներուն: Որովհետեւ մեզի պիտի տրուի Տիրոջ ցուպն ու գաւազանը, որպէսզի բոլոր ազգերը մխիթարենք:

Նոր Տարին նորոգուելու լաւագոյն ժամանակն է:

Անոր համար ալ Առաքեալը նորոգուելու միակ ճանապարհ որպէս, ցոյց կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսը, որուն միանալով կրնանք նորոգուիլ՝ նոր արարած դառնալ: Իսկ թէ ինչպէ՞ս կրնանք Յիսուս Քրիստոսով նորոգուիլ, ահա պատասխանը Մարգարէին. «Տիրոջ յուսացողները իրենց ուժը պիտի վերանորոգեն. անոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն, պիտի վապեն ու չյոգնին, պիտի քալեն ու չպարտասին» (Ես 40. 31):

* * *

Փա՛ւք Աստուծոյ: Այս Նոր Տարիին ալ պէտք է ուրախանանք, որովհետեւ 2000 տարի, Աստուած մեր կողմն էր, Իր Որդին իսկ չինայեց, անոր համար ալ, ո՛չ ոք կրցաւ հակառակիլ մեզի: Ո՛չ ոք կրցաւ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, ո՛չ նեղութիւնը, ո՛չ անձկութիւնը, ո՛չ հալածանքը, ո՛չ սովը, ո՛չ մերկութիւնը, ո՛չ վտանգը եւ ո՛չ ալ սուրբ:

Փա՛ւք Աստուծոյ: Այս Նոր Տարիին ալ պէտք է ուրախանանք, որովհետեւ Աշխարհի պատմութեան մեծագոյն ողբերգութենէն՝ Հայոց Յեղասպանութենէն 100 տարիներ ետք, մենք ազգովին, որպէս հաւատարիմ գաւակ երկիրքի Թագաւորին, շարունակեցինք մեր աստուածապաշտութիւնը՝ հաւատքով եւ յոյսով, ու կրցանք մեր ուժերը վերագտնել, արծիւներու նման դէպի վեր ճախրել, վազել ու չյոգնիլ, քալել ու չպարտասուիլ:

Փա՛ւք Աստուծոյ: Այս Նոր Տարիին ալ պէտք է ուրախանանք, որովհետեւ ինչպէս անցնող դարերուն, անցնող 100-ամեակին ալ յաղթական դուրս եկանք շնորհիւ Անոր, որ մեզ սիրեց: Որովհետեւ՝ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ ոեւէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրցան մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ (Հմմտ Հռ 8.31-39):

Փա՛ւք Աստուծոյ: Այս Նոր Տարիին ալ պէտք է ուրախանանք, որովհետեւ ազգովին պիտի ունենանք արուստեան բազմաթիւ գործեր եւ յաջողութիւններ, որոնք ազգային հաւաքական մեր երթի ճանապարհին համար պիտի ըլլան յուսալից ապագայի մը կերտման հզօր իրագործում:



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] պիտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ներ: Պիտի շարունակենք մեր Հայրենիքին ամբողջական ձեռքբերման համար թափուած բոլոր ճիգերը եւ Սփիւռքեան մեր իրականութեան առաւել կենսունակութեան համար ճիգ պիտի չխնայենք:

Փա՛ւք Աստուծոյ: Այս Նոր Տարիին ալ պէտք է ուրախանանք, որովհետեւ մեր Հայրենիքին հանդէպ ունեցած նախանձախնդրութեամբ, Համահայկական Հիմնադրամին մեր ամբողջական մասնակցութեամբ, Սուրիահայութեան օժանդակելու մեր պատրաստակամութեամբ, պիտի կարենանք կանգնել եւ Աստուծոյ գործակից դառնալ, որովհետեւ՝ «Աստուած բարիին համար գործակից կ'ըլլայ անոնց՝ որոնք կը սիրեն պինք եւ իր ծրագրին համաձայն իրեն կանչուած են» (Հռ 3.8):

Փա՛ւք Աստուծոյ: Այս Նոր Տարիին ալ պէտք է ուրախանանք, որովհետեւ ազգովին, պիտի կարենանք ու պէտք է օժանդակենք Մոնթրէալի Հայ Կեդրոնի եւ Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի բարեգարդման ու վերածաղկման աշխատանքներուն: Հաւաքական ճիգերով պիտի օժանդակենք Թորոնթոյի՝ Հ.Օ.Մ.-ի Ամէնօրեայ Վարժարանի պարտքերու շիջեցման, որպէսզի նոր նախաձեռնութիւններով համայնքը աճի ու բեղմնաւորուի: Տակաւին, մեր բոլորի ճիգերուն եւ նուիրուածութեամբ, Լաւալի մէջ պիտի կառուցենք Աստուծոյ Սուրբ Անուան համար նահատակուած՝ մէկուկէս եւ աւելի միլիոն մեր նահատակներու նուիրուած Աստուծոյ Սուրբ Տունը՝ Եկեղեցին:

Այս բոլորը պիտի կատարենք ուրախութեամբ եւ առանց վախճալու, որովհետեւ կը հաւատանք, որ մեր օգնականը մեր հայրերուն Աստուածն է, մեր յոյսը Տէր Աստուած Ինք է՝ «Ան՝ որ Արարիչն է երկինքին, երկրին, ծովուն, եւ անոնց մէջ գտնուող բոլոր արարածներուն» (Սղ 146[145]. 6):

Կը հաւատանք, որ Ան՝ «Կը պաշտպանէ զրկուածներուն դատը, կերակուր կու տայ անօթիներուն:

- Տէ՛ր ապատ կ'արձակէ բանտարկեալները,
- Տէ՛ր կը բանայ կոյրերուն աչքերը,
- Տէ՛ր ոտքի կը կանգնէ գլորածները.
- Տէ՛ր կը սիրէ արդարները.

Տէ՛ր կը պահէ պանդուխտները, տէր կը կանգնի որբին ու այրիին, բայց կորուստի կը մատնէ ամբարիշտները:

Տէ՛ր պիտի թագաւորէ յաւիտեան» (Սղ 146[145]. 7-10):

* * *

Հայոց Ցեղասպանութեան 100-Ամեակին գուգադիպող այս Նոր Տարուան շեմին, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն՝ Գանատայի ամբողջ տարածքին, որպէսզի, միասնաբար, այս տարին նուիրագործենք նուաճումներով, որպէս նշան մեր ազգային 100-Ամեայ յարութեան:

Երախտարժան մեր տարեց սերունդին կը յիշեցնենք, որ ձեր մշտական աղօթքներուն փափաքով կ'ապրինք: Ձեր զաւակներն ու թոռները մշտական ձեր աղօթասացութեան կարիքը ունին: Արդարեւ, Ցեղասպանութեան 100-Ամեակի այս հանգրուանին, կ'ակնկալենք, որ ձեր օրինակելիութեամբ՝ գեղեցկացնէք մեր կեանքը, միշտ յաւիտենականութեան փափաքով:

Ուժաւոր եւ ուժատու մեր երիտասարդ սերունդին կը յիշեցնենք, որ Ազգը եւ Սուրբ Եկեղեցին ձեզի՛ պէտք ունի, եկէ՛ք, զինուորագրուեցէ՛ք, որպէսզի միասին մղենք մեր ինքնութիւնն ու արժանապատուութիւնը պահպանելու մղուած պատերազմը: Վստահ եղէք, որ մենք պիտի շահինք. որովհետեւ՝ «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռ 8.31):



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [իին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]։ «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց)։

Հեռու մի՛ մնաք։ Դրամ ունեցողը թող դրամով օգնէ։ Ձեռք ունեցողը՝ ձեռքով։ Հանճարը՝ իր գիտութեամբ։

Մեր երիտասարդ մայրերուն ու հայրերուն կը յիշեցնենք, որ ձեր գաւակները մեծցնէք հայեցի դաստիարակութեամբ եւ Քրիստոնէական հաւատքով, որպէսզի օր մը գանոնք չկորսընցնէք։ Անոնք Աստուծոյ եւ մեր ազգին կը պատկանին, դուք միա՛յն միջոցներ էք եւ Աստուծո՞մէ՛՝ ձեր գաւակներուն խնամատարութեան կանչուածներ։ Օր մը անպայման Աստուծոյ պատասխան պիտի տաք ձեր կատարած տնտեսութեան համար։ Մեր Յեղասպանութեան 100-Ամեայ այս հանգրուանը, թող բոլորիդ ալ նոր սկիզբ մը ըլլայ, որպէսզի առաւել չափով սիրէք ձեր մայրենի լեզուն ու ձեր գաւակները մեր Սուրբ նահատակներու արեամբ սրբէք։

Ի վերջոյ, մեր այս օրերու բոլոր Հոգեւոր եղբայրներուն եւ ազգի ղեկավարներուն կը յիշեցնենք, որ ձեզի տրուած աւանդը պահէք սրբութեամբ եւ երկիրդածութեամբ։ Երանի՛՜ ձեզի, որ կոչուած էք մեր Ազգն ու Եկեղեցին ղեկավարելու։ Կ՛աղօթեմ, որ ձեր ծառայութիւնը մեր կեանքի ցերեկներուն, ամպի սիւնի նման առաջնորդէ մեզ, իսկ մեր կեանքի գիշերներուն, ձեր ծառայութիւնը ըլլայ կրակէ սիւն, լուսաւորելու մեր քայլերը (Հմմտ. Ել 13.21-22)։

* * *

Հայոց Յեղասպանութեան 100-Ամեակին գուգադիպող այս Նոր Տարուան շեմին, որդիական ակնածանօք, կ'ուզեմ շնորհաւորել Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Սրբազնագոյն Գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. Վեհափառ Կաթողիկոսի Նոր Տարին։ Ծառայաբար կ'աղօթեմ, որ Աստուած կատարեալ առողջութիւն պարգեւէ իրաւագրկուած մեր ժողովուրդի Հայրապետին, որպէսզի Իր արծուաթուիչ սլացքով, իմաստութեամբ եւ օրհնութեամբ, ազգովին բարձրանանք ու հասնինք մեր բոլոր նպատակներուն, որոնց գլխաւորագոյնը Երկինքի Թագաւորութիւնն է եւ բռնագրաւուած մեր հողերու վերադարձը։ Այս առիթով, յանուն մեր խնամքին յանձնուած Գանատահայութեան, որդիաբար մատչիմք ի Սուրբ Աջոյն Կիլիկիոյ Սրբազնասուրբ Հայրապետին, միաժամանակ հայցելով Անոր Հայրապետական Օրհնութիւնը։

Որդիական սիրով եւ խոնարհաբար, կը շնորհաւորեմ Գանատայի Հայոց Թեմի Անդրանիկ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի եւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Տեսուչ՝ Գերշ. Տ. Սուրէն Սրբ. Արք. Գաթարոյեանի Նոր Տարին։ Խոնարհաբար կ'աղօթեմ, որ Աստուած Սրբազան Հայրերուն եւ Միաբանակից Աւագ եղբայրներու շնորհէ երկար կեանք հանդերձ առողջութեամբ։

Եղբայրական սիրով կը շնորհաւորեմ Գանատահայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Արգար Սրբ. Եպս. Յովակիմեանը, հանդերձ հոգեւորականաց եւ ժողովականաց, մաղթելով, որ Աստուած առողջութիւն, բեղուն եւ ծաղկեալ առաջնորդութիւն պարգեւէ Սրբազան Հօր։

Նոր Տարուան հրաշագեղ այս օրերուն, հայրական սիրով կը շնորհաւորեմ Գանատայի Հայոց Թեմի մեր բոլոր նուիրեալ հովիւներն ու ծուխերը։-

Հայրական սիրով կը շնորհաւորեմ՝ Մոնթրէպլի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ գաւակները, Հովիւ՝ Արժ. Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեանը, Արժ. Տ. Արմէն Աւ. Քհնյ. Իշխանեանը, Հոգաբարձութիւնն ու բոլոր նուիրեալները։

Աղօթասացութեամբ կը շնորհաւորեմ՝ Լաւալի Ս. Գէորգ Եկեղեցւոյ գաւակները, Հովիւ՝ Արժ. Տ. Գաբրիէլ Քհնյ. Գամայեանը, Հոգաբարձութիւնն ու բոլոր նուիրեալները։

Օրհներգութեամբ կը շնորհաւորեմ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ գաւակները, Հովիւ՝ Հոգշ. Տ. Ստեփանոս Վրդ. Փաշայեանը ու Ծխատէր՝ Արժ. Տ. Կոմիտաս Աւ. Քհնյ. Փանոսեանը, Հոգաբարձութիւնն ու բոլոր նուիրեալները։



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արինն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիննին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Սաղմոսերգութեամբ կը շնորհաւորեմ Գէմպրիճի Ս. Նշան Եկեղեցւոյ գաւակները, Հովիւ՝ Հոգչ. Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեանը, Հոգաբարձութիւնն ու բոլոր նուիրեալները:

Երկնահայց բարեմաղթութիւններով կը շնորհաւորեմ Վանգուվրրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ գաւակները, Հովիւ՝ Հոգչ. Տ. Հրանդ Աբղ. Թահանեանը, Հոգաբարձութիւնն ու բոլոր նուիրեալները:

Հրեշտակներուն հետ երգակցութեամբ, կը շնորհաւորեմ Քէպէքի, ՀայիՓաքսի, Սէնթ Գաթրինգի Ս. Պօղոս եւ Ուինիփէկի Ս. Վարդան Համայնքներու գաւակները, Հոգաբարձութիւններն ու բոլոր նուիրեալները:

Նոր Տարուան հրաշաբեր օրերուն սպասումով, կը շնորհաւորեմ Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան Լիազօր եւ Արտակարգ Դեսպան՝ Տիար Արմէն Եկանեանն ու քաղցրաբարոյ Տիկին Մարիան՝ հանդերձ գաւակօք, անոնց մաղթելով հայրենանուէր գործունէութիւն, առողջ եւ պտղաբեր կեանք:

Հայրական սիրով կը շնորհաւորեմ Յեղասպանութեան 100-Ամեայ ճանապարհին իրենց զոհողութեամբ դրսեւորուած եւ հրացած Հայ Դատի առաքելութեան բոլոր նուիրեալներն ու հաւատաւոր ազգայինները, մաղթելով, որ աննահանջ պայքարի ոգին մնայ միշտ բոլոր, Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի տեսլականով:

Նոր Տարուան սեմին, յաջողութիւններու ակնկալութեամբ եւ հաւատքով կը շնորհաւորենք Մոնթրէպի Ս. Յակոբի «Բաստրմաճեան» Երկրորդական եւ «Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան» Նախակրթարանները, «Դրօ եւ Աննա Փիլիկեան» Շաբաթօրեայ Վարժարանը, «Արամ եւ Պերճուհի Մարգարեան» Մանկապարտէզն ու Հ.Օ.Մ-ի Սուրբ Յակոբ Մանկամսուրը: Թորոնթոյի Հ.Օ.Մ-ի Երկրորդական, «Գոլուեան» Նախակրթարանն ու «Պապայեան» Մանկապարտէզը: Հ.Օ.Մ-ի Գէմպրիճի, Վանգուվրրի, Համիլթընի եւ Սէնթ Գաթրինգի Շաբաթօրեայ Վարժարանները, իրենց տնօրէններով, ուսուցչակազմերով, բարերարներով եւ ծնողներով:

Խոնարհելով Հ.Օ.Մ-ի Աստուածապարգեւ՝ աւելի քան 100-Ամեայ ծառայութեանց առջեւ, հայրական սիրով կը շնորհաւորեմ Գանատայի Շրջանային Վարչութիւնն ու բոլոր ճառագայթեալ մասնաճիւղերը, բեղմնաւոր ծառայութեան փափաքով:

Նոր Տարուան լուսապարգեւ այս օրերուն, Հայրաբար կը շնորհաւորեմ մեր Կեդրոններու Միութիւններն ու Կազմակերպութիւնները, չրջանային եւ տեղական վարչութիւններով հանդերձ՝

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան անխոնջ նուիրեալները, Հ.Մ.Ը.Մ-ի հպարտութիւն արթող տարագաւորներն ու մարզիկները,

Հայ Երէցներու հաւատաստունդ ընկերակցութիւնները,

Հայրենասիրութեամբ լուսավառ «Արմէն Գարօ» Ուսանողական, Գանատայի Երիտասարդական եւ Պատանեկան Միութիւնները,

Բոլորին մաղթելով բարիով աւարտին հասցնել իրենց բարի մտածումներն ու աշխատանքները:

Երախտագիտութեան զգացումներով կը շնորհաւորենք «Հորիզոն» Շաբաթաթերթի Խրմբազիրն ու աշխատակազմը, որոնք մշտապէս Ազգային Առաջնորդարանիս գործունէութեան արձագանգողներն են:

Կը շնորհաւորենք «Թորոնթոհայ» Ամսաթերթը, «Նոր Հայ Հորիզոն» եւ «Հայ Հորիզոն» պատկերասփիւռի յայտագիրները: «Կիլիկիոյ Չայն» ն ու «Հայոց Աշխարհ» ռատիօթամբերը, բոլորին մաղթելով յարաճուն վերելք:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան ինն եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Ի վերջոյ, կը շնորհաւորեմ ձեզ բոլորդ սիրելի եւ պաշտելի զաւակներ Հայ Ժողովուրդի: Թող Նոր Տարուան այս օրերուն բոլորիդ սրտերը լուսաւորուին Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Երկնային Լոյսով եւ Փրկարար Շնորհքով, որպէսզի չարը վերնայ, բարին մնայ, խաղաղութիւն հաստատուի ամբողջ աշխարհի վրայ, մարդոց միջեւ սէրն ու խնդութիւնը հաստատուի, մեր բոլոր հիւանդները Աստուծով բժշկուին, ննջեցեալները երկնային փառաւորումին արժանանան, իսկ մենք, միասնաբար քայլեք մեր նահատակներու ճամբով, հասնելու համար գերագոյն ճշմարտութեան եւ երկնային իմաստութեան ի փառս Աստուծոյ, ի պանծացումն Նահատակ մեր նախահարց եւ յաւերժացումն Ազգիս Հայոց:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Բարի Կադանդ:

Ալէլուիա, Ալէլուիա, Ալէլուիա...:

Առօթաբար՝
ՄԵՂՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ
Առաջտորդ ԳԱՆԱՏԱՅԻ ՀՂՈՅ ԹԵՄԻՆ

ԿԱՂԱՆԴ ԵՒ ՏԱՐԵՍՈՒՏ

2015 թուին Քրիստոսի

Առ ի գիտութիւն

Ո՛Վ ԷՐ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Իր պատմական անուևով ծանօթ Կաղանդ Պապան Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Սուրբ Նիկողայոսն է: Նիկողայոս որդին էր Եպիփան եւ Նունէ անուևով բարեպաշտ ընտանիքի մը: Իր օրերուն մասնակցած է Նիկիոյ Առաջին Տիեզերական ժողովին: Մանուկներուն հանդէպ ունեցած իր սիրոյն եւ գուրգուրանքին որպէս արդիւնք, Սուրբ Նիկողայոս ամէն տարի, Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն, նուէրներով կ'ուրախացնէր մանուկները: Ինք անձամբ կը շրջէր եւ մանուկներուն քնացած պահուն անոնց հիւսուած գուլպաներուն մէջ կը գետեղէր իր աշակերտներուն կողմէ շինուած փայտէ նուէրները:

Ըստ պատմութեան, Սուրբ Նիկողայոս հրաշքներ կատարած է փոթորիկէն փրկելով նաւաստիներ. ան սովէն փրկած է իր քաղաքին բնակիչները... եւ յատկապէս՝ վերակենդանացուցած է 3 պատիկներ:

Իր մահէն ետք, իր աշակերտները շարունակած են անոր նուիրական աշխատանքը: Այցելած են աղքատներուն, որբեւայրիներուն, տնանկներուն եւ փորձած են ուրախացնել բոլոր անոնց, որոնք գրկուած են Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան ուրախութենէն:

Այժմ, Ս. Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետի Աջը կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ «ԿԻԼԻԿԻԱ» թանգարանին մէջ: Ամէն տարի Ս. Գրիգոր Լուսաւորչի «Մուտն ի վիրապ»ի տօնին, երբ Մեծահանդէս Թափօր կը կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով եւ այլ Սրբազան Մասունքներով, Ս. Նիկողայոսի Աջն ալ որպէս նուիրական սրբութիւն, Ս. Սեղբեստրոս Հայրապետի Աջին հետ հաւատացեալներու ջերմեռանդութեան կ'արժանանայ առ ի մխիթարանք:



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իհին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [իհին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Առաջնորդական Պատգամ

Ս. ԾԱՆԻԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅՎԱՅՏՈՒԹԵԱՆ ՏՕՒՆԻ ԱՌԻՅՈՎ



**ՈՒՐԱԽ ԼԵՐ
ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ**

«Ուրախ Լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ»
(ՂԿ 1.28)

Անհամար աղէտներով ցաւած, բազմաթիւ վրտանգներով շրջապատուած, անմարդկային պատերազմներու թիրախ դարձած, արիւնարբու եւ մահասփիւռ փորձանքներու վկայ դարձած, Մայր հողերէն աքսորուած, տարագիր, պանդուխտ, այլ խօսքով՝ վտարանդի եւ Ցեղասպանութեամբ նահա-

տակուած, բայց դարձեալ կեանքին բացուած մեր ժողովուրդը, անգամ մը եւս կը լսէ երկնառաք Հրեշտակին աւետաւոր ձայնը, որ շուրջ երկու հազար տարիներ առաջ, յայտնուելով Գալիլիայի Նազարէթ Քաղաքի Կոյսին, Աստուածային Պատգամ մը պիտի փոխանցէր ըսելով՝ «Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է»:

Աստուածային Պատգամ մը, որ դարեր առաջ ալ, որպէս յաւիտենական ճշմարտութիւն կտակուած էր, որպէսզի մարդիկ գիտնային ու հաւատային, թէ Աստուած Ի՛նք է միակ ապաւէնն ու զօրութիւնը, նեղութեանց մէջ օգնութեան հասնողը: Ան է, որ՝ «Աշխարհի չորս անկիւններուն՝ պատերազմները կը դադրեցնէ, աղեղները կը կոտրէ, նիպակները կը փշրէ, եւ վահանները կրակով կ'այրէ»(Սղ 46^[45].9):

Անոր համար ալ պիտի պատգամէր, ըսելով. «Դադրեցուցէ՛ք ձեր կռիւները, եւ ճանչցե՛ք թէ ե՛ս եմ Աստուածը, ե՛ս է որ կ'իշխեմ ազգերուն, ե՛ս կը տիրեմ աշխարհին»(Սղ 46^[45].10):

Իսկ վկայակոչ Սաղմոսերգուն պիտի ըսէր. «Ամենակալ Տէրը մեզի հետ է. մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է»(Սղ 46^[45].11):

«Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է» պատգամով, Մարիամ մեծագոյն օրինակը պիտի դառնար նոյնինքն մեր Տիրոջ ա՛յն վկայութեան որով պիտի ըսէր. «Ով որ կը սիրէ զիս՝ խօսքերս կը գործադրէ. Հայրս ալ պիտի սիրէ զայն եւ ես ու Հայրս անոր պիտի գանձ եւ անոր հետ բնակինք»(ՅՀ 14.23):

Մարիամ պիտի ուրախանար, որովհետեւ Աստուած իր հետ էր: Մարիամ նուաճած էր Սրբութեան պատիւը: Անոր համար ալ Ի՛նք եղաւ ընտրեա՛լը:

Իրմո՛վ՝ Աստուած պիտի մարդանար:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Իրմո՛վ՝ մարդեղութեամբ՝ աներեւելի Աստուածը պիտի յայտնուէր մարդոց:

Իրմո՛վ՝ մարգարէներու խոստումները պիտի իրագործուէին:

Իրմո՛վ՝ մեր մեղքերուն համար մեծագոյն եւ միակ զոհը պիտի ունենայինք:

Իրմո՛վ՝ Աստուծոյ հետ պիտի հաշտուէինք:

Իրմո՛վ՝ գերագոյն եւ միակ օրինակելին մեզի պիտի յայտնուէր:

Իրմո՛վ՝ Սատանան եւ իր գործերը պիտի կործանուէին:

Իրմո՛վ՝ կոտրած սիրտ ունեցողները պիտի բժշկուէին:

Իրմո՛վ՝ հարստահարուածները պիտի ազատուէին:

Անոր համար ալ Մարիամ, որպէս շնորհընկալ Կոյս պիտի ուրախանար, արեւ պիտի հագւէր, լուսինը ոտքերուն տակ առնէր եւ գլխուն վրայ պիտի կրէր տասներկու աստղերով պսակ մը (Հմմտ Յտ 12.1-2):

Մարիամ՝ որպէս շնորհընկալ Կոյս պիտի ուրախանար, որովհետեւ, պիտի արժանանար աշխարհի մեծագոյն շնորհքին, դառնալով երկինքի Աստուածը իր որովայնին մէջ կրող այն կինը, որուն համար Աստուծոյ Մարդը՝ Եգեկիէլ, պիտի մարգարէանար ըսելով. «Այս դուռը գոց պիտի մնայ. պիտի չբացուի, եւ ո՛չ մէկը անկէ պիտի մտնէ. արդարեւ անկէ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը մտաւ, ուստի գոց պիտի մնայ» (Եգ 44.2):

* * *

Սուրբ Կոյսին ուրախութիւնը սակայն միայն իրը չեղաւ. այլ՝ եղաւ նաեւ բոլոր անոնցը, որոնք առանց տեսնելու, Յիսուս Քրիստոսը ընդունեցին՝ որպէս իրենց Փրկիչ:

Սուրբ Կոյսին նման, երկնային անօրինակ ուրախութիւնը ունեցան, բոլոր ժամանակներու՝ բոլոր Սուրբերն ու աստուածամերձ հոգիները, որոնք Քրիստոսով ապրեցան, Անով զօրացան եւ վկայեցին յանուն երկինքի յաւիտենական եւ ճշմարիտ Աստուծոյն:

Սուրբ Կոյսին նման, ուրախ եղան ու մնացին նաեւ մեր ժողովուրդի գաւակները, որոնք ապրեցան Աստուծոյ ներկայութեամբ եւ յաւիտենական կեանքին փափաքով՝ նահատակուեցան:

Արդարեւ, Քրիստոնէացման եւ յետագայ դարերուն, մեր ժողովուրդը տառապանքը ակընկալեց (ՅՀ 15.19-20) միշտ Աստուծոյ վստահելով (Սղ 3.5-6), անոր համար ալ Տիրոջմով ուրախ ապրեցաւ:

Երկու հազար տարի, մեր ժողովուրդը, տառապանքները ընդունեց որպէս Աստուծմէ շնորհուած խրատ, առանց անարգելու (Եբր 12.5), անոր համար ալ Տիրոջմով ուրախ ապրեցաւ:

Երկու հազար տարի, մեր ժողովուրդը, նայելով այն մեծ փառքին, որ պիտի յայտնուի, գիտցաւ եւ մխիթարուեցաւ, որ իր տառապանքը ոչինչ է այդ գալիք փառքին քով (ՅՀ 16.20-21), անոր համար ալ Տիրոջմով ուրախ ապրեցաւ:

Այսօր ալ, թէեւ վիրաւորուած հոգիով ու մարմնով, սակայն նոյն այդ ուրախութեամբ կ'ապրինք, որովհետեւ կը հաւատանք, որ Աստուած մեզի հետ է:

ՈՒՐԱԽ ԱՊՐԻՆՔ.-

Ուրախութիւնը Աստուծոյ կողմէ մարդուն տրուած մեծագոյն շնորհքներէն մին է, որովհետեւ Աստուածաշնչական ճշմարտութեամբ՝ «Աստուած Իր առջեւ հաճելի եղող մարդուն իմաստութիւն, գիտութիւն եւ ուրախութիւն կու տայ» (Ժդ 2.26):

Այս աշխարհի վրայ ուտելն ալ, խմելն ալ, աշխատանքին բարօրութիւնը վայելելն ալ Աստուծոյ պարգեւներն են: Անոր համար ալ Աստուածային իմաստութիւնը կ'ըսէ. «Լաւ եւ վայելուչ է մարդուն՝ ուտել ու խմել, եւ Աստուծոյ իրեն տուած կեանքին բոլոր օրերուն մէջ՝



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արունն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Արեւին տակ իր կատարած ամբողջ աշխատանքէն բարօրութիւն վայելել, որովհետեւ ասիկա՛ է իր բաժինը: Այն մարդուն՝ որուն Աստուած հարստութիւն ու գոյք կու տայ, եթէ անոր իրաւաստութիւն տայ անկէ ուտելու եւ բաժինը առնելու նաեւ իր աշխատանքէն ուրախանալու, ասիկա Աստուծոյ պարգեւն է» (Ժդ 5.18-19):

Աստուած կ'ուզէ որ ուրախ ապրինք, կեանքը սիրենք, բարի օրեր տեսնենք (Ա.Պտ 3.10): Իր կամքն է, որ մեր գործերուն մէջ յաջողինք, առողջ ըլլանք մարմնով (Գ.ՅԿ 2):

Բայց Աստուծոյ կամքը միայն մեր մարմնաւոր ուրախութիւնը չէ: Մեր ուրախութեան չափանիշը միայն մեր մարմինը չէ, այլ՝ միաժամանակ հոգին: Աստուծոյ կամքն է, որ մենք մեր հոգին մաքրենք, սրբացնենք եւ աստուածաշտուութեամբ ապրինք: Դժբախտաբար, երբեմն մարմնական եւ հոգեկան ցանկութիւնները կը պղծեն մեր էութիւնը. անոր համար ալ, Աստուծոյ կամքն է, որ կատարելապէս մաքրուինք ու սրբուինք, երկիւղածութեամբ ապրելով (Բ.Կր 7.1): Այս պատճառով ալ, Առաքեալը կը յիշեցնէ, թէ ինչպէ՛ս Քրիստոսով՝ օրհնուեցանք երկինքի մէջ ամէն տեսակ օրհնութեամբ: Իրը եղանք որպէս որդի՝ պատկանելիութեամբ, որպէս սուրբ եւ անարատ ժողովուրդ. նոյնիսկ աշխարհի ստեղծագործութենէն առաջ, պարզապէս որովհետեւ այդ էր իր կամքը (Եփ 1.3-4):

Ահա այս պատճառով, մեր ուրախութիւնը պայմանաւորուած է նաեւ Հոգեւոր ուրախութեամբ, որուն կրնանք հասնիլ երբ հեռու ենք չար մտածումներէ եւ նենգութիւններէ, կեղծաւորութենէ ու նախանձէ եւ ամէն տեսակ չարախօսութենէ: Պօղոս Առաքեալ այս իսկ համոզմամբ կը յիշեցնէ մեզի, ըսելով. «Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք» (Ա.Պտ 2.2):

Մարիամ, մաքուր եւ շնորհալի կոյսը երբ կը կանչուի Աստուծոյ հրեշտակին կողմէ, արդէն Սուրբ էր ամբողջ կեանքով, Սուրբ էր ինչպէս Սուրբ էր իր պաշտած Աստուածը (Ա.Պտ 1.15):

Պետրոս Առաքեալ, Ընդհանրական Առաջին Նամակին մէջ հետեւեալը կը պատգամէ իւրաքանչիւր Քրիստոնեայի, որպէս ուրախութեան հասնելու գերագոյն ճանապարհ, ըսելով. «Ի վերջոյ, ամէնքդ ալ իրարու համախոհ եղէք, ուրախակից եւ ցաւակից իրարու, եղբայրասէր, բարեգութ, խոնարհամիտ: Չարին փոխարէն չար մի՛ հատուցանէք, ոչ ալ նախատինքի փոխարէն՝ նախատինք. ընդհակառակը՝ օրհնեցէք. Աստուած ատոր համար կանչեց ձեզ, որպէսզի դուք ալ օրհնութիւն ժառանգէք: Որովհետեւ Սուրբ Գիրքը կ'ըսէ. - «Ով որ կ'ուզէ կեանքը սիրել եւ բարի օրեր տեսնել, թող իր լեզուն պահէ եւ չարութիւն չխօսի, թող իր շրթները փակէ եւ նենգութիւն չխորհի. թող չարէն հեռանայ եւ բարիք գործէ, թող խաղաղութիւն կամենայ ու վայն հետապնդէ: Որովհետեւ Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն եւ ականջները պատրաստ են անոնց աղօթքները լսելու: Բայց Տէրը հակառակ է չարագործներուն» (Ա. Պտ 3.8-12):

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՀԵՏ Է.-

Մաքրամաքուր կոյսը հրեշտակին կողմէ կ'աւետուէր. «Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է»:

Մարիամ պէտք էր ուրախանար, որովհետեւ Աստուած իր հետ էր, իր կողքին, որպէսզի իրականանար մարգարէութիւնը, որ կ'ըսէր. «Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ վայն պիտի կոչեն Էմմանուէլ» (Ես 7.14):

Մարիամէն ծնողը էմմանուէլ պիտի կոչուէր, որ կը նշանակէ Աստուած մեզի հետ:

Աստուած ոչ միայն Մարիամին հետ էր, այլ նաեւ՝ իրմով աշխարհ պիտի գար, որպէսզի մեզի հետ ըլլար:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Բնականաբար, մարդկայնօրէն կրնանք մտածել, որ Աստուած մարդոց հետ չէ՞ր միթէ, որ այս հանգրուանին պիտի ըլլար: Աստուած միշտ ալ մարդուն հետ էր, բայց մարդիկ իրենց մտքին մէջ ըսին, որ Աստուած չկայ, ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան: Հեռացան բարիք գործելէ: Բոլորն ալ խոտորեցան եւ մոլորեցան գիրկը ինկան (Սղ 14 [13]-1-3):

Աստուած էր մարդոց ապաւէնն ու զօրութիւնը, նեղութեանց մէջ շուտով հասնող օգնականը: Աստուած մարդոց տէրն էր, անոնց ապաստանը: Բայց մարդիկ չղաղրեցան կուր ընելէ, գիրար ատելէ, անոր համար ալ ժամանակներու աւարտին՝ «Աստուած ինքն էր, որ Քրիստոսի միջոցաւ աշխարհը հաշտեցուց իրեն հետ, անյիշաչար գտնուելով մարդոց մեղքերուն հանդէպ» (Բ.Կր 5.19):

Մարիամ, Աստուծոյ շնորհալի գաւակը, հաւատա՛ց, որ Աստուած իր հետ է, հանգստացաւ, իր խաղաղութիւնը գտաւ, որովհետեւ իրմէ ծնողն ալ «Աստուած մեզի հետ» պիտի կոչուէր: Անոր համար իր սիրտն ու հոգին Աստուծոյ յանձնեց: Այդպիսով կառուցեց եւ կանգնեցուց Տիրոջ Սրբարանը՝ իր Սուրբ արգանդը խորանի վերածելով, որպէս Տիրոջ ուխտին Տապանակը, Տիրոջ Սուրբ անունին համար կառուցուած բնակարանը (Հմմտ Ա.Մն 22.):

* * *

«Ուրախացի՛ր, շնորհալի՛ կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է»:

Սուրբ Ծննդեան խորախորհուրդ այս օրերուն, երբ մենք՝ ազգովին, ու մանաւանդ Սփիւռքի իրաւագրկուած Հայերս կը պատրաստուինք ոգեկոչելու եւ նշելու Հայոց Յեղասպանութեան՝ Մեծ Եղեռնին զոհ գացած մէկուկէս եւ աւելի միլիոն մեր նահատակներուն յիշատակին 100-Ամեակը՝ անոնց սրբադասմամբ, պիտի ուզէի, որ Մայր եւ մշտապէ՛ս Աստուծոյ հաւատարիմ Հայաստանը ուրախանար, որովհետեւ Աստուած մեզի հետ էր:

Սուրբ Ծննդեան այս հրաշագեղ օրերուն, պիտի ուզէի, որ Մայր Հայաստանին բռնագրրաւուած միւս մասն ալ ուրախանար, որովհետեւ իր քաջ որդիներուն որդիները, իր իրաւունքն ու արդար դատը կը պաշտպանեն ու պիտի շարունակեն յիշել ու պահանջել յաւիտեանէ յաւիտեան:

Սուրբ Ծննդեան այս սրբազնասուրբ օրերուն, պիտի ուզէի, որ Յանկալի Կիլիկիան ուրախութեամբ լսէր Երկինքի Հրեշտակներուն փառաբանութիւնը, որոնք երկու հազար տարիներէ ի վեր կ'աւետեն արդարութեան հաստատումը:

Սուրբ Ծննդեան այս նուիրական օրերուն, պիտի ուզէի, որ մենք բոլո՛րս, կարենայինք տեսնել այն բոլոր նահատակները, որոնք եղեռնագործուեցան Աստուծոյ Խօսքին իրենց հաւատարմութեան եւ տուած վկայութեան համար: Իցի՛ւ թէ՛՝ մենք ալ Աստուծոյ արդարութեան վստահելով կարենայինք ըսել. «Մինչեւ ե՞րբ պիտի սպասես, սուրբ եւ ճշմարիտ Տէր, ե՞րբ պիտի դատես երկրի բնակիչները եւ մեր նահատակներուն արեան վրէժը լուծես անոնցմէ» (Յյտ 6.9-10)

Պիտի ուզէի, որ ազգովին ուրախ ըլլայինք, եւ մեր մեղաւոր ձայնը բարձրացնելով գերագոյն եւ արդար դատաւորին ըսէինք միաձայն.՝

Ո՛վ Տէր, ուրախ ենք, որ մեզի հետ եղար: Որովհետեւ երկու հազար տարի, որպէս քրիստոնեայ ժողովուրդ մշտապէս մնացինք, նուազագոյնը փորձեցինք մնալ անապական, Հայրական ծոցէդ անբաժան Որդիդ մեր որովայնին՝ ազգին մէջ բնակեցնելով:

Ո՛վ Տէր, ուրախ ենք, որ մեզի հետ եղար: Որովհետեւ մեր ժողովուրդի սուրբ մայրերը՝ որպէս Վեհագոյն երկինքի հողեղէն հրեշտակներ, երկինքին ու հրեղէն դասերուն անբովանդակելին, իրենց մաքուր եւ սուրբ որովայններուն մէջ ընդունեցին եւ պահեցին:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Ո՛վ Տէր, ուրախ ենք, որ մեզի հետ եղար: Որովհետեւ մեր ժողովուրդի Սուրբ Հայրապետները, Հովիւներն ու Հովուապետները, երկու հազար տարի, հրեղէն սիւն եւ լոյսի աշտանակ եղան եւ լոյսի Արարիչդ իրենց մէջ կրելով, խաւարեալներս լուսաւորեցին:

Ո՛վ Տէր, ուրախ ենք, որ մեզի հետ եղար: Որովհետեւ երկու հազարամեայ մեր սուրբ եւ բարեպաշտ ազգապետներն ու աստուածասէր իշխանները երկնային հացիդ համար եղան ոսկեայ սափոր, եւ երկինքէն իջած կեանքի մանանան՝ Քեզ, մեզի որպէս կերակուր պարգեւեցին:

Ո՛վ Տէր, ուրախ ենք, որ մեզի հետ եղար: Որովհետեւ մեր ազգին ճգնաւորները, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորները, թեթեւ ամպի նման, իմանալի զեղումով, որպէս կեանքի անձրեւ տեղացին եւ Քու Սուրբ հաւատքիդ գործին արդիւնքը պտղաբերեցին:

Ո՛վ Տէր, ուրախ ենք, որ մեզի հետ եղար: Որովհետեւ այսօր, Քու Սուրբ Անուանդ համար նահատակուած երկու հազարամեայ մեր մարտիրոսներն ու նահատակները, բայց մանաւանդ Աշխարհի առաջին ցեղասպանեալ մեր ժողովուրդի մէկուկէս եւ աւելի միլիոն նահատակները, Սօրդ՝ Սուրբ Աստուածածնին նման, որպէս լոյսի որդի, Վերին Սիոնի որդիներուդ հետ միասին քու Որդիիդ գահին շուրջ համախմբուած երկինքի Հրեշտակներուն հետ միասին կ'երգեն ըսելով. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք քեզ եւ գովեմք քեզ»(Ժամագիրք):

Ուրախ ենք Տէր, մեզի հետ ըլլալուդ համար:

Փա՛ռք քեզի, որ որպէս լոյս ծագեցար, մեղաւոր արարածներս լուսաւորելու:

Այնպէս, ինչպէս քարայրին մէջ ծնար ու Բեթլեհէմը նուիրականացուցիր, այնպէս ալ մնա՛ մեր մէջ, մեզի հետ, որպէսզի նուիրականանանք եւ մէկուկէս ու աւելի միլիոն մեր նահատակներուն հետ միասին սրբաբանենք Սուրբ անունդ՝ այժմ եւ միշտ:

Այնպէս, ինչպէս հովիւներուն յայտնուեցար, մեզի ալ յայտնուիր, որպէսզի մէկուկէս ու աւելի միլիոն մեր նահատակներուն հետ միասին, արժանի ըլլանք զՔեզ դարձեալ տեսնելու, եւ օրհնեցելու ամէնասուրբ անունդ՝ յաւիտեանէ յաւիտեան:

Այնպէս, ինչպէս մոզերէն պաշտուեցար, մենք ալ, նահատակ ցեղի անմահ վկաներու զաւակներս, կ'ուզենք բարձրադաղակ գովերգել ամէնասուրբ անունդ, ըսելով.

Փա՛ռք քեզի, մեր հայրերուն Աստուածը,

Փա՛ռք քեզի, Արդարութեան Արեգակ,

Փա՛ռք քեզի, որ աշխարհին ցնծութիւն ծնար,

Փա՛ռք բարձունքներու մէջ մեծ Աստուծոյդ, որ Ծնար եւ Յայտնութեամբդ տիեզերքը փրկեցիր:

Փա՛ռք քեզի...

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Առօթաբար՝
ՄԵՂՐԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԻՔԵԱՆ
 Առաջտող ԳԱՆՏՏՎԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻՆ

ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

6 Յունուար, 2015

Մոնթրէյալ-Գանատա



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՆԵՐՎՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՄՆՉ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Դ-ԷԱՐԵՐ, Դ-ԵՊՐԵՐ, Թ-ԵԱՄԱՆԵՐ

Հոփնակ

ԳԵՂԱՐԳ ՎԱՐԳԱՊԵՏ ՔԻՍՊԵԿԵԱՆ

Հովիւ Գեմպրիճի Ս. Նշան Եկեղեցւոյ



ՆԱԽԱԲԱՆ

«Աստուածաշունչը ինձի համար դրժ-
լար ըմբռնելի գիրք մըն է. փորձեցի կար-
դալ, բայց չշարունակեցի՝ շատ մը բաժին-
ներ չհասկնալուս պատճառով»: Շատեր
այսպէս կ'արտայայտուին Աստուածաշուն-
չի յատկապէս առաջին բաժինին՝ Հին Կտա-
կարանին մասին, որ արդարացի է որոշ ի-
մաստով, եթէ՝

ա. Կ'ընթերցուի առանց նախապէս կա-
տարուած աղօթքի:

բ. Կարգ մը անհրաժեշտ նախագիտե-
լիքներ չունինք անոր մէջ յիշուած անձե-
րուն, ժողովուրդներուն, վայրերուն եւ
դէպքերուն պատմական ենթահողին մասին:

գ. Նոր Կտակարանի լոյսով չենք կար-
դար գայն: Անհրաժեշտ է նախ կարդալ
Նորը, անոր լոյսով հասկնալու համար Հին
Կտակարանը, որովհետեւ, ինչպէս մեր Տէրը
Յիսուս կը հաստատէ, ըսելով. «ՔԱՆԵԳԷՔ
Սուրբ գիրքերը [ակնարկութիւնը Հին Կը-
տակարանին է], քանի կը կարծէք թէ ա-
նոնցմով յաիտեմական կեանք պիտի ունե-
նաք. եւ նոյն գիրքերն են որ կը վկայեն իմ
մասին» (ՅՀ 5:39):

Արդարեւ, Աստուածաշունչի առաջին
արձանագրութեան թուականէն մինչեւ մեր
օրերը անցած են մօտաւորապէս 3500 տա-
րիներ: Հետեւաբար, հասկնալու համար
Աստուածաշունչը, հարկ է մեր տրամադ-
րութեան տակ ունենալ օժանդակ աղբիւր
մը, բացատրողական գիրք մը, Աստուածա-
շունչի ընդհանուր ներածականը ընող: Ուս-
տի, ուսումնասիրական այս շարքը համեստ
ջանք մըն է, այդ իմաստով, սակայն՝ ոչ նեղ
մասնագիտական սպառիչ աշխատասիրու-
թիւն մը:

Աստուածաշունչը գրուած է ճշմարտու-
թիւնը փնտռող եւ կեանքին իմաստն ու
նպատակը հետապնդող խոնարհ հոգիներ
ունեցող համար եւ ոչ միայն՝ վկայեալ աստ-
ւածաբաններուն: Աղօթող եմ, որ մեր ե-
կեղեցւոյ զաւակները օգտակար գտնեն այս
ներածականը, իրենց անձնական սերտո-
ղութեան համար: Այսուհանդերձ, կու գամ
անմիջապէս աւելցնելու, թէ՛ Աստուածա-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին Եդեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

չունչը հասկնալու անհրաժեշտ նախապայմանը այս գրքոյկը չէ, այլ՝ մեր եկեղեցական հայրերուն իսկ հաստատումով՝ աղօթքն ու Սուրբ Հոգիին ներգործող օգնականութիւնը, որովհետեւ՝ «Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարտութիւն կը թուին իրեն. եւ չի կրնար զանոնք ճանչնալ, որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին» (Ա.Կր 2-14):

Տեղին է յիշել, թէ՛ Աստուածաչունչի Հին Կտակարանի ներածութեան մասին հարուստ աղբիւր մըն է Հոգեւոյս Զարեհ Արք. Ազնաւորեանի «Աստուածաշունչի Վերաբերեալ Ուսումնասիրութիւններ» ժողովածոն, Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեանի խմբագրութեամբ: Զարեհ Արք. ընդհանուր կերպով կ'անդրադառնայ Աստուածաչունչի (մասնաւորաբար Հին Կտակարանի) հեղինակութեան, ներչնչականութեան, կանոնականութեան, բնագիրներուն եւ թարգմանութիւններուն:

Իսկ այս համեստ աշխատասիրութիւնս յատկացուցած եմ Հին Կտակարանի իւրաքանչիւր գիրքի ուսումնասիրութեան, կեդրոնանալով իւրաքանչիւր գիրքի հեղինակին, բովանդակութեան, թեմային եւ Նոր Կտակարանին հետ անոր առնչութեան: Աշխարհաբար արեւմտահայերէնով մատչելի այլ աղբիւր մըն է՝ Բիւզանդ Եղիայեանի «Քննական Պատմութիւն Սուրբ Գրական ժամանակներու» հինգ հատորնոց աշխատասիրութիւնը, ուր Եղիայեան լայնօրէն կ'անդրադառնայ Աստուածաչունչ Մատեանին, գիտական մօտեցումով կատարելով անոր ներածականը:

Նախաբանս կը փակեմ Սաղմոսերգուին այս խօսքերով, զորս կրնայ ծառայել որպէս սիրտն ու միտքը պատրաստող աղօթք՝ Աստուածաչունչ Սուրբ Գիրքի ընթերցման համար.-

«Սորվեցո՛ւր ինծի, Տէ՛ր, կանոններդ պահելու կերպը, եւ մշտապէս պիտի կատարեմ պանոնք:

Տո՛ւր որ հասկնամ քու Օրէնքդ, որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հրնապանդիմ անոր:

Պատուիրաններուդ շաւիղին մէջ առաջնորդէ պիս, որովհետեւ անոնցմէ՛ հաճոյք կ'առնեմ» (Սղ 119.33-35):

Իսկ Սուրբ Գիրքի ընթերցումէն ետք արտասանելիք գեղեցիկ աղօթք մըն է նոյն Սաղմոսին հետեւեալ բառերը.-

«Երանի՛ անոնց, որոնք անբասիր կեանք մը կ'ապրին, որոնք կ'ապրին Տիրոջ խօսքին համաձայն:

Երանի՛ անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն, ամբողջ սրտով անոր կը հնապանդին, որոնք չարիք չեն գործեր, այլ՝ անոր ճամբուն մէջ կը քալեն:

Դուն հրամայեցիր բծախնդրութեամբ գործադրել հրահանգներդ:

Ինչքա՛ն կ'ուզեմ անշեղ ընթացքով գործադրել քու կանոններդ:

Այն ատեն ամօթ պիտի չզգամ ամէն անգամ որ ուշադրութիւնս դարձնեմ քու պատուիրաններուդ:

Որքան կը սորվիմ արդար դատաստաններդ, այնքան կը գոհաբանեմ քեզ անկեղծ սրտով:

Պիտի գործադրեմ քու կանոններդ, բընաւ, բնա՛ւ մի՛ լքեր պիս» (Սղ 119.1-8):

ՀԱԿԻՐԸ ՆԵՐԱԾԱԿԱՆ

Քրիստոնէական Եկեղեցին Աստուածաչունչ Մատեանի Հին Կտակարանի Սուրբ Գիրքերը կարգաւորած է հետեւեալ ձևով¹.

- Օրէնքի գիրքեր
- Պատմական գիրքեր
- Բանաստեղծական կամ իմաստութեան գիրքեր
- Մարգարէական գիրքեր

Այս շարքը ունի պատմական հայեացք մը, որովհետեւ առաջին տեղը գրաւող Օրէնքի

¹ Երբայական կանոնը երեք խմբաւորումներու կը բաժնէ Հ.Կ.-ը.- Օրէնք (Թորահ), Մարգարէներ (Նպիւմ) եւ Գիրքեր (Խրթուպիմ):



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսկապաւորը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [րոսելով]։ «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց)։

Գիրքերը կը խօսին աշխարհի եւ մարդուն ծագումին մասին եւ կը ներկայացնեն Աստուծոյ ժողովուրդին կազմաւորումը, ապա կու գան Պատմական Գիրքերը, որոնք նոյն այդ ժողովուրդին պատմութիւնը կը ներկայացնեն այս աշխարհի պայմաններուն մէջ, մինչեւ Փրկութեան եւ Փրկիչին գալուստը, յետոյ կու գան Բանաստեղծական կամ՝ Իմաստութեան Գիրքերը, որոնք Աստուծոյ ժողովուրդը ներկայ ժամանակին մէջ Աստուծային իմաստութեամբ դաստիարակելու սահմանուած են, եւ ի վերջոյ՝ կու գան Մարգարէական Գիրքերը, որոնք մօտաւոր եւ հեռաւոր ապագային վրայ կը բացուին։

ՕՐԷՆՔԻ ԳԻՐՔ

Սկսինք Օրէնքի Գիրքերէն։

Անցեալին, օրէնքի գիրքերը մէկ ամբողջութիւն կը կազմէին։ Թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ յաճախակի ակնարկութիւններ կը գտնենք այս մասին, ուր Աստուծաշունչի առաջին հինգ գիրքերը միասնաբար կը կոչուին՝ Օրէնքի Գիրք։

Յետագային սակայն, յատկապէս երբ Ք.Ա. երրորդ դարուն Հին Կտակարանի գիրքերը երբայերէնէ թարգմանուեցան յունարէնի (Եօթնասնից Թարգմանութիւն), Օրէնքի Գիրքը այս նոր թարգմանութեան մէջ բաժնուեցաւ հինգ մասերու (առանց երբեք անոնց բովանդակութենէն բան մը փոխելու) եւ այդ պատճառաւ ալ ճանչցուեցան նաեւ՝ որպէս «Հնգամատեան» (= հինգ մատեաններ՝ գիրքեր)։

Այսօր, մեր տրամադրութեան տակ գրտնրուող Աստուծաշունչ Մատեանին մէջ Օրէնքի Գիրքը կը ներկայացուի դարձեալ հինգ բաժիններով, որոնք են՝

- Ծնունդներու Գիրքը (կամ՝ Ծննդոց)
- Ելքի Գիրքը (կամ՝ Ելից)
- Ղեւտական Գիրքը (կամ՝ Ղեւտացւոց)
- Թիւերու Գիրքը (կամ՝ Թուոց)
- Օրէնքի Երկրորդումին Գիրքը (կամ՝ Երկրորդումն Օրինաց)

Աեղմ գիծերու մէջ անդրադառնանք իւրաքանչիւրին.-

Ծնունդներու Գիրքը կը ներկայացնէ՝ տիեզերքի եւ մարդկութեան արարչագործութեան պատմութեան համապարփակ ներածութիւնը, Երբայեցի ժողովուրդին ընտրութիւնը եւ դաստիարակութիւնը Աստուծոյ կողմէ, նահապետներուն միջոցաւ (Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի)։

Ելքի Գիրքը կը նկարագրէ Երբայեցիներուն Եգիպտոսէն ազատագրման ղրուագը Մովսէս Մարգարէին առաջնորդութեամբ եւ Սինայի անապատին մէջ Աստուծային օրէնքներու շնորհումը անոնց։

Ղեւտական Գիրքը նուիրուած է Աստուծաշունչի օրէնքներու բանաձեւումին, անոնց բոլոր մանրամասնութիւններով հանդերձ, որոնք կ'առնչուին աստուծային պաշտամունքին, Քահանաներուն եւ Ղեւտացիներուն։

Թիւերու Գիրքը կը խօսի Երբայեցիներու անապատային թափառումներուն, ինչպէս նաեւ այդ ընթացքին անոնց կատարած մարդահամարներու թիւերն ու ցուցակները կը բովանդակէ անիկա։

Ի վերջոյ՝

Օրէնքի Երկրորդումին Գիրքը, որ Մովսէսին կողմէ աստուծային Օրէնքներուն վերլիչեցումը եւ կրկնութիւնն է, ուղած Բաբելոնեան գերութենէն վերադարձած Երբայեցի ժողովուրդին։

Արդ, Օրէնքի Գիրքը ըսելով կը հասկընանք Աստուծաշունչ Մատեանի Հին Կտակարանի առաջին հինգ գիրքերը, որոնք կը ճանչցուին նաեւ՝ «Հնգամատեան» անունով։ Ուստի, «Օրէնքի Գիրք» բացատրութիւնը ակնարկութիւն է Աստուծաշունչի այն բաժինին, որ կը սկսի սկիզբէն՝ ստեղծագործութեան ղրուագէն եւ կ'աւարտի Մովսէսի մահուան եւ Երբայեցի ժողովուրդին խոստացեալ երկրի սահմաններուն հասնելու ղրուագներով։



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսկապէս զարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [րսելով]։ «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց)։

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ ԳԻՐՔ

(Ծննդոց)

Բանայի Համար.

«Սկիպէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծն 1.1):

Գիրքին միտքը ամփոփող բանայի Համարը կը յուշէ գիրքին գլխաւոր թեման, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ այն հաստատումը, թէ՛ ամէն ինչ որ կ'երեւի մեր աչքերուն, եւ ամէն ինչ որ աներեւոյթ է, ստեղծագործութիւնն է ամէնակալ Աստուծոյ մը: Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցին տիեզերաբանական այս հաստատումը կը դաւանի «Սիկիական Հանգանակ»ով, զոր Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ կ'արտասանուի իւրաքանչիւր Պատարագի արարողութեան ընթացքին. «Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամէնակալ Հօր, որ արարիչն է երկնքին ու երկրին, երեւելի թէ՛ աներեւոյթ բաներուն»:

Թէ ինչպէ՞ս կարելի է հասկնալ ստեղծագործութիւնը, պատասխանը կը գտնենք Երբայեցիներու նամակին մէջ. «Հաւատքով է որ կը հասկնանք տիեզերքին ստեղծումը Աստուծոյ խօսքով, որով տեսանելի այս տիեզերքը ոչինչէն գոյացաւ» (Եբր 11.3): Այս իմաստով, Ծնունդներու Գիրքը ոչ թէ գիտական մօտեցումով բացատրութիւնն է ստեղծագործութեան, այլ՝ անիկա Քրիստոնէական աշխարհահայեացն է, որ կը բացայայտէ այսինքն, Ծննդոց Գիրքին նպատակը չէ՛ բացատրել թէ՛ Տիեզերքն ու մարդկութիւնը ինչպէ՞ս ստեղծուեցան, այլ՝ ինչո՞ւ ստեղծուեցան: Այլ խօսքով, Ծննդոց Գիրքը ոչ թէ ըստեղծագործութեան միջոցը կը բացատրէ, այլ՝ անոր նպատակը կը բացայայտէ: Այս լոյսով պէտք է կարդալ գայն, խոսափելու համար գիտական եւ աստուածաբանական-ծագումնաբանական անքակտելի թնճուկներէն: Ծնունդներու Գիրքին մէջ կը տեսնենք ծնունդը՝ տիեզերքի, աշխարհի, մարդուն, մեղքին, փրկութեան գաղափարին, ազգերու եւ ժողովուրդներու, լեզուներու, մարդկային քաղաքակրթութեան (արուեստ, ընտանիք, քաղաքաշինութիւն, եւ այլն), եւ թէ՛ Աստ-

ւած ինչ ծրագիր եւ նպատակ կը հետապնդէր այդ բոլորին մէջ:

Ծնունդներու Գիրքը ունի երկու հիմնական բաժիններ.՝

Ա) Ստեղծագործութեան եւ Համամարդկային պատմութեան ակունքները (1-11 գլուխներ)

Բ) Նահապետներու պատմութիւնը (12-50 գլուխներ)

Ա) Ստեղծագործութեան եւ Համամարդկային պատմութեան ակունքները (1-11 գլուխներ): Այս բաժինէն կը հասկնանք, թէ՛ Աստուած ինքն է արարիչը տիեզերքին, որ ոչինչէն ստեղծեց ամէն ինչ, թէ՛ Աստուած ամէն բան ստեղծեց բարի, թէ՛ մարդուն մեղանշումը հետեւանքն է իր ազատ կամքի ընտրութեան, որով մարդը մերժեց հնազանդիլ Աստուծոյ իրեն տուած պատուիրանին եւ հետեւեցաւ Չարին՝ Սատանային ձայնին: Ասով հանդերձ, Աստուած անսասմանօրէն համբերատար գտնուեցաւ մեղանշական մարդուն նկատմամբ, անոր երկրորդ առիթ շնորհելով եւ անոր հետ իր Ուխտերը կնքելով: Աստուած առաջին ուխտ մը կնքեց Նոյին հետ, ջրհեղեղէն անմիջապէս ետք, որով Ան կու գար հաշտութիւն առաջարկելու մարդուն եւ կարծէք նոր ու երկրորդ ստեղծագործութեան մը նախաձեռնելու (Ծն 9.8-17):

Սակայն, մարդը շարունակեց չարանալ եւ գոռոզանալ Աստուծոյ դիմաց, որուն ամէնէն բացայայտ արտայայտութիւններէն մէկն էր Բաբելոնի աշտարակաշինութիւնը (Ծն 11), ուր կը տեսնենք Աստուծոյ գայրոյթը մարդկային գոռոզութեան, ինչպէս նաեւ՝ բռնութեան եւ ստրկամտութեան նկատմամբ:

Բ) Նահապետներու պատմութիւնը (12-50): Երբ կը սերտենք նահապետներուն կեանքը, կարեւոր իրողութիւն մը կը նկատենք անոնց մէջ. այն՝ որ հակառակ երեւութական արգելքներուն եւ անկարելիութիւններուն եւ մարդկային տկարութիւն-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսկապէս զարձած Կայենական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արինն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիննին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ներուն, Աստուած հրաշալիօրէն իր ծրագիրը յառաջ կը տանի, եւ Աստուած կարող է իր ծառաներուն պատահած չարիքները բարիքի ծառայեցնել:

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ ԳԻՐՔԻՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԵՏ

Ծնունդներու Գիրքը կը սկսի Աստուծոյ ստեղծագործութեամբ, իսկ Նոր Կտակարանը կ'աւարտի «Նոր երկինքի եւ նոր երկրի» ստեղծագործութեամբ (Յտ 21-22 գլուխներ): Ծննդոցի եւ Յովհաննէսի Յայտնութեան միջեւ կը տեսնենք Քրիստոսի մարդեղացումն ու փրկագործութիւնը: Արդարեւ, Քրիստոսով է, որ Հին եւ Նոր Կտակարանները կը միահիւսուին, կ'ամբողջանան եւ կ'ուղղուին դէպի վախճանակէտ, դէպի Քրիստոսի Երկրորդ Գալուստ եւ Աստուծոյ Արքայութեան վերջնական հաստատումը:

Ծննդոց Գիրքին մէջ կը գտնենք գալիք փրկութեան եւ Փրկիչին առաջին խոս-

տումը (Ծն 3.14-15), որ յաճախ կը կոչուի Կանխաւետում:

Քրիստոս՝ մեր Տէրը, կեղրոնական, թէ՛ եւ ոչ բացայայտ, թեման է Ծննդոց Գիրքին, ուր Աբրահամին տրուած բոլոր խոստումներուն իրականացումն է Ան (տես՝ Բ. Կր 1.20), եւ Քրիստոսով մենք՝ հաւատացեալներս ենք Աբրահամի իրական սերունդները (տես՝ Հռ 9.8):

Քրիստոս ինք է «Երկրորդ [վերջին] Ադամը», որ, հակառակ առաջին Ադամին, կատարելապէս հնազանդեցաւ Հայր Աստուծոյ կամքին ու խօսքին եւ հատուցեց առաջին մարդուն, եւ բոլոր մարդոց մեղքերուն գինը, իր արիւնով ու կեանքով, եւ անոր հաւատալով է, որ մարդը կը մտնէ այն յարբերութեան մէջ, որուն համար իսկ ստեղծուած էր առաջին մարդը:

Յորդորակ եւ խորհրդածական «Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերով ստեղծեց զայն ու արու եւ էգ ստեղծեց զանոնք» (Ծն 1.27):

(Շար.1)



ՄՍՈՒՐԻՆ ԻՄԱՍՏԸ

Ղուկասի Աւետարանին մէջ կը կարդանք.

«Այնտեղ, դաշտերուն մէջ հովիւներ կային, որոնք գիշերով իրենց հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ հրեշտակը անոնց երեցաւ եւ Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովիւները սաստիկ վախցան. հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի.- հոն մանուկ մը պիտի գտնէք՝ խանձարտրով փայտօրում եւ



մատրի մէջ դրուած» (Ղկ 2.8-12):

Մսուրը, որուն մէջ դրուեցաւ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս իր ծնունդէն ետք, ախոռին մէջ գետեղուած, երբեմն 3 ոտք, երբեմն 4, 5, 6 ոտք, եւ այլ երկարութիւն ունեցող այն փայտաշէն ամանն է, որուն մէջ յարդ կը լեցնէին, եւ ուրկէ կենդանիները կ'ուտէին:

Մսուրը ախոռ չէ:

Հովիւները Յիսուսը գտան մսուրին մէջ դրուած, որուն մասին հրեշտակը աւետած էր իրենց:

Մսուրը խոնարհութեան խորհրդանշանն էր:



Ձմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ԱՍՏՈՒԾՈՅ ՆՄԱՆԻՆՔ

Հեղինակ՝

ՍՏԵՓԱՆՍ ՎԱՐԳԱՊԵՏ ՓԱՇԱՅԵԱՆ

Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ

«Աստուծոյ նմանեցէք,
որպէս իր սիրելի որդիները»:
(Եփ 5.1)



Եփեսացիներուն գրած իր նամակին մէջ Պօղոս Առաքեալ անգամ մը եւս յորդորական ձեւով մարտահրաւէր կը կարդայ քրիստոնեայ հաւատացեալին՝ որպէս իր սիրելի որդիները նմանելու Աստուծոյ: Քրիստոնէական վարդապետութեան եւ կոչումի բարձրակէտն ու նպատակակէտն է Աստուծոյ նմանիլը: Պօղոս Առաքեալի այս կոչը երբեք պէտք չէ մոռնալ կամ մտահան ընել մեր միտքէն, որովհետեւ մենք՝ որպէս հաւատացեալներ, կոչուած ենք մեր ամբողջ կեանքի տեւողութեան, մեր մտածողութեամբ, մեր ապրելակերպով եւ մեր վերաբերմունքով Աստուծոյ նմանելու, որպէս իր սիրելի որդիները, եւ ըստ այնմ՝ հաւատքի մեր կեանքը ապրելու: Աստուծոյ նմանիլ: Հար-

ցադրումներ, որոնք շարունակաբար մեր միտքը կը զբաղեցնեն. կարելի՞ բան է Աստուծոյ նմանիլ, ինչո՞ւ պէտք է Աստուծոյ նմանիլ, ի՞նչ բանի մէջ կրնանք նմանիլ Աստուծոյ:

Երբ կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր կը տիրեն փորձութիւնները, մեղքը եւ աշխարհային հաճոյքները եւ ուր հաւատացեալ անհատը իր հեւքոտ վագքին մէջ գէթ անգամ մը կ'ուզէ Աստուծոյ ներկայութիւնը վայելել, կը փափաքի Աստուծոյ նմանիլ եւ ինչու չէ նաեւ Անոր ողորմութիւնն ու սէրը ստանալ: Վստահաբար առաքեալը բան մը ըսելու սիրոյն չէ որ կ'ըսէ այս մէկը, այլ ան՝ իրապէս կը հաւատայ, թէ Աստուծոյ նմանիլը ո՛չ միայն կարելի բան է, այլ՝ իւրաքանչիւր քրիստոնեայ հաւատացեալի կոչո՛ւմն է: Սակայն եթէ կ'ուզենք Աստուծոյ նմանիլ, նախ պէտք է լաւ գիտնանք Անոր էութեան մասին: Աստուած, ինքզինք յայտնած է մեզի իր *Խօսքով՝ Յիսուս Քրիստոսի* ընդմէջէն: Որպէս մարդ արարածներ, Աստուծոյ փառքին, ամէնակարողութեան, ամէնուրեք ներկայութեան, ամէնազօրութեան չենք կրնար նմանիլ Աստուծոյ. անոնք միայն Աստուծո՛յ վայել են: Սակայն կան յատկանիչներ, որոնք մեզ թոյլ կու տան նմանելու Աստուծոյ: Այդ յատկանիչներէն կրնանք յիշել Աստուծոյ սրբութեան, արդարութեան, սիրոյ, ողորմածութեան, հաւատարմութեան եւ ներողամտութեան մէջ:

Ինչո՞ւ պէտք է նմանիլ Աստուծոյ, ինչո՞ւ պէտք է ապրիլ այնպիսի կեանք մը, որ Աստուծոյ պատկերը արտացոլայ մեր ապրելակերպին ընդմէջէն: Ամէն բանէ առաջ եւ վեր՝ որովհետեւ մենք բոլորս Աստուծոյ որդիներն ենք:



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, արտափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

«Աստուծոյ նմանեցէք, որպէս իր սիրելի որդիները»:

Աշխարհի մէջ այսօր կ'ապրին մարդիկ, որոնք ուղիղ կեանք կը վարեն, ուստի՝ իրենք իրենց անձով ու ապրելակերպով գոհ են: Ասիկա քրիստոնեայ անհատի վայել չէ, որովհետեւ այդպէս ապրողը՝ պարզապէս ինքզինքին համար ապրող մարդն է, բարիք գործողը՝ իր փառքին համար կատարողն է: Այո՛, անոնք շատ լաւ մարդիկ են իրենք իրենց եւ աշխարհին համար, բայց՝ ո՛չ Աստուծոյ համար, որովհետեւ իրենց դիտումին ու վերաբերմունքին մէջ անձնասէր են, մարդահաճոյ կեանք մըն է որ կ'ապրին եւ ոչ Աստուածահաճոյ:

Առաքեալը իր երկրորդ բաժնով կը հաստատէ ըսելով՝ «որպէս իր սիրելի որդիները»՝ Պարզ որդիներ չենք, սիրելի՛ հաւատացեալներ, այլ՝ Աստուծոյ սիրելի որդիներն ենք: Աստուած իր սէրն ու հոգածութիւնը մեզի հանդէպ կը տածէ: Ինչպէս որ ծնողներ իրենց զաւակին կը գուրգուրան անոր աշխարհ գալէն ետք, մինչեւ իրենց կեանքի աւարտը, այնպէս ալ Աստուած իր սէրը անսահմանօրէն ու անչափելիօրէն ցոյց կուտայ հաւատացեալ անհատին: Եւ քանի որ Աստուծոյ սիրելի որդիներ ենք ու մաս կը կազմենք Աստուծոյ ընտանիքին, ուրեմն ինչպէ՞ս պէտք է արձագանգենք Աստուծոյ սիրոյն դիմաց: Այս հարցումներուն պատասխանները ստանալու համար փորձած ենք հիմնական երեք կէտերու մէջ ամփոփել մեր միտքը.-

1) Երբ Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած սիրոյն ճշմարտութեան անդրադառնանք, մեր պարտքն է նոյն այդ սիրոյն դիմաց մեր սէրն ալ ցոյց տալ Աստուծոյ: Աստուծոյ մեծ ուրախութիւն պատճառած կ'ըլլանք, երբ իրեն արժանի կեանք մը կ'ապրինք, իրեն նմանինք: Օրինակը կեանքէ՛ն առնենք. մարդկային բնութեամբ փոքրիկ երեխայ մը, որ իր հայրը անչափ կը սիրէ ու գիտէ որ հայրն ալ զինք կը սիրէ,

ի՞նչ կ'ըլլայ իր ամբողջ փափաքը: Հօ՛րը նրմանիլ: Կը փափաքի շուտով մեծնալ եւ իր հօրը նման ըլլալ: Սիրոյ սքանչելի արտայայտութիւն է սա: Հապա որքա՛ն աւելի մենք պէտք է տեսնն ու փափաքը ունենանք մեր երկնաւոր Հօր նմանելու, որովհետեւ մենք այլեւս մաս կը կազմենք Աստուծո՛յ ընտանիքին:

2) Քանի որ Աստուծոյ ընտանիքի՛ն մաս կը կազմենք, ուստի, երկնաւոր մեր ընտանիքի պատիւը բարձր պահելը մեր ձեռքին մէջ է: Որովհետեւ մենք այդ ընտանիքին ներկայացուցիչներն ենք երկրի վրայ. երբ մարդիկ մեզի նային, ո՛չ թէ մեզ, այլ՝ մեր ընտանիքն է որ պիտի դատեն: Այդպէս է նաեւ այս երկրի վրայ: Ծնողներ միշտ ալ կը զգուշացնեն իրենց զաւակները, որ մարդոց դիմաց գուսպ ու լուռ կենան, որովհետեւ զաւակները իրենք չէ որ պիտի քննադատւին, այլ՝ ծնողները: Ահաւասիկ, նոյնպէս ալ մենք, որ Աստուծոյ ընտանիքին մաս կը կազմենք, պէտք է որ ապրինք մեր հին ապրելակերպով, ապականեալ բնութեամբ. այդպիսով՝ Աստուծոյ ընտանիքին պատիւը ոտնակոխ ընելով: Ապրինք այնպէս, որ մարդիկ մեր մէջ զԱստուած տեսնեն ու փառաւորեն զինք:

3) Աստուծոյ կրնանք նմանիլ երբ սիրով շարժինք, սիրոյ մէջ քայլենք, սիրով իրարու հետ վերաբերինք: Մեր Տէրը՝ Քրիստոս ալ սիրեց մեզ, նոյնպէս ալ մենք պէտք է սիրենք մեր նմանը: Քրիստոսի ամէնամեծ ապացոյցը այն է, որ «մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ զոհ»: Նոյն անձնագոհողութեան, նուիրաբերումին կոչուած ենք մենք եւս մեր այս կեանքին մէջ՝ նմանելով Աստուծոյ: Քրիստոս սիրոյ այդ ճանապարհէն քայլեց եւ իր կեանքը տուաւ մեզի համար, իր մարմինը բաշխեց ու իր արիւնը թափեց իր թշնամիներուն, մեղաւորներուն ու փարիսեցիներուն համար:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսկապաւարը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հետեւաբար, եկէք որպէս Աստուծոյ սիրելի եւ ընտրեալ որդիները, փորձենք մեր կեանքը դնել Աստուծոյ անսահման անդաստանէն ներս, մեր կեանքով ու գործով փորձենք նմանիլ Աստուծոյ, քալենք Քրիստոսի գծած ու բացած սիրոյ ճանապարհէն, թող

մեր կեանքն ու գործունէութիւնը դառնայ մէկական անուշահոտ ընծայ եւ գոհ Աստուծոյ ներկայութեան, ի փառս ամենասուրբ երրորդութեան, որով օրհնեալ ըլլաք, յաւիտեանս յաւիտենից. ամէն:



ԽԱՆՁԱՐՈՒՐԻՆ ԻՄԱՍՏԸ

Խանձարուր կը նշանակէ երեխան փաթթելու լաթ (Swaddle):

Խանձարուր կը նշանակէ նաեւ այն կտաւը, որով հին օրերուն, Միջին եւ Ծայրագոյն Արեւելքի ժողովուրդներ իրենց մեռելները կը պատանքէին (Shroud):



Ամէն մարդ գիտէ, որ Յիսուս ծնաւ մսուրին մէջ: Ղուկաս Աւետարանիչ այսպէս կը վկայէ.

«Բերթեհէմի մէջ Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար» (Ղկ 2-6-7):

Մանուկ Յիսուսը փաթթուած է խանձարուրին եւ դրուած մսուրին մէջ:

Իրականութեան մէջ այս օրերուն հիւանդանոցներուն մէջ երբ մանուկը ծնի, կը փաթթեն խանձարուրանման կտաւով:

Միջին Արեւելքի մէջ մարդիկ երկար ճամբորդութիւն կ'ունենային:

Ճամբորդութեան ընթացքին կը հանդիպէին բազմաթիւ դժուարութիւններու. կրնային նաեւ մահանալ: Այդ պարագային, որովհետեւ չէին կրնար մահացողներու դիակը փոխադրել իրենց հետ, ամէն մարդ իր մէջքին կ'ունենար փաթթուած խանձարուր մը: Եթէ պատահէր, որ մէկը մահանար, այդ խանձարուրով կը փաթթէին դիակը եւ կը թաղէին:

Երբ Յիսուս ծնաւ, պանդոկին մէջ տեղ չկար: Մարիամ եւ Յովսէփ գոմ մտան՝ ծննդաբերութեան համար: Եւ երբ Յիսուս ծնաւ, այն խանձարուրը որ Յովսէփի մէջքին փաթթուած էր, կը գործածեն մանուկ Յիսուսը փաթթելու համար:

Թագաւորներուն թագաւորը այս աշխարհ եկաւ մեռնելու՝ մարդոց մեղքերուն համար:

Իրականութեան մէջ Յիսուս իր ծննդեան օրն իսկ արդէն տուաւ պատգամը գոհողութեան, որուն համար ալ աշխարհ եկած էր:





Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ԶԱՐԹԻՔ ՓՐԿԵԱԼՔ ԱՐԵԱՄԲ

Հեղինակ՝

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՂԱՅ ԹԱՇՃԵԱՆ

Վարիչ Գանատայի Հայոց Թեմի Քրիստոնէական Դատիարակութեան Խորհուրդի

**«Կը հաւատանք՝ թէ Աստուած Յիսուսի ձեռքով
եւ անոր հետ ե՛տ կեանքի պիտի բերէ անոնք՝
որ անոր հաւատացին եւ մեռան»:**

(Ա.Թս 4.13-14)



Հին Կտակարանի բոլոր մարգարէութիւններուն եւ գուշակութեանց համաձայն, մարմնաւորեալ Աստուծոյ փրկագործական ծրագրին կատարումն ու հաստատումը, սկսաւ Յիսուսի հրաշապատում եւ խորախորհուրդ ծնունդով ու իր լրումին հասաւ խաչեային յարուստեամբ:

Արդարեւ, Քրիստոսի Աստուածային ըստորոգելիները եւ մարգարէութեանց կատարումը, ցոյց տուին Աստուած-մարդուն ունեցած անհուն սէրը հանդէպ մարդկութեան:

Ա) ՔՐԻՍՏՈՍ ՄԵԾԱԳՈՅՆ ԶՈՀԸ

Քրիստոնէական պատմութեան մէջ շատ մը աղանդաւորներ փորձեցին աղաւաղել Քրիստոսի Աստուածային բնութիւնը, ըսե-

լով, թէ արդեօք կարելի՞ է, որ Աստուած խաչ բարձրանայ եւ որպէս զոհ մատուցուի իր արարածներուն համար:

Սակայն, ժամանակներու հոլովոյթին, այս աղանդաւորները կորսուեցան պատմութեան մութ էջերուն մէջ, որովհետեւ չկրցան ապացուցել Քրիստոսի ինքնավիճանութիւնն ու պարզապէս «Մարդ» մը ըլլալը: Աւելին, անոնք չկրցան ժխտել այն ճշմարտութիւնը, որ Աստուած մարմնացաւ յատուկ առաքելութեամբ մը, որ պիտի իրագործուէր՝ Խաչելութեամբ եւ Արեան հեղումով, որով պիտի փրկէր համայն աշխարհի մարդկութիւնը աղամական մեղքէն: Եթէ Սուրբ Աստուածը խաչ չբարձրանար, համայն աշխարհի մեղաւոր մարդկութիւնը, ինչպէ՞ս պիտի կրնար մեղքերու քաւութիւն ստանալ: Ուրեմն զոհը Աստուածորդին ինք իսկ էր:

«Ճշմարիտ հովիւը իր անձը կը զոհէ իր ոչխարներուն համար» (ՅՀ 10.11): Ի՞նչ գեղեցիկ ու դրախտաբոյր բառերով, Քրիստոսի՝ Ճշմարիտ Հովիւի ինքնութիւնը կ'արտացոլայ ու կը պարզուի աւետարանական այս նախադասութեամբ:

Այո՛, Քրիստոս իր անձը զոհեց, որպէսզի իր արեան հեղումով, խաչին վրայ՝ մեր եւ Հօր Աստուծոյ միջեւ հաշտութեան գերագոյն նոխազը դառնայ, իսկ իր յաղթական Յարութեամբ՝ փրկութիւն համայն մարդկութեան:



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

**Բ) ՔՐԻՍՏՈՍՈՎ՝
ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ**

Հակառակ որ Քրիստոս որպէս Աստուած, գիտէր՝ թէ այս բոլորը պիտի պատահէին իրեն, սակայն մեր փրկութեան համար յանձն առաւ ըմպել դառնութեան մահացու բաժակէն: Անոր համար ալ, Գեթսեմանիի մենութեան մէջ, Քրիստոս այսպէս կ'աղօթէ. «Հայր, հեռացուր այս բաժակը ինձմէ, սակայն ոչ թէ ինչպէս որ ես կ'ուզեմ, այլ՝ ինչպէս որ դուն կ'ուզես» (ՂԿ 22.42):

Քրիստոս մշտապէս կը յիշեցնէ, որ Ինքն է յաւիտենական կեանքը, Ինքն է փրկութիւնը: Ով որ իրեն երթայ, բնաւ պիտի չմեռնի:

Ի՛նչ սրտառուչ խօսքեր եւ հոգեթով ըզգացումներ, որոնք կը բիւրեղացնեն մեր սրտերը, երբ մեր հովիւը մեզի փրկութեան աւետիսը կու տայ: Քրիստոս՝ որպէս երկնառաք Աստուած, խոնարհեցաւ, մարդոց փրկութեան համար: Ան ո՛չ միայն երկինքէն երկիր խոնարհեցաւ, այլ՝ նոյնիսկ իր աշակերտներուն առջեւ խոնարհեցաւ անոնց ոտքերը լուարով: Իսկ Վերջին Ընթրիքի պահուն, երբ առաքեալները հաւաքուած էին վերնատան մէջ, Հովիւը՝ քաջ գիտէր, որ իր ոչխարներէն մէկը գինք պիտի դաւաճանէր, իսկ միւսը պիտի ուրանար Զինք: Բայց Իր անհուն սիրոյն եւ փրկագործութեան խորհուրդի կատարման համար, յանձն առաւ մատնուիլ չարագործներուն: Որքան ալ որ դժուար էր ականատես ըլլալ իր աշակերտներու սաղրանքին եւ ուրացման, մեր Տէրը ներողամտութեամբ դիմեց Իր Հօրը, որպէսզի բոլորն ալ ներուին, որովհետեւ չէին գիտեր թէ ինչ կ'ընէին:

Այսօր, որպէս քրիստոնեաներ, կը հաւատանք որ Քրիստոս՝ անժամանակը, ժամանակին մէջ մտաւ, քարոզեց, չարչարուեցաւ, խաչուեցաւ ու վերջապէս յարեաւ մարդոց փրկութեան համար:

Առանց Յարութեան փրկութիւն չկայ: Առանց Յարութեան, քրիստոնէական կրօնը

ըր կը մնայ միայն բարոյական արժէք եւ ուսուցում: Սակայն, Յարութեան խորհուրդը ինքնին յաւիտենական կեանքն է: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Եղբայրներ, կ'ուզենք որ մեռածներուն մասին ճշմարտութիւնը գիտնաք, որպէսզի չըտըրտմիք ուրիշներուն պէս, որոնք ոեւէ յոյս չունին: Որովհետեւ, եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ կը հաւատանք՝ թէ Աստուած Յիսուսի ձեռքով եւ անոր հետ ե՛տ կեանքի պիտի բերէ անոնք՝ որ անոր հաւատացին եւ մեռան» (Ա.Թ.ս 4.13-14):

Արդարեւ, Քրիստոսի Յարութիւնը, յաղթանակ մըն էր տարուած՝ մեղքին ու անոր ծնունդ տուող չարին դէմ:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս պիտի նշենք մեր պատմութեան թախծալի էջերուն մէջ արիւնով գրուած, Հայոց Յեղասպանութեան առաւել քան մէկուկէս միլիոն մեր նահատակները, որոնց եղեռնագործութեան 100-ամեակն է 2015 տարին: Պիտի նշենք, որովհետեւ քաջ գիտենք, որ Ապրիլ 24-ը ու մանաւանդ Տէր Զօրը, հայ ժողովուրդին համար եղան անպարագրելի ու աննկարագրելի Գողգոթա, ուր անթիւ Հայեր, իրենց արիւնով յագեցուցին ծարաւը արիւնարբու թուրք ոճրագործներուն:

Եթէ պահ մը բանանք պատմութեան էջերը եւ կարդանք Հայոց Յեղասպանութեան անմոռանալի ու աննկարագրելի պատկերները, վստահաբար մեր սիրտերը պիտի ճմլուին ու թախծութեամբ պարուրուին, Օսմանական Թուրքիոյ կատարած անմարդկային ու անագորոյն ոճիրներուն համար:

Մանուկներ կը տապալէին սուրբերու հարուածներէն, ծերունիներ փուլ կու գալին մանուկներու կիսամեռ դիակներուն վրայ եւ տաք ու անգուլթ աւազը Հայ գուարթուներուն արիւնով կը մկրտուէր: Սակայն, ո՛վ հրաշք, լոյսը կը բարձրանար աւազին վրայ լքուած արիւնածոր Հայ մարդէն, կը ծովանար նշոյլ առ նշոյլ: Արդ, նա-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, արսափեցան ազգերը երբոր տեսան էին Եդեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] պիտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հատակ Հայ մարդը կը դառնար Հայուլթեան վերածնունդն ու յարուլթիւնը աւետող փարոս: Այո՛, Ապրիլ 24-ը այլեւս Հայ ժողովուրդին համար սուգի եւ տխրութեան օր պէտք չէ ըլլայ, այլ՝ վերածնունդի պահանջատիրութեան ու աւելին, յարուլթեան ու զարթօնքի յիշատակ մը:

Տէր Զօրի անապատը՝ այսինքն Հայ ժողովուրդի Գողգոթան, որ գերեզմանը դարձաւ հազարաւոր անմեղ Հայերուն, իսկ երկինքը՝ անոնց պատանքը, այսօր բազում պատգամներ ունի փոխանցելիք մեր ժողովուրդին՝ հոգեմտաւոր զարգացումի ու պահանջատիրութեան բոլոր դաշտերէն ներս:

Ճիշդ է, որ ապրեցանք եւ ունեցանք ցաւի ու վշտի օրեր, սակայն, մեր ժողովուրդը հակառակ իր կրած բոլոր դժուարութիւններուն, հալածանքներուն ու նեղութիւններուն, վերստին յարուլթիւն առաւ ու գոյատեւեց որպէս Հայ Քրիստոնեայ:

Հայ ծնիլ կը նշանակէ մեր մէջ վառ պահել լուսաւորչեան կանթեղը եւ հայրենասիրութեան ոգին, որովհետեւ այդ է միակ մեր փրկութեան ճամբան, մեր լոյսը, մեր յոյսը եւ մանաւանդ յարուլթիւնը:

Ահա թէ ինչու, այսօր Տէր Զօրի անապատին մեռելային լուլթեան մէջ կը հնչէ Հայ բանաստեղծին՝ յաղթական ու յարուլթիւն աւետող ձայնը որ կ'ըսէ.

«Հայ ծնիլը դժբախտութիւն է,
Հայ ապրիլը յաղթանակ»

Հետեւաբար,

«Չարթի՛ք Հայ ժողովուրդ, ընդ պըւարթունս, մանկունք վերինն Սիովնի. ալէլուիա:

Չարթի՛ք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. ալէլուիա:

Չարթի՛ք փրկեալք արեամբ, եւ տուք պիառս փրկողին. ալէլուիա:

Չարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա»:

ԱՍՏՈՒԱԾԱՀՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

«Արդարեւ, գիտեմ թէ իմ Փրկարարս ողջ է, ու վերջին ժամանակը պիտի կանգնի երկրի վրայ» (Յոր 19.25):

«Քրիստոս արդարեւ մեռելներէն յարութիւն առած է, որպէս առաջին օրինակ մեռելներու յարութեան. Ինչպէս մարդով մը սկիւր առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիւր կ'առնէ մեռելներու յարութիւնը» (Ա. Կորնթացիներուն 15.20-22):

«Հիմա ձեզի ծածուկ խորհուրդ մը յայտնեմ. բոլորս չէ որ պիտի մեռնինք. բայց երբ վերջին փողը հնչէ՝ ամէնքս այ յանկարծ պիտի նորոգուինք ակնթարթի մը մէջ. որովհետեւ փողը պիտի հնչէ եւ մեռելները յարութիւն պիտի առնեն անեղծ մարմիններով, եւ մենք պիտի նորոգուինք» (Ա. Կորնթացիներուն 15.51-52):

«Եւ երբ մեր այս եղծանելի բնութիւնը անեղծ բնութեան փոխուի, եւ այս մահկանացու բնութիւնը անմահ բնութեան փոխակերպուի, այն ատեն պիտի իրականանայ գրուած մարգարէութիւնը, որ կ'ըսէ. «Մահը կ'լանուեցաւ. յաղթանակը շահուեցաւ. ո՞ր է, մահ, յաղթանակդ. ո՞ր է, մահ, քու խայթոցդ» (Ա. Կորնթացիներուն 15.54-55):

«Տեսայ նաեւ եւ լսեցի ձայնը բազմաթիւ հրեշտակներու, որոնք կանգնած էին գահին, չորս կենդանիներուն եւ երէցներուն շուրջ. անոնք տասնեակ հազարներով եւ միլիոններով էին, որոնք բարձր ձայնով կ'երգէին. մորթուած Գառնուկը արժանի է ստանալու պօրութիւն, հարստութիւն եւ իմաստութիւն, կարողութիւն ու պատիւ, փառք եւ օրհնութիւն, եւ լսեցի որ երկինքի մէջ, երկրի վրայ, երկրի ներքեւ եւ ծովու մէջ գտնուող բոլոր արարածները կ'ըսէին. Գահին վրայ նստողին, ինչպէս նաեւ Գառնուկին օրհնութիւն, պատիւ, փառք ու պօրութիւն՝ յաւիտեանս յաւիտենից» (Յայտնութիւն 5.11-13):



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՄԸ ՈՐՊԷՍ ԳԻՏՈՒԹԻՒՄ

(The Idea of Theology as a Science)

Չեղիկակ

ԱՍՏՈՒԱԾԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ GEERHARDUS VOS (1862-1949)

ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆ

ԱԶԱՏ ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՄԸ ՀՐԱՆԴ ԱԲԵՂԱՅ ԹԱՀԱՆԵԱՆ



Աստուածաբանութեան մասին ոեւէ խօսակցութիւն պէտք է յառաջանայ յստակ հասկացողութենէ մը, թէ ի՞նչ է աստուածաբանութիւնը առհասարակ: Պարզ ստուգաբանական ճիգ մը, արդէն կը յայտնէ թէ աստուածաբանութիւնը Աստուծոյ հետ ըզբաղուող գիտութիւնն է, եւ հանրագիտարանները կը հաստատեն այս տարրական բացատրութիւնը:

Միմիայն այս իմաստը տալով աստուածաբանութեան (Աստուծոյ վերաբերեալ գիտութիւն) իրաւունք կ'ունենանք զայն կոչել անջատ գիտութիւն մը:

Գիտական ճիւղեր պատահամա՞ր չեն կազմուիր, այլ՝ բաժանմունքի առարկայական

հիմնակէտէ մը: Ընդհանրապէս, գիտութիւն մը սահմանագծուած ու սահմանափակուած է իր առարկայէն եւ պէտք է ձեւաւորուի անոր շուրջ:

Նոյնպէս, գիտութիւններու ճիւղաւորումը, որ գիտութեան անսահման ծովուն մէջ եղող անջատ անդամներուն դասաւորումն է, պէտք է հետեւի այն գլխաւոր ուղիներուն (great lines), որոնցմով Աստուած ուրուագծած է տիեզերքի անհուն ասպարէզը: Վերնագիրը ծանօթութեանց որոշ հաւաքածոյի մը, գիտութեան անջատ մէկ ճիւղ մը կոչուելու արժանի կ'ըլլայ, երբ իր ակնարկած առարկան անջատուած է արդէն այդ աստուածային ուղիներու յառաջ բերուած բաժանումներէն:

Օրինակ, կը խօսինք կենսաբանական գիտութեան մասին, որովհետեւ Աստուած կենդանի արարածներուն բներեւոյթը (phenomenon) գատորոշ ստեղծած է անգործարանական գոյութիւններէն (inorganic being):

Եւ ուրեմն, այս հիմնակէտէն մեկնելով, կրնանք եզրակացնել, թէ ոեւէ գիտութիւն աւելի իրաւատիրութիւն չունի անջատ գոյութիւն մը ըլլալու, քան աստուածաբանութիւնը: Աստուծոյ՝ որպէս արարիչ, եւ մնացեալ ամէն էակի՝ որպէս արարած, միջեւ գանազանութիւնը բացարձակ է: Տիեզերքին մէջ եւ դուրս աւելի մեծ անդունդ մը չի կրնար գոյութիւն ունենալ: Եւ այսպէս, Աստուած, միակ հարազատ (վաւերական) «առարկան» կ'ըլլայ աստուածաբանութեան:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, արսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Ի յայտ կու գայ սակայն, պահուան մը խոկումով, որ աստուածաբանութիւնը միւս գիտութիւններէն միմիայն իր առարկայով չէ գանազանուած: Ան տարբեր է միւս գիտութիւններէն իր առարկային հետ ունեցած յարաբերութեան պատճառով, որուն նմանութիւնը (analogy) կարելի չէ գտնել ուրիշ տեղ: Բոլոր միւս գիտութիւններուն մէջ, մարդն է որ առաջին քայլը կ'առնէ մօտենալու առարկայական աշխարհին, գայն մանրախուզելով եւ քննելով. մէկ խօսքով, մարդն է որ կը գործարկէ բնութիւնը, որպէսզի ան յայտնէ իր ճշմարտութիւններն ու օրէնքները: Իսկ աստուածաբանութեան մէջ, ենթակային եւ առարկային միջեւ յարաբերութիւնը կողմնափոխուած է: Հոս, Աստուած է, որ առաջին քայլը կ'առնէ մարդուն մօտենալու, յայտնելու համար իր բնութիւնը: Աստուածաբանութեան մէջ «առարկան» կրաւորական չէ երբեք: Նոյնինքն ստեղծելու առաջին արարքով, մարդուն հետ յարաբերութեան մը մէջ կը մտնէ եւ

ապա, իր կամքով, այդ ստեղծուած մարդուն կը յայտնէ այն ինչ, որ ենթական պիտի չի կրնար գտնել, որովհետեւ «առարկան» անսահմանօրէն գերազանց ըլլալով, անմատչելի կը մնար իրեն: Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն իր առաջին նամակին մէջ հետեւեալը կը գրէ. «Ո՛չ ոք կրնայ գիտնալ Աստուծոյ խորհուրդները, եթէ ոչ՝ Աստուծոյ հոգին» (Ա.Կր 2.11):

Ուստի, կարելի է եզրակացնել, թէ՛ աստուածաբանութիւնը ունենալով հանդերձ գԱստուած՝ որպէս իր «առարկան», անկէ բղխող գիտութիւնը դէպի ենթական մտաւոր հարստութիւն պարգեւելու կողքին նաեւ հոգեւոր բարիք ալ կը պարգեւէ՝ անդրադարձ թէ՛ ի դէմս այս «առարկային», մարդինք կ'ըլլայ առարկան, սակայն առարկայ մը, որ կ'արժանանայ աննման յայտնութեան մը.

«Մեծ են ՏԻՐՈՋ գործերը. զանոնք սիրողները կը սերտեն զանոնք... Իմաստութեան սկզբնաքայլը ՏԻՐՈՋ երկիւղն է» (Սղ 111.2,10):

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«Ուստի Տէրը ինք նշան մը պիտի տայ ձեզի. ահա կոյսը պիտի յղանայ ու որդի մը պիտի ծնանի, եւ անոր անունը էմմանուէլ պիտի կոչէ» (Եսայի 7:14):

«Խաւարի մէջ քալող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, մահուան շուքին երկիրը բնակողներու ն վրայ լոյս ծագեցաւ» (Եսայի 9.2):

«Որովհետեւ մեզի գաւակ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ գերիշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ. անոր անունը պիտի կոչուի՝ Աքանչելի Խորհրդական, Հօր Աստուած, Յաւերժութեան Հայր, Խաղաղութեան Իշխան» (Եսայի 9.6):

«Յեսսէի բունէն շառաւիղ մը պիտի ելլէ. եւ անոր արմատէն ընձիւղ մը պիտի բուսնի. անոր վրայ պիտի հանգչի Տիրոջ հոգին, իմաստութեան ու խելացութեան հոգին, խորհուրդի ու զօրութեան հոգին, Աստուծոյ ճանաչումին եւ վախին հոգին» (Եսայի 11.1-2):

«Արդարեւ, ահա խաւարը պիտի ծածկէ երկրագունդը, ու մառախուղը՝ բնակչութիւնը. իսկ քու վրադ Տէրը պիտի ծագի, եւ անոր փառքը պիտի երեւնայ քու վրադ» (Եսայի 60.2):



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] պիտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՄԱՐԴՈՒՆ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ

Հեղինակ՝

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՔՀՆՅ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ծխատէր Քահանայ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ

«Բայց.- կ'ըսէ Տէրը.- Աղքատին տառապանքին ու չքաւորին հեծութեան դիմաց՝ հիմա պիտի ելլես, եւ պիրենք պիտի փրկես նախատողներէն»:

(Սղ 12.5)



Սաղմոսերգուին գրած այս համարին մէջ մենք կը գտնենք գլխաւոր երեք բառեր, որոնք այսօր կ'ուզենք մեր խորհրդածութեան առարկան դարձնել: Չարչարանք կամ տառապանք, աղքատություն կամ չքաւորություն, եւ փրկություն: Այս երեք կարեւոր բառերը, մեր առօրեայ կեանքին մէջ անմիջականօրէն կապ ունին եւ կամ մասնակից են մեր առօրեային հետ:

Կեանքը իր հորովոյթին մէջ լեցուն է ելեւէջներով, եւ կը նմանի ծովու ալիքներուն, որոնք երբեմն կը փոթորկին, երբեմն կը խաղաղին ծովու մակերեսը վերածելով սալահարթարի:

Ա) Չարժարաբ (Տառապաբ)

Քրիստոնեային համար իր ամբողջ կեանքը լեցունած է տառապանքով կամ չարչարանքով: Եւ այս մէկը յառաջ եկած է Քրիստոսի գլխաւոր պատուիրաններէն՝ խոնարհութիւն, համբերութիւն եւ սէր: Անկեղծ եւ հաւատացեալ քրիստոնեան, պարտաւոր է այս պատուիրանները պահելու եւ կատարելու, հաւատարիմ ըլլալու համար մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսին: Երբ մարդ խոնարհ է՝ պիտի օգտագործուի դիմացինէն, երբ համեստ է՝ դիմացինը ինքզինքը բարձր պիտի գգայ, իսկ երբ սէր ունի բոլորին հանդէպ, ներողամիտ պիտի ըլլայ: Բայց այս բոլորին յաղթանակը, գիտցնել է դիմացինին իր սխալ վարմունքը, եւ երբ այդ մէկը գիտցուի, այն ատեն յաղթական է, ոչ թէ ինքը պարծենալու համար, այլ՝ իր պարտականութիւնը Աստուծոյ հանդէպ կատարած ըլլալուն համար:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, իր կեանքի ընթացքին, մանաւանդ իր քարոզութեան շրջանին, միշտ անդրադարձաւ այս պատուիրաններուն, ու իր կեանքի օրինակովը ցոյց տուաւ այս ամէնը իր հետեւորդներուն: Առնենք Աւետարանը եւ բանանք Մատթէոս Աւետարանի 16-րդ գլխուն 22-րդ համարը, ուր Յիսուս կը խօսի իր չարչարանքներուն մասին: Ան իր աշակերտներուն կ'ըսէ. «Ինք պէտք է որ Երուսաղէմ երթայ, ուր շատ պիտի չարչարուի աւագ քահանաներէն, օրէնքի ուսուցիչներէն եւ երէցներէն, պէտք է որ սպաննուի, եւ երրորդ օրը յարուսուի առնէ»:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Նոյնը կը կրկնուի Մարկոս Աւետարանի 8-րդ գլխուն 31-րդ համարին եւ Ղուկասու Աւետարանի 9-րդ գլխուն 22-րդ համարին մէջ:

Յիսուս իր չարչարանքներուն յաջորդող քառասուն օրերուն ընթացքին, քանիցս երեցաւ անոնց (աշակերտներուն), բազմաթիւ կերպերով ցոյց տալով՝ թէ ինք այլեւս ողջ է, եւ խօսեցաւ Աստուծոյ արքայութեան մասին (Գրծ 1-3):

Եթէ կարդանք Պօղոս Առաքեալի Բ. Կորնթացիներուն գրուած նամակը, հոն յրատակօրէն կը թելադրուի մեզի թէ.- «Որովհետեւ, որքան շատ բաժնեկից ըլլանք Քրիստոսի չարչարանքներուն, այնքան աւելի մեծ կ'ըլլայ իր օգնութիւնն ու մխիթարութիւնը մեզի: Մենք նեղութեանց կ'ենթարկուինք՝ ձեզի օգնելու եւ Աստուծոյ փրկութիւնը ձեզի բերելու համար. եւ եթէ Աստուած կ'օգնէ մեզի՝ կրկին ձեզի օգնելու համար է, որպէսզի մեր օրինակով սորվիք, թէ Աստուած ձեզ ալ պիտի պօրացնէ՝ որ համբերութեամբ կարենաք տանիլ այն չարչարանքները, որ մենք հիմա կը կրենք: Ուստի ձեր վրայ հաստատուն յոյս ունինք, գիտնալով որ՝ քանի մեր չարչարանքներուն մասնակից էք՝ մեր ունեցած մխիթարութեան ալ մասնակից պիտի ըլլաք» (Բ. Կոր 1.5-7):

Պօղոս Առաքեալ, որուն ծառայութիւնը ի նպաստ Եկեղեցիին եղած է այսպէս կը գրէ.- «Եւ հիմա, ուրախ եմ չարչարանքներուն մէջ, որ ձեր սիրոյն կը կրեմ, որովհետեւ Քրիստոսի կրած նեղութիւններուն պակասը իմ մարմինիս մէջ կ'ամբողջացնեմ՝ անոր մարմինին համար, որ եկեղեցին է» (Կոր 1.24): Պօղոս Առաքեալ իր կրած չարչարանքներուն մասին կը խօսի, որո՞ւ համար չարչարուեցաւ, որո՞ւ համար բանտարկուեցաւ, ամէնը Քրիստոսի համար էր եւ անոր միջոցով Քրիստոսի հաստատած Եկեղեցիին համար: Այսօր, այդ նեղութիւնները չունինք, մեր բոլորին առջեւ խաղաղ է կեանքը, լեցուն բարիքներով, եւ տակաւին մեզմէ շատեր կը գլխան իրենց նուազագոյն պարտականութիւնը կատարելու Եկեղեցու հանդէպ:

Բ) Աղբա՛ս (Չբաբոր)

Աղբատութիւնն ու չբաւորութիւնը բրնական երեւոյթներ են կեանքի մէջ, բայց ի՞նչ կը նշանակէ աղբատ. դրամ չունենա՞լ, լաւ տուն չունենա՞լ, լաւ պայմաններով չապրի՞լ: Այս ամէնը աղբատութիւն չեն. ասոնք աղբատութեան կը վերածուին՝ երբ մարդ կորսնցուցած է իր հաւատքը: Աշխարհի ամէնէն մեծ հարուստը այն է, որ գոհ է իր վիճակով, եւ Աստուծոյ փառք կու տայ իր վիճակին համար: Այս աշխարհը մեր բոլորին համար է. բայց արդեօք հարուստն ու աղբատը ի՞նչ տարբերութեամբ պիտի մեկնին այս աշխարհէն: Ըսել կ'ուզեմ, ո՞վ աւելորդ բան մը պիտի տանի իր հետ. ինչ որ կ'ուզես հետդ տանիլ, գայն պէտք է ձգես քու յաջորդներուն, որ է բարի անուն մը: Յիսուս, իր խօսած երանութիւններուն մէջ կը յիշէ. «Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը»: Նոյնը կը տեսնենք Ղուկասի Աւետարանին մէջ առանց «հոգի» բառը գործածելով (Մտ 5.3, Ղկ 6.20): Ուրեմն, երանի անոնց որ հոգիով աղբատ են, քանի անոնք երկնքի արքայութիւնը պիտի ժառանգեն:

Օրմանեան Սրբազան հետեւեալ ձեւով կը բացատրէ մեզի այս հատուածը. «Յիսուս կ'ուզէ իր աշակերտները վստահեցնել թէ ինք բարոյական եւ առաքինական առաւելութիւններ կը փնտռէ. եւ ոչ թէ արտաքին եւ աշխարհային առաւելութիւններ»: Այդ մեծ ճշմարտութիւնը կը բացատրէ երանի՛ կարգալով անոնց, որոնք ներքին առաւելութիւններ ունին, եւ վա՛յ կարգալով անոնց, որոնք լոկ արտաքին առաւելութիւններ ունին: Ներքին առաւելութիւններ եւ երանիին արժանացողներն են հոգիով աղբատները, սգաւորները, հեզ եղողները, արդարութիւն սիրողները, ողորմածները, ուղիղ սիրտ ունեցողները, խաղաղարարները, եւ արդարութեան համար հալածուածները:

Մատթէոս Աւետարանի 5-րդ գլխուն 12-րդ համարին մէջ կը կարդանք. «Յնծացէ՛ք եւ ուրախացէ՛ք, որովհետեւ ձեր վարձատ-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

որութիւնը մեծ է երկինքի մէջ: Յիշեցէք որ նոյն ձեւով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ապրող մարգարէներն ալ»:

Իսկ երբ մեծահարուստ երիտասարդ մը մօտեցաւ Յիսուսի ըսելու թէ՛ ինչպէ՞ս կրնայ յաւիտենական կեանքը ժառանգել՝ Յիսուս ըսաւ անոր. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ ինծի» (Մտ 19-21, Մր 10-21):

Գ) ՓՐԿՈՒԹԻՒՆ

Այս բոլորէն ետքը, կայ հատուցումը կամ փրկութիւնը:

Փրկութեան առաջին օրինակը կը կարդանք Զաքարիայի օրհնութեանը մէջ. Ան Սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարէացաւ ըսելով. «Եւ դո՛ւն, պաւակս, Բարձրեայի մարգարէն պիտի կոչուիս եւ Տիրոջ առջեւէն պիտի քալես՝ անոր ճամբան պատրաստելու, որպէսզի գիտցնես իր ժողովուրդին, թէ պիտի փրկուին անոնք» (ՂԿ 1.68-69,77):

Օրինակ, Յիսուսի տաճար ընծայումը (ՂԿ 2.22-30): «Մովսէսին հաստատած օրէնքին համաձայն, Յովսէփն ու Մարիամ նորածին Յիսուսը Երուսաղէմ տարին Տիրոջ ընծայելու համար... այդ ժամանակ Երուսաղէմի մէջ Սիմոն անունով մարդ մը կ'ապրէր: Սիմոն արդար եւ աստուածավախ էր եւ Իսրայէլի փրկութեան կը սպա-

սէր: Սուրբ Հոգին իրեն հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ Օծեալը չտեսած պիտի չմեռնէր: Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անիկա տաճար գնաց: Երբ Յովսէփն ու Մարիամը մանուկ Յիսուսը տաճար բերին, որպէսզի կատարեն այն ինչ որ օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը առաւ փոքրիկը եւ գոհաբանեց զԱստուած, ըսելով. այժմ, ո՛վ Տէր, համաձայն քու խոստումիդ՝ ձգէ՛ որ ծառայ խաղաղութեամբ մեռնի. որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը» (ՂԿ 2-29):

Մարդու փրկութիւնը Աւետարանի գորութեամբ է, որ կը կատարուի, առնենք Պօղոս առաքեալի Հռոմայեցիներուն Ա. գլխուն 16-17 համարները, որ կ'ըսէ. «Ամօթ չեմ համարեր Աւետարանը: Ընդհակառակը, անիկա Աստուծոյ զօրութիւնն է՝ որ կը փրկէ ամէն հաւատացող: Արդարը իր հաւատքով պիտի փրկուի» **Իսկ Ա. Կորնթացիներուն Ա. գլխուն 30-31 համարներուն մէջ կը կարդանք.** «Աստուած ինքն էր որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը, որպէսզի, ինչպէս մարգարէութեան մէջ գրուած է. ով որ կը պարծենայ՝ թող Տիրոջնով պարծենայ» **Ամէն:**

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

Սիրելի Մայրեր եւ Հայրեր.

Տան մէջ **ՔԱՂՅՐ** եղէք: **Առեւտուրի մէջ ՈՒՂՂԱՄԻՏ** եղէք:

Սիրելի Երիտասարդներ.

Ընկերութեան մէջ **ՔԱՂԱՔԱՎԱՐ** եղէք: **Աշխատանքի մէջ ԿԱՏԱՐԵԱԼ** եղէք:

Մեծեր եւ Փոքրեր.

Խաղի մէջ **ԱՆԱԶԱՌ** եղէք: **Յաջողներուն հանդէպ ԽՆԴԱԿԻՑ** եղէք:

Մեծահարուստներ.

Դժբախտներու հանդէպ **ԿԱՐԵԿԻՑ** եղէք: **Տկարներուն ՕԳՆԵՑԻՔ:**

Հաւատացեալներ.

Չարութեան դիմաց ԸՆԴԴԻՄԱՑԻՔ: Ապաշխարողներուն **ՆԵՐՈՂԱՄԻՏ** եղէք: **Բոլորը ԱՍՏՈՒԾՈՅ** հանդէպ՝ **ՅԱՐԳԱՆՔ, ՍԷՐ** եւ **ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ** ունեցէք:



Զմայեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՒՄԸ

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ

Զօն

Գերշ. Տ. Հասան Արք. Սարգիսեանին, որ «զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

«...ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն»:
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ



Հայ աղօթական ներշնչումին խորագոյն փորձառութիւնն է Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» հատորը կամ ժողովուրդին ծանօթ անունով՝ «Նարեկ»ը: Անիկա գրուած է իբրեւ աղերսանք առ Աստուած, որ «աղօթող»ին խորտակուած «մարմին»ը վերակազմուի եւ «հոգի»ն ողջըննայ: «Աղօթող»ը չակերտեցի՝ որովհետեւ Նարեկացիի անհատական «մարմին»ին եւ «հոգի»ին չի վերաբերիր, այլ՝ համայն մարդոց: Ու «մարմին»ը եւ «հոգի»ն չակերտեցի՝ որովհետեւ նշում չէ գլուխ-ձեռք-ոտքով Փիզիքական մարմինին եւ հոգեբանական աշխարհին, այլ՝ մարդկային ամբողջ գոյութենական եւ հոգեւոր իրականութեան:

Նարեկի 25-րդ գլուխին մէջ է, որ կը կարդանք «մարմին»ի եւ «հոգի»ի խորտակման մասին:

Գրիգոր Նարեկացի գրած է. «Ծովն է ամէնէն անելի նման իմ կեանքիս ծփանքներուն. անթիւ կոհակներու յարձակումներէն հոգիս կը տատանի այս աշխարհի վրայ, մարմնիս շինուածքով ինչպէս նաւի մը մէջ: Այն նմանութիւնը զոր Եսայի մարգարէն պարսիկ հրոսակներուն ձեռքով Երուսաղէմի եւ Սամարիոյ յանկարծադէպ կործանումը նկարագրելու համար գործածեց, սխալ պիտի չըլլար կըրկնել իմ հոգիիս խորտակումը բացատրելու համար: Վասն զի մինչդեռ ես անկասկած վստահութեամբ անհոգ կը չուէի, նաւահանգիստին աննշան հեռաւորութեան պատճառաւ հապիւ մտքես անցընելով արկածի պատահականութիւն մը, եւ կարծելով, թէ ա՛յլ հասած եմ, եւ ահա՛ ամառուան մէջ ձմեռն էր որ բքաբեր հովերով հասաւ եւ երրադարձ ալիքներու ընդհարումով ամբոխեց հանդարտութիւնը: Ու նաւը վայրենի ալիքներու բաղխումէն խորտակւեցաւ. թիակներու կազմը քայքայուեցաւ. բարձր կայմը իր կայքէն խլուեցաւ. առագաստին թռչարանը անկարկատելի ծրւէններով պատռուեցաւ. շէնքին աղուորութիւնը անշքացաւ եւայլն» (ԻԵ. Բ): Ապա հարց կու տայ թէ՛ «պիտի ըլլա՞յ որ մարմնիս բազմախորտակ տապանակը նորոգուած տեսնեմ նորէն. պիտի ըլլա՞յ որ ողբալի հոգիիս փշրուած նաւը ողջընցած տեսնեմ» (Նոյն, գ): Եւ հոսկ կը խոստովանի «հաստատուն յոյս»ը՝ թէ՛ Ս.



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հոգին, որ Հօր եւ Որդիին համագոյակիցն է, «կեանք եւ երանութիւն քառութեամբ մէկտեղ» կրնա՛յ շնորհել իրեն (նոյն, դ), ու ինք կը վերակազմուի եւ կը վերակենդանանայ:

Կեանքը յաճախ նմանցուցած են ծովին: Բազմաթիւ են օրինակները: Յիշեմ միայն մէկը: Մեսրոպ Մաշտոցի Օրհնութիւն Ապաշխարութեան ԱԿ-ը կը սկսի այս բառերով. «Ծով կենցաղոյս հանապապ պիս ալեկոծէ»: Ի տարբերութիւն Մաշտոցեան պատկերին, Նարեկացիի պատկերը մեզի կը բերէ պարզ միտքը, թէ կեանքի ծովը միշտ չէ, որ ալիքներով կը հարուածէ. անիկա ունի նաեւ «ամառ»նային հանդարտութեան ժամանակներ. ժամանակներ՝ երբ հաճոյքներուն տուած ջերմութիւնը ամբողջ մարմինը եւ հոգին կը գրաւէ: Մինչ, սակայն, բնական ծովը ապակիի պէս անդորր ժամանակներ կ'ունենայ, բայց կեանքը՝ քիչ անգամ: Այստեղ նկատի չունիմ այն սակաւաթիւ մարդիկը, որոնք ի բնէ գրեթէ միշտ խաղաղ են, եւ ոչ ալ անոնք՝ որոնք հոգեւոր անդորրութեան փորձառութիւնը կ'ընեն յաճախ կամ պարբերաբար:

Արդ, «ծովն է ամէնէն աւելի նման» աղօթողի կեանքին, որ լի է ծփանքներով: Իր պատկերին մէջ, Նարեկացին թեթեւ ծփանքներուն չէ որ կ'ակնարկէ, այլ անոնց՝ որոնք կը յիշեցնեն պարսիկ հրոսակներուն արշաւանքները Երուսաղէմի եւ Սամարիոյ վրայ: Պարսիկ հրոսակները խորհրդանշանն են մեղքերուն, իսկ Երուսաղէմն ու Սամարիան՝ աղօթողի հոգիին ու մարմինին, որ է ըսել՝ թէ աղօթողը իր վրան խուժող մեղքերուն պատճառով նախ բաժնուած է երկուքի, նման Իսրայէլի երկու թագաւորութիւններուն. հարաւի եւ հիւսիսի թագաւորութեան: Եւ ինչպէս Յիսուս կ'ըսէ. «Որեւէ թագաւորութիւն որ ինքն իր մէջ բաժան-բաժան կ'ըլլայ՝ կը կործանի» (Մտ 12.25):

(Պատմական բացատրութիւն մը՝ որպէսզի շփոթութիւն մը բառնամ: «Պարսիկ հրոսակներ»ով հասկցած է ասուրական եւ բաբելական գօրքերը, որոնք Ն.Ք. 8-6-րդ դարերուն հասնելով միջերկրականեան ափերը՝ յաջորդաբար կործանեցին հիւսիսի եւ հարաւի թագաւորութիւնները: Ինչպէս նրչեցի, Նարեկացի այն արշաւանքները դիտած է իրեւ խորհրդանշաններ մեղքերու խուժումներուն):

«...ես անկասկած վստահութեամբ անհոգ կը չուէի», կ'ըսէ գրաբարը՝ «չուէի ես յանհոգութեան անտարակոյսն վստահութեամբ»: Անշուշտ «անհոգ» չուելուն, եւ «անհոգութեան մէջ» չուելուն միջեւ տարբերութիւն կայ: Գուշակեան Սրբազանի աշխարհաբար թարգմանութիւնը՝ չուէ՛լը կը բնորոշէ, մինչդեռ բնագիրը՝ ցոյց կուտայ այն «տարածութիւն»ը՝ որուն մէջ ընթացքն է չուելուն: Այն «տարածութիւն»ը անհոգութիւնն է:

Ինչո՞ւ անհոգութեան մէջ էր «ես»ը: Որովհետեւ՝ նախ «ամառ» էր, եւ երկրորդ՝ «նաւահանգիստ»ին շատ մօտեցած:

Ամրան ծովը հանդարտ կ'ըլլայ, եւ անըսպասելի է՝ որ ձմեռը «բքաբեր հովեր»ով հասնի ու ալիքները ամբոխեն հանդարտութիւնը: Բնութեան մէջ, գիտենք, որ անսպասելին կը պատահի սակայն: Հոգեւոր կեանքին մէջ ալ անսպասելին կը պատահի: Ահա ա՛յս է, որ կ'ըսէ Նարեկացին: Ո՛չ ոք թող ստոյգ ըլլայ, թէ ինք «նաւահանգիստ» հասած է, այսինքն՝ բնակութեան ուր կը գրտնրի Տէրը: Հոգեւոր որեւէ փորձառութիւն՝ նաւահանգիստին հասած ըլլալու փորձառութիւն մը չէ, այլ փորձառութիւն մըն է ծովին մէջ, կեանքի՛ ծովին: Եւ այն կեանքը որքա՛ն ալ մաքրասրբուած՝ տակաւին ազատ չէ ու չի կրնար ազատ ըլլալ մեղքերու ալիքներէն:

Այնքա՛ն բազում են իրենք գիրենք նաւահանգիստին մէջ տեսնողները: Ի՛նչ իրատեսութիւն է մեղաւորին համար Երուսա-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին Եդեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

դէմի եւ Սամարիոյ անուներուն գործածութիւնը: Մեղաւորը Երուսաղէմ է եւ Սամարիա: Որպէս այնպիսին՝ ան պաշարի մէջ է: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ես մարմնեղէն եմ՝ մեղքին ստրուկ դարձած: Ինչ որ կ'ընեմ՝ չեմ հասկնար, թէ ինչո՞ւ կ'ընեմ...: Բարին կամենալը ձեռքս է, բայց չեմ յաջողիր պայն կատարել: Եւ այսպէս, բարին՝ որ կը կամենամ, չեմ ըներ, այլ կ'ընեմ չարը՝ որ չեմ ուզեր» (Հռ. 7.14-15, 18-19): Ահա այսպէս ինքնիրմէջ բաժնուած է մարդ էակը. եւ ինքնաբաժանեալ մարդիկը կը կազմեն բիւրաբեկոր մարդկութիւնը:

«Անհոգություն» որուն մասին կը խօսի Նարեկացին՝ միայն անտարբերութիւնը չէ, այլեւ մոռացումն է մեր մեղաւորութեան: Խորտակումը՝ մոռացումին ապագան չէ.

խորտակումը՝ մոռացումին ներկան է, կամ՝ ապագան ներկային մէջ:

Եւ հակառակ այսքան յուսահատականութեան, հաւատաւոր՝ կամ ինչպէս Նարեկացին կ'ըսէ՝ «հաստատուն յոյս»ը (Բան Իե. դ) Ս. Հոգիին շնորհիւ կը սպասէ Տիրոջ վերակազմող ձեռքն ու վերակենդանացնող ձայնը: Անիկա է, որ կեանքը «հնարաւոր» կ'ընէ (Բան Ա. բ) մինչեւ վախճանական բարերարութեան օրը: Այն յոյսը անգործ սպասում մը չէ սակայն, այլ երկնատուր զօրութիւն մըն է ըստ կարելիութեան վերակազմող եւ վերակենդանացնող... նման գիրքին՝ որ «Մատեան Ողբերգութեան» կը կոչուի:

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԷՆ...

«Մեծապէս խայտա՛, ով Սիրոնի աղջիկ, ցնծութեամբ գոչէ, ով Երուսաղէմի աղջիկ. Ահա Թագաւորդ քեզի կու գայ. Ան արդար է, ու փրկիչ. հեզ է, եւ իշու վրայ հեծած, իշու ձագի՛՝ աւանակի վրայ» (Չաքարիա 9.9):

* * *

«Ան հովիւի պէս իր հօտը պիտի արածէ. գառնուկները իր բազուկով պիտի հաւաքէ, գանոնք իր գիրկին մէջ պիտի կրէ, եւ կաթնտուները կամաց պիտի վարէ» (Եսայի 40.11):

* * *

«Արդարեւ, անիկա անոր առջեւ մատաղատունկի պէս աճեցաւ, անջրդի հողէ ելլող ծիրի պէս. անիկա ոչ կերպարանք ունէր, ոչ ալ վայելչութիւն, որ անոր նայէինք. տեսք չունէր որ անկէ ախորժէինք. անիկա մարդոցմէ արհամարհուեցաւ ու երեսէ ձգուեցաւ. կոտտանքի մարդ եղաւ, եւ կսկիծներու տեղեակ. անոր նմանեցաւ որմէ երես կը ծածկեն. արհամարհուեցաւ, ու համարում չունեցանք անոր հանդէպ:

Իրապէս անիկա մեր կսկիծները կրեց, եւ մեր կոտտանքները ստանձնեց. մենք զինք պատժուած, Աստուծոմէ գարնուած ու դժբախտացած համարեցինք. բայց անիկա մեր յանցանքներուն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ճգմուեցաւ. մեզի խաղաղութիւն տուող պատիժը անոր վրայ եղաւ, եւ իր վէրքերով մենք բուժուեցանք. բոլորս ոչխարներու պէս մոյրեցանք, մեզմէ իւրաքանչիւրը իր ճամբային հետեւեցաւ, ուստի Տէրը մեր բոլորին անօրէնութիւնը անոր վրայ ձգեց» (Եսայի 53.2-6):



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՄԱՐԴԵՂԱՑՈՒՄ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԾԱԿԻՆ ՄԱՐԴԵՂԱՅՈՒՄ ՄՈՒԽԸ . **Նիաֆة الأنبا متاؤس**՝ **Հեղինակ՝**
 ՄԱՐԴԵՂԱՅՈՒՄ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ. **الراهب القس بطرس البراموسي**՝ **Հեղինակ՝**
 ԲԱՆԻՆ ՄԱՐԴԱՆՅՈՒՄ. **القديس اثاناسيوس بابا الاسكندرية**՝ **Հեղինակ՝**

ԹԱՐԳԱՆԱՌԹԻՒՄ՝ ԳԱԲՐԻԷԼ ՔՀՆՅ. ԳԱՄԱՅԵԱՆ

«Անճերքեղիօրէն մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը, որովհետեւ Աստուած մարմինով երեւցաւ»:

(Ա.ԹԵՍ 3:16)



Գ) Թէ Աստուած՝ փառքին Տէրը, մեզ սիրելուն համար է որ Իր փառքին իջնելով՝ ծառայի կերպար զգեցաւ. «Կամաւորաբար ինքպինքը այդ պատիւէն մերկացուց՝ ծառայական մեր բնութիւնը իր վրայ առնելով. եւ մարդոց պէս եղաւ ու մարդկային կերպարանքով ճանչցուեցաւ» (Փլլ 2.7): «Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ»(ՅՎ 1.14)

ԲԱՆՆ ԱՍՏՈՒԾ

Բանն Աստուած՝ Որդին, մարմնացաւ եւ մեր միջեւ բնակեցաւ: Ոմանք կրնան հարցրնել թէ Աստուած եղափոխուեցա՞ւ: Երբե՞ք:

Բանն Աստուած, յաւիտենական է, անշարժ է, անփոփոխելի է եւ անեղափոխուելի: Սակայն, ժամանակի լրումին մարմին առաւ, որպէսզի զգա՛լ լապէս յայտնուի մեզի եւ մենք մեր ականջներով լսենք, մեր աչքերով տեսնենք ու մեր ձեռքերով շօշափենք Ձինք: Ահա այս պատճառով Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ. «Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր»(Ա.ՅՎ 1.1):

Որդին Աստուած ո՛չ միայն մարմնացաւ, այլ նաեւ՝ մարդացաւ, այսինքն ո՛չ միայն մարմին զգեցաւ, այլ՝ նաեւ մարդկային բնութիւն:

Աստուծոյ մարդեղացումով եւ երկրի էջքով, երկինքը չպարպուեցաւ Իր Սուրբ ներ-

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ «ԱՍՏՈՒԾ ՄԱՐՄՆԱՅԱՒ»

Ա) Կը նշանակէ թէ Աստուած երկնքի ու երկրի թագաւորը, մարդկային մարմին ու մարդկային բնութիւն առաւ, եւ մեր մէջ յայտնուեցաւ:

Բ) Թէ անտեսանելի Աստուածը, մարդկային մարմին առնելով՝ տեսանելի եղաւ:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [իին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

կայուլթեանէն, որովհետեւ Տէրը ամէնուրեք է, երկինքն ու երկիրը կը լեցնէ:

Աստուծոյ մարդեղացումը, թերեւս մարդկային ըմբռնողութեանէն աւելի վեր է, սակայն երբ գայն Աստուծոյ կարողութեան շրջագիծին մէջ տեսնենք, դժուար կամ տարօրինակ պէտք չէ թուի մեզի: Ինչո՞ւ: Որովհետեւ Ամէնակարող, Ամէնագոր եւ երկինքի ու երկրի Արարիչ՝ Աստուծոյ համար անկարելի չէ, երբե՛ք: «Անկարելի» բառը մի միայն մարդոց յատուկ է, սակայն՝ ո՛չ Աստուծոյ: Աստուծոյ համար ամէն ինչ կարելի է:

Ամէն ինչին տէրը, ոեւէ բաժնի ալ տէրն է, եւ շատին տէրը, քիչին ալ տէրն է: Խօսինք օրինակներով՝

Ա) Թագաւոր մը, բանուորներուն հագուստը հագուելով՝ արդեօք չի՞ կրնար բանուորներուն հետ նստիլ:

Բ) Ուսուցիչ մը, եթէ ուզէ, չի՞ կրնար աշակերտներուն մակարդակին իջնել եւ խօսիլ իրենց հետ:

Գ) Բարձրաստիճան պատասխանատու մարդ մը, արդեօք չի՞ կրնար խոնարհիլ եւ պարզ մարդոց հետ յարաբերիլ: Վերեւ նըշլաժ բոլոր տիպարները կարողութիւն ունին այդ բոլոր արարքները կատարելու, որովհետեւ իրենց կարողութեան սահմանին մէջն են: Այս բոլորը լսելէ ետք, եկէք մենք մեզի հարցնենք թէ՛

ԱՍՏՈՒԾԻ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՒ ՄԱՐՄՆԱՆԱԿՈՒ ԿԱՄ ՈՉ

Աստուած անշուշտ թէ կարողութիւն ունի մարմնանալու, որովհետեւ ամէնակարող է մեր Տէր Աստուածը: Ամէն ինչ իրեն կը պատկանի, իսկ եթէ ըսենք թէ կարողութիւն չունի մարմնանալու, սահմանափակած կ'ըլլանք Աստուծոյ անսահման գործութիւնն ու կարողութիւնը եւ տկարութիւն վերագրած կ'ըլլանք Բարձրեալին, քաւ լիցի: Եկէք մենք մեզի հարց տանք, թէ՛ երկինքի ու երկրի Արարիչը չի՞ կրնար մարմնանալ...: Մտածենք...:

ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ՄԱՐՄՆԱՅՈՒՄ

Մարմնացում կը նշանակէ, որ անմարմին եւ աներեւոյթ կերպով գոյութիւն ունեցող բան մը, մարմինով մը երեւան գայ՝ յայտնուի: Օրինակի համար, մտածումը, գաղափարը, որ աներեւոյթ է ըստ էութեան, գործով մը, գրութեամբ մը եւ կամ գրծագրութեամբ մը կը մարմնանայ ու կը յայտնուի մարդոց առջեւ:

ԱՍՏՈՒԾԻ ՅԱՒԻՏԵԱՆՆԵՐԷՆ ԳՈՅ Է Ո՛Չ ՄԿԻԶԲ ՈՒՆԻ ՈՉ ԱՆ ՎԱԽՃԱՆ

Անսկիզբ ու անվախճան, սակայն անմարմին մեր Տէրը կը լեցնէ ամբողջ տիեզերքը: Ժամանակի լրումին, մարմին առաւ եւ մեր մէջ բնակեցաւ: Մարմնացաւ, որպէսզի տեսնենք Ձինք, որովհետեւ եթէ չմարմնանար, մեզմէ հեռու ու մեր ըմբռնողութեան անհասանելի իրականութիւն մը պիտի ըլլար պարզապէս:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, ամբողջ աշխարհին մէջ, միակն է որ մարդացաւ, որովհետեւ միակն է դարձեալ, որ գոյ էր, անմարմին կերպով, ծնունդէն իսկ առաջ, ահա այս իրողութիւնն է որ կը բացատրէ թէ՛

ԻՆՉՈՒՒ ԱՌԱՆՅ ՀՕՐ ԾՆԱԲ

Աշխարհի վրայ կենդանութիւն ունեցող բոլոր մարմինները՝ մարդ, անասուն թէ բոյս ծնելու համար պէտք ունին թէ՛ հօր, թէ՛ ալ՝ մօր: Հայրը գոյութիւնը կու տայ, իսկ մայրը՝ մարմինը: Մարդուն եւ անասունին պարագան յայտնի է մեզի: Բոյսի պարագան հետեւեալն է, հոնտը հայրն է, իսկ հողը՝ մայրը: Ուրեմն այն եզրակացութեան կու գանք, թէ՛ առանց հօր եւ մօր մը գոյութեան, կարելի չէ մարմնի մը ծնունդ տալ, երբե՛ք:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, Միակն է որ առանց հօր ծնաւ: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, ինչպէս վերեւ ըսինք, գոյ էր ծնունդէն իսկ առաջ, ուրեմն իրեն գոյութիւն տուող հօր մը պէտք չուներ, այլ՝ միմիայն մօր, որ իրեն մարմին տար:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ իսկապէս զարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Կրնանք հարցնել թէ կարելի՞ էր արդեօք, որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս երկինքէն մարմին մը բերէր հետը եւ պէտք չունենար մարդկային մարմնին: Այո, Տիրոջ համար ամէն ինչ կարելի է: Սակայն, եթէ մարդկային մարմնէն տարբեր մարմին մը բերէր, մեր մարդկային բնութենէն տարբեր բնութիւն մը պիտի կրէր, որով պիտի չկարողանար մեզ՝ մարդիկս փրկել խաչին վրայ, այլ խօսքով՝ մարդու որդի պիտի չըլլար, այլ՝ տարբեր բան մը:

Մեղաւոր մարդը կը փրկուի միմիայն մարդուն միջոցաւ, եւ փրկողը փրկուողին բնութիւնը պէտք է ունենայ:

ԲԱՆՆ ԱՍՏՈՒԾ ԻՆՉՈՒՒ ՄԱՐԴԱՅԱԲ

Որդիին մարդեղացումը ըստ ինքեան նրպատակ չէր, այլ՝ միջոց մըն էր հետեւեալ վսեմ նպատակները իրագործելու.

Ա) Փրկել մարդկութիւնը:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս մարդացաւ եւ իր մարմինը գոհեց մեղաւոր մարդկութիւնը փրկելու համար:

Բ) Վերանորոգել նեխած մարդկութիւնը: Վերաստեղծել մարդկութիւնը:

Մարդեղացած Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ, որպէսզի միանայ մեր մեղաւոր բնութեան, եւ այդ միացումով յարուցանէ մեղաւոր բնութիւնը իր տկարութենէն եւ մաքրէ՝ իր նեխածութենէն:

Աստուած անմահ է բնութեամբ, այս պատճառով, մեր մարմիններուն նման մահուան դատապարտուող մարմին մը առաւ՝ մահը ընդունեց մեր բոլորին փրկութեան համար:

Աստուած մարդեղացաւ մեր փրկութեան համար, միմիայն:

ԻՆՉՈՒՒ Կ՝ՈՒԶԷ ՓՐԿԵԼ ՄԱՐԴԿՈՒԹԻԲՆԸ

Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին ու նմանութեան համաձայն եւ ըսաւ. «Մեր պատկերին ու նմանութեանը պէս մարդ ընենք. ան ծովու ձուկերուն ու եր-

կինքի թռչուններուն եւ անասուններուն ու բոլոր երկրի ու սողացող բոլոր սողուններուն վրայ թող իշխէ»(Ծն 1-26):

Աստուած սկսաւ մտածելու իր պատկերին ու նմանութեան համաձայն ստեղծելի մարդուն մասին եւ «Տէր Աստուած գետնին հողէն շինեց մարդը եւ անոր ռընգունքներէն կենդանութեան շունչ փչեց ու մարդը կենդանի հոգի եղաւ»(Ծն 2-7): Տէրը իր Սուրբ շունչին փչումով մարդուն մէջ հաստատեց ու կնքեց իր պատկերն ու նմանութիւնը:

Աստուած չուզեց որ Ադամը առանձին մնայ «Աղէկ չէ որ Ադամ առանձին միակ ըլլայ, անոր օգնական մը ընեմ իրեն յարմար»(Ծն 2-18):

«Հիմա ասիկա ոսկորէս ոսկոր ու մարմինէս մարմին է. ասիկա կին կոչուի. քանզի իր այրէն առնուեցաւ»(Ծն 2-23): Աստուած Ադամին բոլոր ստեղծագործութեան վրայ իշխանութիւն տուաւ, սակայն Ադամ, իր անհնազանդութեան պատճառով՝ զրկուեցաւ Աստուծոյ ներկայութենէն:

Աստուած կ'ըսէ Ադամին.

- Ով սիրեցեալ Ադամ, դուն հողէն ստեղծուեցար. եւ հող կրնայի ձգել քեզի: Սակայն, Ես ուզեցի ստեղծել քեզ, որ վայելես գոյութիւնը, ըլլալը: Անասունները անբան ու բնապղաւոր ըստեղծեցի, սակայն այնքան սիրեցի քեզ, որ Իմ խելքէս (իմաստութենէս), ապաստութենէս ու կամքէս տուի քեզի:

Ադամի եւ Եւայի անկումէն ետք, Աստուած իրենց կաշիէ հանդերձներ շինեց, սա կը նշանակէ որ «կենդանի մորթեց», «արիւն» ելաւ: Մեղաւորին փոխարէնը գոհ մատուցանելու գաղափարը այն ատենէն ի վեր սահմանուեցաւ:

Աստուած մեղաւոր եւ անկեալ մարդուն փրկութեան մասին մտածեց... ինչպէ՞ս եւ ե՞րբ... Աստուածային արդարութիւնը վտարեց Ադամը Աստուծոյ Սուրբ ներկայութենէն եւ մարդը յաւիտենական մահուան դատապարտուեցաւ:



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [իին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Որքա՞ն մեծ էր Ադամին մեղքը:

Ադամին մեղքը անսահման էր: Ինչո՞ւ: Որովհետեւ մեղքը, մեղաւորին անձնաւորութեան համեմատ չէ որ կը չափուի, այլ անոր՝ որո՛ւն դէմ մեղքը գործուած է: Օրինակ՝ եթէ մարդ մը սխալի իր գաւակին հանդէպ, շատ փոքր կ'երեւի այդ սխալը եւ ներողութեամբ մը սխալը կը մոռցուի: Իսկ եթէ նոյն սխալը գործէ ընկերոջը հանդէպ, այդ սխալը ջնջելը եւ կամ հաշտուիլը, դժուար պիտի ըլլայ: Կամ եթէ գործէ գործատէրին հանդէպ, շատ աւելի դժուար է լուծելը կամ հաշտուիլը: Այլ երեւակայենք թէ ի՛նչ պիտի պատահի, եթէ այդ սխալը գործէ երկրի մը նախագահին հանդէպ: Յանցաւորը նոյնիսկ մահուան կրնայ դատապարտուիլ:

Ըստ մեր հասկացողութեան, Ադամին մեղքը մահացու մեղք մը չէր: Սակայն եկէք Ադամի մեղքին մասին մտածենք, տեսնելու համար թէ մահացո՞ւ էր եւ որքա՞ն մեծ էր անոր գործած մեղքը:

Ադամին գործած մեղքը բարդ եւ անսահման մեղք մըն էր, որովհետեւ անսահման Աստուծոյ դէմ գործուած էր: Մեղքը բոլոր մարդիկը ժառանգեցին: Քանի որ մեղքը գործուեցաւ Անսահման Աստուծոյ դէմ, անսահման մեղքի վերածուեցաւ: Այս պատճառով Աստուածային արդարութեան պարտքը վճարողը եւ մարդկութիւնը փրկողը անսահման էակ մը պէտք էր ըլլար: Եւ որովհետեւ մեղանչողը մարդ էր, ուրեմն Աստուծոյ արդարութեան պարտքը վճարողը, մարդ պէտք էր ըլլար: Սակայն, քանի որ մարդը իր բնութիւնը ապականեց ու եղծեց մեղանչումով, չէր կրնար փրկել իր նմանը, ինչո՞ւ: Որովհետեւ չունեցածդ չես կրնար տալ ինչպէս առակը կ'ըսէ... մեղաւոր մարդը ինչպէ՞ս պիտի կարենար իրեն նման՝

մեղաւոր մարդ մը փրկել: Հետեւաբար փրկելիչը պէտք էր ըլլար անմեղ:

**ՓՐԿԻՉԸ ՀԵՏԵԻԵԱԼ
ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է
ՈՒՆԵՆԱՅ**

Ա. Մարմին ու Մարդկային բնութիւն:
Բ. Անսահմանութիւն:
Գ. Անմեղութիւն:
Ուրեմն ո՞վ կրնայ մարդկութիւնը փրկել:
Հրեշտակապե՞տ մը:
Մարգարէ կամ մարգարէապե՞տ մը:
Մա՞րդ մը:
Ո՛չ ոք: Որովհետեւ մէկը չունի վերոյիշեալ յատկութիւնները, բացի Աստուծմէ: Եւ քանի որ Աստուածութիւնը չի՛ մեռնիր, Աստուածորդին մարդեղացաւ: Մարդացեալ Աստուածը՝ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ երկինքէն իջնելով հանգչեցաւ Մարիամ Աստուածածնի արգանդին մէջ եւ Սուրբ Հոգիին հանգչումովը մարմին կազմելով, յարմար ժամանակին ծնաւ որպէս՝ մարդացեալ Աստուած:

**ԻՆՉՆ ԷՐ ՄԵՐ ՏԻՐՈՋ
ՄԱՐԴԵՂԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄՂԻՉ ՈՅԺԸ**

Ա. ՍԷՐԸ: Մէրը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մարդեղացման ամէնէն հիմնական եւ գորաւոր մղիչ ոյժն էր, որովհետեւ «Մէրը մահուան պէս պօրաւոր է» (Երգ Երգոց 8.6): Սուրբ Աթանասիոսը² կ'ըսէ. «Աստուած չուզեց որ իր փառաւոր պատկերը՝ մարդը, մեղքի պատճառով ապականած ու նեխած մնայ... այլ՝ ուզեց որ մարդը վերադառնայ իր անմեղ ու մաքուր վիճակին եւ վերատիրանայ իր պատուին, զորս կորսընցուց իր մեղանչումով»:

² ՍՈՒՐԲ ԵՒ ՄԵԾՆ ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ, ծնած է 295-ին, Աղեքսանդրիա: Վախճանած է 373-ին, Աղեքսանդրիա: Ընդհանրական եկեղեցւոյ նշանաւոր Հայրապետներէն է եւ որպէս տօնելի սուրբ կը յիշատակուի «Երկոտասան վարդապետք»ին հետ: 326 թուականին ընտրուած է Աղեքսանդրիոյ Պատրիարք: Տակաւին սարկաւազ՝ Նիկիոյ Ա. Տիեզերական ժողովին (325), պայքարած է Արիոսին եւ անոր հետեւորդներուն դէմ:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղղղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Աստուծոյ մարդեղացումը ցոյց կու տայ իր անսահման սէրը հանդէպ մարդկութեան: Իր մարդեղացումով, ընդունեց մարմնանալ, ընդունեց հողեղէն մարմին առնել, յանձն առաւ չարչարուել, խաչին ծանր լուծը շարկել, մահը ճաշակել, միմիայն մարդուն համար: Մենք մեզի հարց տանք, արդեօք ասկէ աւելի մեծ սէր կարելի՞ է գտնել կամ տեսնել: Երբե՞ք:

Մեր կեանքի ընթացքին, կրնանք տեսնել պատասխանատու, բարձր դիրքի տէր անձ մը, բոլորին ներկայութեան, առանց ամբշնայու կամ քաշուելու, կը ծռի մինչեւ գետին. այո՛ կը ծռի ան, որ կը վայելէ բոլորին յարգանքը. կը ծռի ան, որուն ներկայութեան, մարդիկ իրենց գլուխները կը խոնարհեցնեն, կը ծռի պարզապէս իր գաւակին կամ թոռնիկին կօշիկին կապը կապելու համար: Այս պարագային, այս պատասխանատու մարդը ինչէ՞ մղուած բոլորին ներկայութեան իր գլուխը կը խոնարհեցնէ: Անկասկած որ Սէրն է մղիչը:

Անհաւատ թագաւոր մը ըսաւ իր քրիստոնեայ նախարարին:

- Դուք, Քրիստոնեաներդ կ'ըսէք որ Աստուած մարդացաւ, խաչուեցաւ եւ մեռաւ, չէ՞: Ի՞նչն է, այս ամէնը կատարելու, Չայն մղող ոյժը, ինչո՞ւ ըրաւ այս ամէնը:

Նախարարը մտածելու համար քանի մը օր կը խնդրէ թագաւորէն: Թագաւորն ալ կ'ընդառաջէ:

Քանի մը օր վերջ, թագաւորն ու նախարարը պալատի պարտէզին մէջ գտնուող շինծու լիճին եզերքը քալած պահուն, մանկապահ աղջիկն ալ փոքր իշխանին կառքը կը քշէր: Նախարարը սպասուհիին նշան տալով, սպասուհին կառքը դէպի լիճ հրեց: Թագաւորը այս տեսնելով կը նետուի լիճ, սակայն յանկարծակիի կու գայ երբ կը տեսնէ թէ իր գաւակը չէ, այլ՝ իր գաւակին նմանող արձան մը: Թագաւորին գայրոյթը փարատելու համար, նախարարը ներողութիւն կը խնդրէ ու կ'ըսէ.

- Ամէն ինչ ես պատրաստեցի ու բոլոր ծրագիրը ես մշակեցի: Թագաւոր իմ, երբ պագցիր թէ պաւակդ կը խեղդուի լիճին մէջ, ինչո՞ւ պիս կամ պինուոր մը չղրկեցիր պայն ապատելու համար, այլ՝ դուն գացիր:

- Որովհետեւ խեղդուողը պաւակս է եւ դուն շատ լաւ գիտես թէ ես քաջ մարդ մըն եմ եւ պատրաստ եմ նոյնիսկ իմ կեանքս պոհելու, կը պատասխանէ թագաւորը:

Նախարարը կ'ըսէ.

- Եւ նոյն ձեւով երբ մեր Տէր Աստուածը տեսաւ, որ իր որդիները յաւիտենական մահով կը կորսուին, մարդացաւ, խաչուեցաւ, մեռաւ եւ յարուսիւն առաւ եւ իր մահով ու յարութեամբ մեզի կեանք պարգեւեց: Կը նմանի այն թագաւորին, որ տեսաւ թէ իր պինուորները կը պարտուին իրենց թշնամեաց դէմ, պրահարուեցաւ եւ պատերապմի դաշտ նետուեցաւ, յաղթեց եւ յաղթութիւն շնորհեց իր պինուորներուն:

ՄԱՀՐ ՎԵՐՑՆԵԼ, ԽԼԵԼ ԿԱՄ ԿՈՐՉԵԼ

Այնպէս ինչպէս մահը մարդուն կեանքին խորը մտաւ, թափանցեց, նոյնպէս ալ կեանքը պէտք էր, որ մտնէր մինչեւ մարդուն կեանքին խորը՝ դուրս չպրտելու համար մահը եւ կեանք տալու՝ մարդկային ընդթեան, որ մահուամբ ապականեցաւ:

Սուրբ Աթանասիոս կ'ըսէ. «Կարելի չէր ապականեալ մարդը, անապական մարդու վերածել առանց Փրկչին, որ ոչինչէն երկինքն ու երկիրը ստեղծեց, եւ կարելի չէր մարդոց մէջ վերահաստատել Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը, առանց Աստուծոյ պատկերին (Որդիին), ինչպէս նաեւ կարելի չէր մարդոց սորվեցնել (ծանօթացնել, գիտցնել) Հօր մասին եւ բնաջնջել հեթանոսութիւնը առանց բոլորը կարգաւորող Բանին՝ Աստուծոյ ճշմարիտ Միածին Որդիին»: Ապա կը շարունակէ. «Պէտք է գիտնանք, որ մեղքին յառաջացուցած ապականութիւնը, մարմնէն դուրս չպատահեցաւ, այլ՝ ուղղակի մարդուն մարմնին յօդուեցաւ «միացաւ» եւ այդ ապականութիւնը բնաջնջելու համար պէտք էր, որ կեանքը միանար, յօդուէր մարմնի:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] պիտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

նին, որպէսպի այնպէս ինչպէս մահը, իր միացումով, կարողացաւ յաղթել մարմնին, նոյնպէս ալ՝ կեանքը կարողանար»

Եթէ մահը մարմնէն դուրս ըլլար, կեանքըն ալ դուրսէն պիտի կապուէր մարմնին: Քանի որ մահը խառնուեցաւ մարմնին եւ իշխեց անոր, հետեւաբար պէտք էր որ կեանքը խառնուէր մարմնին՝ մահուան պէս, որպէսզի երբ մարմինը, մահուան փոխարէն, կեանքը զգենու ապականութիւնը վերանայ (Թափուի, կորսուի, ջնջուի) անկէ: Այս պատճառով շատ տրամաբանական էր Փրկիչին մարմնացումը այն իմաստով, որ երբ կեանքը մարմնին միանայ, դուրս չպրտէ մահը եւ յարութեան պակաս թագադրէ:

Մեծն Գերլուսը կ'ըսէ. «Բանին մարմնանալն ու մարդանալը կարելոր էր մարդուն փրկութեան համար, որովհետեւ եթէ մարմնապէս չծնէր, մեր բնութիւնը պիտի չունենար, մեզի պէս պիտի չըլլար, հետեւաբար պիտի չկարողանար մարդկային բնութիւնը փրկել ինչպէս նաեւ ապականութիւնը վտարել մեր մարմնէն»:

Ու կը շարունակէ. «Որդիին մարմնացումն է միակ միջոցը արմատախլելու մահուան իշխանութիւնը: Մահուան դատապարտուած մարմին առաւ, որպէսպի Ինք, որպէս աղբիւրը կեանքի, կարենայ կեանք պարգեւել մարդուն» **Կը շարունակէ** «Մահուան իշխանութեան ներքեւ գրտնընդ մարդը ինչպէ՞ս պիտի կարենար անմահութիւնը վերագտնել, եթէ մահուան դատապարտուած իր մարմինը չմիաբանի Աստուծոյ կենսաւորող ոյժին: Իսկ Աստուծոյ կենսաւորող ոյժը Բանն է, Աստուծոյ Միածինը»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻԱՆԱԸ

Մարմնացումի նպատակը մեղքը վերցնել չէր միմիայն, այլ նաեւ՝ Աստուած-մարդ միանալն էր, Աթանասիոս Հայրապետը կ'ըսէ. «Որովհետեւ պահանջուած միացումը այն էր, որ Մարդացեալ Բանն Աստուածը միացում մը կատարէ մարդուն, որ իր բնութիւնն է, եւ Աստուծոյ, որ նաեւ իր բնութիւնն է»:

Մեծն Գերլուս Հայրապետը կ'ըսէ. «Հատուկ նախաձեռնութիւնը Աստուծոյ էր: Մարդկային բնութիւնը գերեզմարուեցաւ, մահուան ճիրաններուն մատնուեցաւ եւ ապականութեան իշխանութեան ներքեւ մտաւ, եւ որպէսպի Աստուած ու մարդ յարաբերութիւնը անապականեալ յարաբերութիւն մը ըլլայ, անհրաժեշտ էր որ հանդիպում մը պատահէր Աստուծոյ եւ մարդուն միջեւ, ուր երկուքին միջեւ գրտնընդ հարցերը իրենց վերջնական լուծումը գտնէին: Աստուածային լուծումն էր.- Աստուած մեր ապականեալ բնութենէն մարմին մը առաւ եւ անբաժան ու անխառն կերպով միացուց իր Աստուածութեան, կրակի ու երկաթի միացման նըման»:

* * *

Աստուածային արդարութեան զուգամերձումը՝ (Հանդիպումը) Աստուածային ողորմութեան «գլխութեան»:

Երբ երկու հոգիի միջեւ հարց մը ծագի, երբորդ մը կը փորձէ միջամտել հարցը լուծելու համար: Միջամտող անձը հարց ունեցող երկու դէմքերու մակարդակէն ցած պէտք չէ ըլլայ, որպէսզի չանարգուի ու չանտեսուի ոեւէ մէկէ մը. միջամտող անձը նաեւ անոնց մակարդակէն վեր պէտք չէ ըլլայ, որպէսզի հարցը երեւութապէս չլուծուի, այլ՝ միջամտողը պէտք է ըլլայ անոնց մակարդակէն, երկուքէն սիրուած, երկուքէն յարգուած եւ երկուքին համար վստահելի անձ մը: Եթէ մտածենք մարդեղացման եւ փրկութեան մասին, ի յայտ պիտի գայ, որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս Ինք լուծեց Աստուծոյ եւ մարդուն միջեւ գտնուող հարցերը, եւ այսպէս Քրիստոս, Յոր Նահապետին կսկիծով արտայայտած փափաքը. «Միջնորդ դատաւոր մը չկայ մեր մէջ, որ կարենայ իր ձեռքը մեր երկուքին վրայ դնել» (Յոր 9.33), իրականացուցած եղաւ:

Եթէ ներումն ու թողութիւնը Աստուծոյ կատարեալ արդարութեան դէմ են, իսկ մարդուն մահը՝ Աստուծոյ կատարեալ ողորմութեան, եւ ինչպէս գիտենք, Աստուած



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսկապէս զարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հնրաժարիր ո՛չ իր արդարութենէն եւ ոչ ալ իր ողորմածութենէն, սա կը նշանակէ, որ դժուար եւ անլուծելի հարցի մը առջեւ է մարդկութիւնը: Ո՞վ կրնայ լուծել այս անլուծելի հարցը, բացի ամէնակարող Տիրոջմէն: Իսկապէս Տէրը լուծեց այս դժուարին հարցը Իր իսկ մարդեղացումով, ուր արդարութիւնն ու ողորմածութիւնը «գթութիւնը» հանդիպեցան Փրկչին անձով:

Ղատի Եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Ռաֆայէլ, գեղեցիկ կերպով Ադամին անկումը կը նրմանցնէ այն լապտերին, որմէ ելեկտրական կապը անջատուեցաւ: Լապտերը նորէն աշխատցնելու միջոցը միմիայն այդ նոյն անջատուած ելեկտրական կապը միացնելն է, աւելի զօրաւոր կամ աւելի տկար ելեկտրական ոյժ չըլլար, նոյնն ալ մարդուն պարագան, որպէսզի մարդը իր լուսաւոր սկզբնավիճակին վերատիրանայ (վերադառնայ), իր Ստեղծիչին՝ Աստուծոյ պէտք ունի, որովհետեւ ո՛չ մարգարէն եւ ոչ ալ հրեշտակը կարողութիւն ունին վերադարձնելու այդ վիճակին: Ելեկտրական կապի միացումը լապտերին, կը նմանի մարդեղացման, ուր միացաւ Աստուածայինը (ելեկտրականութիւնը) մարդկայինին (լապտերին), որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, Աշխարհի լոյսը, լուսաւորեց Երկնքի Արքայութեան ճանապարհը:

ՅԻՇԷ՛ Ո՞Վ ՄԱՐԴ

- Թէ Աստուած պէտք չունէր մարդուն, որ Իրեն երկրպագէ, այլ՝ զինք ստեղծեց Իր առատաձեռնութենէն ու սէրէն մղուած:

Աստուած սկիզբէն գիտէր որ մարդը պիտի իյնայ Սատանային հրապոյրով, այս պատճառով, Աստուած սկիզբէն փրկութեան ծրարագիրը պատրաստեց:

- Թէ պատուիրանը չէր մարդուն անկումի պատճառը. այլ՝ մարդը ինկաւ օձին հրապոյրին եւ Աստուծոյ խօսքին չվստահելուն պատճառով, եւ մահը օրինազանցութեան բնական հետեւանքը եղաւ:

- Թէ Ադամին անկումը ամբողջ մարդկութեան անկումն էր, այնպէս ինչպէս խրնձորենին հիւանդանալով բոլոր պտուղները հիւանդոտ կ'ըլլան: Մարգարէներն ալ սխալներ ունէին:

- Թէ մարդեղացման փոխարէնը չկար: Օրինակ՝

- Մարդուն բնաջնջումով եւ վերաստեղծումով հարցը չէր լուծուեր:

- Պարտադրուած փրկութիւնը, Աստուծոյ արդարութեան եւ մարդուն ազատութեան հակառակ էր:

- Մարդը ձգել իր կամակոր ճակատագրին, Աստուծոյ բարութեան, սիրոյ, գթութեան, պատուին եւ իմաստութեան հակառակ է:

- Մարդուն մեղքը ներելը հակառակ է Աստուածային արդարութեան:

- Չղջումը մեղքերը կը ջնջէ, սակայն գործըւած մեղքին հարցը ո՛չ կը լուծէ եւ ոչ ալ կը ջնջէ անոր յառաջացուցած պատիժը, այլ՝ պարզապէս գայն զղջացողէն կը փոխանցէ գոհին, պարտամուրհակին:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ

«Եւ գահէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. «Օրհներգեցէք մեր Աստուածը, բոլոր անոր ծառաներդ, դուք փոքրեր ու մեծեր, որ կը վախնաք իրմէ» Ապա լսեցի մեծ բազմութեան մը ձայնը, նման առատ ջուրերու շառաչին եւ զօրաւոր որոտումի գոռումին, որ դարձեալ կ'ըսէր. «Ալէլուիա, որովհետեւ թագաւորեց Տէրը, մեր ամէնակալ Աստուածը» (Յայտնութիւն 19.5-6):



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [րսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՀԱՆՐԱՄ ՉԱԳՐՃԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԲԱՇԽԱՐՀԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հոփիւսով՝

ԲԺԻՇԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ



անրմ Չագրճեան կ'ըլլայ Մոնթրէալ-լաբնակ գեղանկարիչ՝ Պերճ Չագրճեանի հօրաքոյրը: Ան ծնած է Այնթապ: Անոր ծննդեան ճշգրիտ թրւականը որոշ չէ: Ան իր չափահաս տարիքին Մոնթրէալի մէջ 1987-ին հարցազրոյցի մը ընթացքին հաստատած է, որ ինք կը յիշէ 1915-ի Հայկական Յեղասպանութեան եւ տեղահանութեան առաջին օրերուն իր հօր եւ մօր սպաննութիւնը թուրք զինուորներու ձեռքով իր հօրենական տան առջեւ: Անոնց սպաննութիւնը տեղի կ'ունենայ, երբ Հանրմ խումբ մը ընկեր-ընկերուհիներով կը խաղային իրենց տան մօտերը: Անոնք անակընկալօրէն կը լսեն հրացանաձգութեան փամփուշտներու սարսափելի տարափը եւ ապշահար կը տեսնեն հայ բնակիչներուն անխրնայ խոշտանգումը թուրք զինուորներուն կողմէ: Արձակուած փամփուշտ մը կը վիրաւորէ Հանրմի ճակատը: Սակայն վէրքը կ'ըլլայ մանր եւ մակերեսային: Հանրմ նաեւ հաստատած է, որ իր հայրը կը կոչուէր Խաչեր Չագրճեան, իսկ մայրը՝ Քրիսթին Չագրճեան, ինք Այնթապի մէջ դպրոց չէ յաճախած, իրենց տունը եղած է շատ մեծ եւ տան ետին գտնուած է մեծ պարտէզ մը: Խաչեր Չագրճեան Այնթապի մօտերը ունեցած է լայնատարած եւ խաղողով հարուստ այգի մը:

Հանրմի այս վկայութիւններէն կարելի է ենթադրել, որ ան 1915-ին 4 կամ 5 տարեկան պէտք էր ըլլար, այլ խօսքով՝ ծնած պէտք էր ըլլար 1910-ին կամ 1911-ին: Հանրմ Չագրճեան ունեցած է երէց երկու եղբայրներ՝ Աւետիս եւ Արամ, որոնք ծնած են Այնթապ: Աւետիս 1906-ին, իսկ Արամ 1908-ին: Հանրմ ունեցած է երկու հօրեղբայրներ՝ Գէորգ եւ Ներսէս, որոնք Յեղասպանութենէն մի քանի

տարիներ առաջ հեռացած են Այնթապէն եւ երկար ճամբորդութենէ ետք հասած են Եգիպտոս ու հաստատուած են Գահիրէ:

Հանրմ, Աւետիս եւ Արամ կը դառնան որբեր իրենց ծնողքին սպաննութեան որպէս հետեւանք: Անոնք կը դառնան անպաշտպան եւ ծնողական գուրգուրանքէ գուրկ: Սակայն բարի Սամարացիին օգնութեան ձեռքը շուտով կը հասնի: Անոնք կ'արժանանան «Կարմիր Խաչ» կազմակերպութեան խնամատարութեան: Հանրմ եւ իր երկու եղբայրները՝ Աւետիս եւ Արամ «Կարմիր Խաչ» կազմակերպութեան միջոցաւ, այլ որբերու հետ միատեղ շոգեկառքով Այնթապէն կը փոխադրուին Սուրիա եւ հոնկէ Լիբանան: Անոնք կը տեղադրուին Լեռնալիբանանի Ալէյ քաղաքի մօտ գտնուող Շրմլան գիւղի Անգլիական որբանոցը, որ ծառայած է որպէս ապաստարան հարիւրաւոր Հայ որբերու: Հանրմ եւ իր երկու եղբայրները Շրմլանի որբանոցը կը մնան մօտաւորապէս 5 տարի մինչեւ 1921: Անոնք կը յաճախեն որբանոցի նախակրթարանը, ուր կը սորվին հայերէն եւ նախնական գիտելիքներ: Հանրմ կը սորվի նաեւ ասեղնագործութիւն, որ կը դառնայ իր կեանքի ամէնէն շատ սիրած եւ պաշտած ձեռարուեստը:

1921-ի Ապրիլին, Շրմլանի անգլիական որբանոց կ'այցելէ անգլիացի, Չէսթ Նաթ քաղաքէն (Chest Nut City), 1881-ի ծնունդ եւ Միացեալ Բարեկրօնագեալ Եկեղեցւոյ Վերապատուելի Ճոն Ուորտ Կրէյվս (Reverend John Ward Graves): Ճոն Կրէյվս որբանոց կը մնայ 3-4 օրեր եւ կը մտերմանայ Հայ որբերուն հետ, կը խօսի անոնց հետ ու կը հետեւի անոնց խաղերուն ու շարժուձեւերուն: Անոր ուշադրութիւնը կը կեդրոնանայ առաւելաբար Հանրմի վրայ եւ իր մէջ կը գարգանայ



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՛րբ սպասես. ե՛րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

զգացական կապ մը հանդէպ Հանրմի: Երկար մտածումէ եւ ուսումնասիրելէ ետք, ան կ'որոշէ որդեգրել փոքրիկն Հանրմը: Ուստի իր որոշումը կը յայտնէ որբանոցի վերակացուին, որ շուտով չընդառաջեր ձոնի առաջարկին եւ ընդհակառակը՝ ան կը ներկայացնէ որբերուն մէջէն ուրիշ աղջնակ մը:



Ճոն Ուորտ Կրէյվս

Ճոն հաստատ կը մնայ իր որոշումին վրայ, ուստի վերակացուն իր համաձայնութիւնը կը յայտնէ Հանրմի որդեգրման հարցին: Ճոն Կրէյվս որբանոցին մէջ որդեգրութեան գործողութիւնները ամբողջացնելէ ետք կը դիմէ Պէյրուսի անգլիական դեսպանատուն 6 Ապրիլ, 1921-ին, որպէսզի պաշտօնականանայ որդեգրումը եւ ստանայ ճամբորդութեան արտօնագիրը: Հոն վերապատուելի Կրէյվսի խնդրանքով Հանրմ կ'անուանուի Պրենտա ի յիշատակ իր Պրենտա քրոջը: Դեսպանատան պաշտօնական վկայագիրին մէջ կ'արձանագրուի Հանրմի նոր անուն-մականունը՝ Պրենտա Ուորտ Կրէյվս, ճշդուած նոր տարիքը՝ հինգ տարե-

կան եւ այլ մանրամասնութիւններ, օրինակ՝ թուիս աչքեր, բնական քիթ եւ բերան, կիսաբոլոր երես, թուիս մորթի գոյն եւ սրբազոյն մազ:



Պրենտա Կրէյվսի որդեգրման պաշտօնական վկայագիրը

Պրենտա Կրէյվս իր հօր՝ Ճոն Կրէյվսին հետ կը հասնին Անգլիա անցնելով Երուսաղէմէն, Եգիպտոսէն, Իտալիայէն եւ Ֆրանսայէն: Լիբանանէն դուրս ելլելու ընթացքին Պէյրուսի նաւահանգիստին մէջ կը կորսուի անոնց ճամբորդական պայուսակը: Երուսաղէմի մէջ Ճոն՝ Պրենտայի հայրը, արժաթէ Հայկական ոճով պատիկ խաչ մը շղթայով միասին կը գնէ եւ կ'անցընէ Պրենտային պարանոցը: Խաչին վրայ արձանագրուած է անգլերէնով՝ August 14, 1921:

Պրենտա այս խաչը կը պահէ իր վրդին վերայ մինչեւ իր մահը: Հաւանաբար Ճոն Կրէյվս այս ընելով ուզած է փաստել Պրենտայի Հայու ինքնութիւնը:



Զմայեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Թիւնները: Պրենտա կ'ընտելանայ իր շրջապատին հետ եւ կը մշակէ սերտ բարեկամութիւն իր դասընկերուհիներուն հետ:



Պրենտա Կրեյվսի Երուսաղէմէն գնուած Հայկական արծաթեայ խաչը

Պրենտա Կրեյվս 1921-ին

Պրենտան հաղորդակցութեան մեծ դրժարութիւն կ'ունենայ իր հօրը հետ, որովհետեւ ինք անգլերէն չէր գիտեր, իսկ հայրն ալ հայերէն չէր խօսեր: Անգլիա հասնելէ քանի մը շաբաթներ ետք Պրենտայի հայրը գինք կ'արձանագրէ աղջիկներու գիշերօթիկ դպրոց մը, ուր ան կը մնայ մօտաւորապէս 10 տարիներ: Գիշերօթիկ դպրոցը հանրածանօթ եղած է կարգապահական խիստ օրէնքներով եւ կրթական որակաւոր ծրագիրով: Պրենտա գիշերօթիկ դպրոցին մէջ աւտու իրիկուն կը մասնակցի պարտադիր եկեղեցական յատուկ արարողութիւններու: Ան շուտով կը սորվի անգլերէն լեզուն եւ կը յաղթահարէ իր հաղորդակցական դժուարու-

ձոն Կրեյվս ամէն Հինգշաբթի օրերը կ'այցելէ Պրենտային եւ միասին կը ճաշեն եւ ժամերով սերտ խօսակցութիւն կ'ունենան: Արձակուրդներու օրերուն եւ մանաւանդ ամրան եղանակին Պրենտա կը վերադառնայ իր հօրը տունը, ուր կ'անցընէ շատ հաճելի եւ ուրախ ժամեր: Անոր գիշերօթիկ դպրոցի տասը տարիներու կեցութիւնը կ'ըլլայ շատ ուրախ եւ հանգստաւէտ: Պրենտա կ'ունենայ աւուղջընկերային կեանք: Ան կ'ամբողջացնէ դպրոցին երկրորդական բաժանմունքը յաջողութեամբ եւ կը դառնայ հասուն ու խելահաս պարմանուհի մը:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապրեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսափայրը դարձած Կայենական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Արեւին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ ախտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):



կը վայելէ քաղաքին երեւելիներուն, քաղաքական անձնաւորութիւններուն ու պարզ ժողովուրդին յարգանքը: Ան կը դառնայ հանրաժանօթ դէմք, քարոզիչ եւ շրջուն վերապատուելի:



Պրենտա Կրէյվսի որդեգրման պաշտօնական վկայագրին ճամբորդութեան հաստատագիրները

Պրենտա Կրէյվս 15-16 տարեկան

Պրենտա կը վերադառնայ իր հօրը պալատանման տունը եւ կը վայելէ անոր անկեղծ սէրն ու ամբողջական գուրգուրանքը: Փոխադարձաբար Պրենտա իր հօրը հանդէպ կը տածէ որդիական սէր եւ յարգանք: Ան կը դառնայ իրաւացիօրէն ձոնին միակ աղջիկը: Ձոն շարունակ իր խօսքը ուղղելով Պրենտային ըսած է՝ «Պրենտա՛ դուն իմ ընտանիքիս մէկ անդամն ես եւ իմ հարապատ պաւակս ես»: Ան իր ամբողջ շարժուն եւ անշարժ հարստութիւնը կ'արձանագրէ Պրենտայի անուան: Անոնք երկուքը միասին յաճախ արձակուրդի կ'երթան, ընկերային հաւաքոյթներու կը մասնակցին եւ կ'այցելեն մշակութային ու արուեստի կեդրոններ:

1932-ին ձոն Կրէյվս կ'ամուսնանայ անգրլիացի աղջկայ մը հետ: Պրենտա կը մասնակցի իր հօրը ամուսնութեան պաշտօնական արարողութեան եւ ծաղկեփունջ մը ձեռքին կը քայլէ հարսանեկան շքախումբին հետ:

Պրենտայի վկայութեամբ իր հայրը՝ ձոն Կրէյվս կ'ունենայ շատ լաւ տնտեսական վիճակ եւ բարեկամական լայն շրջանակ: Ան

Պսակի օրը ձոն իր բարեկամներուն կողմէ կը ստանայ շատ արժէքաւոր նուէր մը՝ «Grand Father Clock» ժամացոյց մը, որ յետագային կը ժառանգուի Պրենտայի կողմէ: ձոն այս ամուսնութենէն զաւակ չունենար, ուստի Պրենտան կը մնայ անոր միակ որդեգիր զաւակը: Պրենտա կը փորձէ բնականոն փոխ յարաբերութիւն ունենալ իր խորթ մօրը հետ, սակայն ան շարունակ կ'անտեսէ Պրենտան եւ կը դառնայ իսկական խորթ մայր: Ան շարունակ ըսած է Պրենտային՝ «Դուն օտար ես եւ մեր ընտանիքին չես պատկանիր»:



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արինն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):



Տէր եւ Տիկին Ճոն Ուորտ Կրէյվս, ձախսին ծաղկեփունջ բռնած է պարմանուհի Պրենտան

Պրենտա կը վերջիչէ Լիբանանի Շըմլան որբանոցին մէջ սորված ասեղնագործութիւնը եւ կը փորձէ վերակենդանացնել այդ ձեռարուեստը: Իր ազատ եւ հանգիստի ժամերուն, կը հիւսէ նուրբ ասեղնագործ ժանեակներ եւ կը նուիրէ իր հօրը եւ անոր բարեկամներուն: 1932-1947 Պրենտա կը նուագէ հօրը պատրաստած եւ ղեկավարած յատուկ փչային գործիքներու նուագախումբին մէջ:

Պրենտա կը մեծնայ որպէս անգլիացի: Ան կը մոռնայ իր մայրենի լեզուն եւ կը խօսի միայն անգլերէն: Սակայն, Պրենտա շարունակ կը յիչէ իր Հայկական ծագումը եւ իր իսկական անունը: Մինչեւ 1946 Պրենտա կ'ապրի անգլիական միջավայրի մէջ եւ ոչ մէկ Հայու կը հանդիպի: 1946 տարին Պրենտայի համար կ'ըլլայ անկիւնադարձային տարի մը: Այդ տարին ինք բախտաւորութիւնը կ'ունենայ տեսնելու իր եղբայրը եւ եղբորորդիները Եգիպտոսի մէջ:

Ինչպէ՞ս տեղի կ'ունենայ այս պատմական հանդիպումը: Այս հարցումին պատասխանելու համար ետ դարձ մը ընելու ենք եւ խօսելու ենք Հանրմի երկու եղբայրներուն Շըմլանի որբանոցէն Գահիրէ փոխադրութեան եւ անոնց կեանքի փոփոխութիւններու մասին:



Պրենտայի աշխատած ժանեակներէն մին

Ուրեմն՝ Հանրմի Գէորգ եւ Ներսէս հօրեղբայրները, որոնք ինչպէս յիշած էինք նախապէս արդէն հաստատուած էին Եգիպտոս Հայկական Յեղասպանութենէն մի քանի տարիներ առաջ: Մինչեւ 1921 անոնք Փոր Սաիտի մէջ կը դիմաւորեն հարիւրաւոր Հայ որբեր եւ անոնց մէջ կը փորձեն գտնել իրենց նահատակուած եղբոր երեք զաւակները, սակայն ապարդիւն: 1921-ի ամառը անոնք կը մեկնին Լիբանան եւ հանդիպումներ կ'ու-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

նենան Հայկական գաղթականներու պատասխանատուներուն հետ եւ ի յայտ կու գայ որ Աւետիս եւ Արամ կը գտնուին Շրմլանի Անգլիական որբանոցին մէջ, իսկ Հանրմ արդէն որդեգրուած է անգլիացի Վերապատուելի ձոն Կրէյվսի կողմէ: Գէորգ Չագրճեան իր հետ Գահիրէ կը տանի եղբորորդին՝ Աւետիսը, իսկ Ներսէս Չագրճեան իր եղբորորդին՝ Արամը: Աւետիս կը մեծնայ իր Գէորգ հօրեղբոր տան մէջ եւ կը ստանայ Հայ Առաքելական կրթութիւն, իսկ Արամ կը մեծնայ իր Ներսէս հօրեղբոր տան մէջ Աւետարանական ոգիով, որովհետեւ Ներսէս ամուսնացած էր Աւետարանական համայնքէն Հայ աղջկայ մը հետ: Արամ կը դառնայ հասուն երիտասարդ: Ան չամուսնանար եւ կ'ապրի առանձին: Ան Գահիրէի մէջ կ'ունենայ իր սեփական էլեկտրական գործիքներու վաճառատուներ: Արամ կը մահանայ 1986-ին, Գահիրէ:

Իսկ Աւետիս երիտասարդ տարիքին կ'ամուսնանայ Գահիրէի մէջ Հերմին Պատիկեանի հետ եւ կը բախտաւորուի երեք զաւակներով՝ Արաքսի-Քրիսթին, Պերճ եւ Սեդա-Պրենտա: Աւետիս Գահիրէի մէջ կը դառնայ հանրածանօթ եւ յաջող վաճառական: Ան կը մահանայ Գահիրէ 1981-ին:



Տէր եւ Տիկին
Աւետիս եւ Հերմին Չագրճեաններ



Արաքսի-Քրիսթին ծնած է 1936-ին Գահիրէ: Ան կ'ամուսնանայ Յարութիւն Ուզունեանին հետ, որ մի քանի տարի ետք կը մահանայ: Արաքսի-Քրիսթին կ'ամուսնանայ երկրորդ անգամ Ստեփան Վարվարեանի հետ: Անոնք մինչեւ օրս կ'ապրին Եգիպտոս:



Պերճ ծնած է 1939-ին: Ուսանած է Եգիպտոս Ecole De Beaux Arts Իտալական վարժարանին մէջ: Ան կը մասնագիտանայ՝ Advertising and Arts-ի մէջ: Պերճ Գահիրէի մէջ կը նշանուի Նայիրի Նալչաճեանի հետ եւ կ'ամուսնանայ անոր հետ Մոնթրէալի մէջ 1967-ին: Նայիրիին մայրը կ'ըլլայ Պոլսեցի Անիէս Գարակէօզեանը, իսկ հայրը՝ Կեսարացի Երուանդ Նալչաճեանը: Պերճ եւ Նայիրի Մոնթրէալի մէջ կը բախտաւորուին աղջիկ զաւակով մը՝ Քրիսթին եւ մանչ զաւակով մը՝ Կարէն:

Սեդա-Պրենտա կը հաստատուի Զուիցերիա եւ հոն կ'ամուսնանայ ու կը բախտաւորուի երկու զաւակներով:

Աւետիս Չագրճեան տարիներով կ'ապրի միջաւանջի մէջ գտնելու համար իր Հանրմ



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [րոսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Քոյրը: Ան պատկուց իր Գէորգ հօրեղբորմէն իմացած էր Հանրմի որդեգիր առնուելը Շմլանի որբանոցին մէջ անգլիացի Վերապատուելի ծոն Կրէյվսի կողմէ: 1945-ին Աւետիս կը մեկնի Լիբանան եւ կը տեսնուի Շմլան որբանոցի պատասխանատուներուն հետ, որպէսզի ունենայ Վերապատուելի ծոն Կրէյվսի հասցէն: Սակայն ան չի յաջողիր:



Աւետիս Չագրճեանի ընտանիքը երեք զաւակներով եւ Պրենտա կրէյվս նստած ձախին, 1947

Աւետիս կը վերադառնայ Եգիպտոս ձեռնունայն: Ան չի յուսահատիր եւ կը շարունակէ իր փնտռուութիւնը, որպէսզի գտնէ իր քոյրը: Աւետիս կը նամակցի Անգլիոյ Հայոց Թեմի Առաջնորդին հետ եւ կ'իմացնէ անոր իր քրոջը պատմութիւնը եւ կը խնդրէ ճիգ չխնայել գտնելու ծոն Կրէյվսի հասցէն: Երկար փրնտրուութիւնէ ետք Սրբազան Առաջնորդը կը գտնէ ծոնի հասցէն եւ Աւետիսին կը փոխանցէ: Աւետիս Չագրճեան շուտով կը գրէ ծոն Կրէյվսի բացառապատկուց որ ինք Պրենտայի եղբայրն է եւ կը փափաքի օր մը տեսնուի իրենց հետ: Սակայն, ծոն Կրէյվս միշտ կը խուսափի եւ չի պատասխաներ: Այդ օրերուն Աւետիսի մօտիկ ազգականներէն Յակոբ Քէսթէնեան անձնական գործով կը մեկնի Անգլիա եւ հոն կ'եցուցնէ ընթացքին կը գտնէ ծոն Կրէյվսին տունը: Յակոբ կ'այ-

ցնէ Պրենտա Կրէյվսին եւ կը յայտնէ անոր, որ իր եղբայրը՝ Աւետիս գինք կը փնտռէ տարիներէ ի վեր եւ կ'ուզէ կապ հաստատել իր հետ: Յակոբ Քէսթէնեան առաջին Հայը կ'ըլլայ, որ Հանրմին հետ կը տեսնուի իր որդեգրումէն ետք: Յակոբ Քէսթէնեան Գահիրէ վերադառնալէ ետք Աւետիսին կը պատմէ Պրենտային հետ իր տեսակցութիւնը: Ուստի Աւետիս մնայուն կապ կը հաստատէ իր քրոջը՝ Պրենտայի հետ: Ան պաշտօնական հրակէր կ'ուղղէ իր քրոջը, որ այցելէ գինք Եգիպտոսի մէջ: Պրենտա կ'ընդունի հրակէրը եւ կ'որոշէ անպայման երթալ եւ տեսնուի իր եղբոր՝ Աւետիսին հետ: Սակայն ծոն Կրէյվս արգելք կը հանդիսանայ եւ դժուարութիւններ կը յարուցէ: Այս միջոցին Պրենտա կ'անդրադառնայ որ ինք տակաւին անգլիական հպատակութիւն չէր ստացած: Ուստի Պրենտայի հպատակութեան գործողութիւնները տեղի կ'ունենան եւ ան կը ստանայ անգլիական ճամբորդութեան անձնաթուղթ (passport): Պրենտա օդանաւով կը մեկնի Եգիպտոս Նոյեմբեր 1947-ին առանց Եգիպտոս մտնելու արտօնութեան: Ան կը հասնի Գահիրէի օդակայանը, ուր Աւետիս իր անձնական ծանօթութիւններով տեղւոյն վրայ Պրենտայի մուտքի եւ կ'եցուցնէ արտօնութիւն կ'ապահովէ:

Այսպիսով, 27 տարիներու բաժանումէն ետք քոյր եւ եղբայր՝ Հանրմ եւ Աւետիս կ'ողջագուրուին եւ նոյն գիշեր տեղի կ'ունենայ ընտանեկան մեծ խրախճանք: Պրենտա Կրէյվս Գահիրէ կը մնայ մէկ ու կէս տարի: Հոն կը տօնուի իր ծննդեան տարեդարձը եւ տեղի կ'ունենան ընտանեկան հանդիպումներ ու խրախճանքներ: Այս այցելութեան ամբողջ տեւողութեան, Պրենտա կ'ապրի հոգեկան մեկուսացում, որովհետեւ ինք հայերէն լեզուն մոռցած էր եւ շարունակ կը խօսէր անգլերէն, իսկ իր շուրջը գտնուողները ընդհանրապէս կը խօսէին հայերէն: Ան կ'ունենայ հաղորդակցութեան որոշ դժուարութիւն իր շրջապատին հետ, սակայն մեծ



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արինն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հաճոյքով եւ երախտագիտութեամբ մտիկ կ'ընէ բոլորը եւ կը մասնակցի անոնց սարքած ընդունելութիւններուն: Աւետիս Չագրճեան ընտանիքի անդամները իրենց կարելին եւ անկարելին կ'ընեն, որպէսզի Պրենտան մնայ ուրախ եւ զգայ հօրենական տան տաքութիւնը: Աւետիսին մանչ գաւակը՝ Պերճ 8 տարեկան հասակին մէջ կը վայելէ հօրաքրոջը ներկայութիւնը եւ անոր հետ շարունակ կը գրուցէ անգլերէնով: Այդ օրերէն սկսեալ երկուքին միջեւ կը ստեղծուի հարազատութիւն եւ սերտ կապ:

Պրենտա կը շրջագայի Եգիպտոսի բոլոր շրջանները եւ կ'այցելէ շատ մը պատմական վայրեր ու թանգարաններ: Ան կանոնաւոր հերթականութեամբ կը նամակցի հօրը՝ Ճոն Կրէյվսին հետ եւ կը գրէ իր ունեցած յարգալիր ընդունելութեան, ընտանեկան գուրգուրանքին եւ յարգանքին, ինչպէս նաեւ իր հոգեկան ապրումներուն մասին: Ճոն կրկին ու կրկին կը գրէ Պրենտայի ու կը խնդրէ անկէ որ շուտով վերադառնայ: Ան կարօտցած էր իր գաւակը՝ Պրենտան, եւ անոր բացակայութեամբ կը զգար պարապութիւն մը իր տան մէջ: Երկար մտածելէ ետք Պրենտա կ'որոշէ վերադառնալ իր հօրը քով: Ան կ'իմացնէ այս որոշումը իր եղբոր, որ յուզումով կ'ընդունի այս որոշումը եւ արգելք չի հանդիսանար Պրենտայի մեկնումին: Տեղի կ'ունենան հրաժեշտի հաւաքոյթներ, ուր կը փոխանցուին ազնիւ խօսքեր, հարազատ արտայայտութիւններ եւ մնայուն կերպով հաղորդակցելու երկուստեք խոստումներ:

Պրենտա կը վերադառնայ Անգլիա իր հօր՝ Ճոն Կրէյվսի քով Յուլիս 1949-ին մէկ ու կէս տարի բացակայութենէ ետք:

Ինչպէս յիշեցինք, նախապէս Ճոն Կրէյվս իր ամբողջ կտակը արձանագրած էր Պրենտայի անուան: Սակայն Ճոնի մահէն ետք, անոր այրիացած կինը կարողացած է այդ կտակը արձանագրել իր անուան եւ իւրացրնել մահացած Ճոնի ամբողջ հարստութիւնը:

Ճոն Կրէյվսի մահէն ետք անոր կինը կը հիւանդանայ եւ տարիներով կը մնայ անկողին: Պրենտան սիրալոյսով կը խնամէ գինք եւ կը հոգայ անոր ամէն պէտքերը, հակառակ որ ան շարունակ վատ յարաբերութիւն ունեցած էր իր հետ, բնաւ չէր սիրած գինք եւ նոյնիսկ ատած էր գինք: Պրենտայի խորթ մայրը կը մահանայ 1980-ին եւ Պրենտա կը մնայ առանձինը: Սակայն շնորհիւ իր ունեցած ընկերային շրջանակին եւ մեծ թիւով բարեկամ ընկերակիցներու սերտ յարաբերութեան, ան ինքզինք բնաւ առանձնութեան մէջ չզգար:

1949-էն մինչեւ 1980 Պրենտա շարունակ կը նամակցի Եգիպտոս ապրող Աւետիս եղբորը եւ անոր աղջկան՝ Արաքսի-Քրիսթինի հետ, ինչպէս նաեւ Մոնթրէյլ հաստատուած եղբորը տղուն՝ Պերճին հետ: Ան կ'իմանայ Աւետիս եղբորը մահը 1981-ին, սակայն փառք կու տայ Աստուծոյ, որ ինք կարողացած էր երթալ Եգիպտոս եւ միանալ իր հարազատներուն ու ապրած էր անոնց հետ մէկ ու կէս տարի:

Պրենտա որպէս զբօսաշրջիկ կը հասնի Մոնթրէյլ 1984-ին եւ կ'ընդունուի իր Աւետիս եղբորը տղուն Պերճին կողմէ: Ան երկու ամիսներ կը հիւրասիրուի Պերճին եւ անոր տիկնոջ՝ Նայիրին կողմէ: Պրենտա շատ կը սիրէ Մոնթրէյլ քաղաքը եւ Մոնթրէյլի ընկերային կեանքը ու մանաւանդ Մոնթրէյլ-ալահայութեան տաքուկ եւ առողջ միջավայրը:

Անգլիա վերադարձին, կ'ապրի Մոնթրէյլի յիշատակներով: Պրենտա կ'որոշէ իր կեանքի վերջին տարիները առանձին չապրիլ, այլ՝ ըլլալ իր անմիջական հարազատներուն հետ, մասնաւորապէս Պերճ Չագրճեանին եւ անոր ընտանիքին մօտ: Ուստի ան կը դիմէ Գանատական Դեսպանատուն եւ կը ստանայ Գանատա գաղթելու արտօնութիւն:

Պրենտա երկրորդ անգամ ըլլալով կը հասնի Մոնթրէյլ 1986-ի ամրան, բայց այս



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

անգամ վերջնականապէս հոն հաստատուելու եւ ապրելու Մոնթրէալահայրենական ծոցին մէջ: Իր Գէպէք Նահանգ ընդունման գաղթականական արտօնութեան պետական թուղթերուն մէջ որպէս ծննդավայր արձանագրուած է հետեւեալը՝ born in Aintab, Armenia, USSR:



Տէր եւ Տիկին Պերճ Եւ Նայիրի Չագրճեաններ

Պերճ Չագրճեան սիրալոյստար եւ մեծ ուրախութեամբ կ'ընդունի հօրաքոյրը՝ Պրենտան իր տան մէջ եւ կը նկատէ զինք որպէս հարազատ մէկ անգամը իր ընտանիքին: Պրենտա կը մտերմանայ բոլորին հետ, մանաւանդ Պերճին տիկնոջ՝ Նայիրիին հետ եւ անոր զաւակներուն՝ Քրիսթինին ու Կարէնին հետ:

Ան դժբախտաբար կը խօսի միայն անգլերէն, որովհետեւ ամբողջ 66 տարիներ ապրած էր միայն ու միայն անգլիական միջավայրի մէջ հեռու Հայկականութենէ եւ հեռու Հայերէն խօսողներէ: Մոնթրէալի մէջ Պրենտա կը զգայ իր շրջապատին հարազատութիւնը, Պերճին եւ անոր ընտանիքին սէրն ու գուրգուրանքը, կը շնչէ Հայկականութիւն, շարունակ կը լսէ տարեցներու, երիտասարդներու եւ մանուկներու Հայերէն խօսակցութիւնը, կ'ունկնդրէ Հայ երաժշտութիւնը, ականատես կ'ըլլայ Հայ Կեդրոնէն ներս կազմակերպուած Հայկական ձեռնարկներուն, ակնդիր կ'ըլլայ Հայկա-

կան հեռատեսիլին եւ կ'աղօթէ Հայ Եկեղեցւոյ մէջ:

Անոր մէջ կ'արթննայ Հայկականութիւնը եւ կ'ուզէ վերադառնալ իր արմատներուն: Պրենտա կ'ուզէ շողուիլ իր Հայկական շրջապատին հետ եւ հաղորդակցիլ բոլորին հետ իր մայրենի լեզուով: Ուստի կը յաճախէ Մոնթրէալի Գոնգորտիա համալսարանի գիշերային դպրոցը սորվելու համար Հայերէն լեզուն Վարդի Դանիէլեանի հսկողութեամբ: Մօտաւորապէս 7 ամիսներ ամէն օր Հայերէն գիրքերը շալկած Պրենտա կ'երթայ Գոնգորտիա համալսարան եւ լրջօրէն կը հետեւի Վարդիի ցուցմունքներուն:



Պրենտա Կրէյվս, 1987

Վարդի ամէն ճիգ կը թափէ, որպէսզի Պրենտան շուտով կարենայ խօսակցական լեզուն իւրացնել: Ան մասամբ կը յաջողի եւ Պրենտա կը սկսի Հայերէն խօսիլ իր շրջապատին մէջ: Պրենտա չի բաւարարուիր խօսակցական լեզուով, ան ամբողջ սրտով կը փափաքի նաեւ գրել Հայերէն եւ կարգալ



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [հին] ախտին դժոխարորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Հայերէն: Դժբախտաբար ան անակնկալօրէն կը հիւանդանայ եւ կը մատնուի սուր շնչահեղձութեան: Ուստի ան ստիպողաբար կը լքէ հայագիտական դպրոցը: Պրենտայի առողջական վիճակը կը վատթարանայ շատ արագ եւ ան կը մահանայ Մոնթրէալի մէջ թոքերու քաղցկեղէ: Անոր թաղման արարողութիւնը տեղի կ'ունենայ Մոնթրէալի Ս. Յակոբ Եկեղեցոյ մէջ: Պրենտայի աճիւնները կ'ամփոփուին Cote des Neiges գերեզմանոցի Քէսթէնեան դամբարանին մէջ, 26 Մայիս, 1987-ին:

Պրենտա Մոնթրէալ կ'ապրի միայն 8 ամիսներ, որոնք կ'ըլլան իր կեանքի ամէնէն ուրախ ամիսները: Մինչեւ իր մահը Պրենտա իր վիզէն կախուած կը պահէ Հայկական խաչը, որ իրեն տրուած էր 1921-ին գինք որդեգրող Վերապատուելի Ճոն Կրէյվսի կողմէ:

Մոնթրէալ,
20 Դեկտեմբեր, 2014



ԻՆՉՈՒՒ ԵՁ, ԷՇ ԵՒ ԳԱՌՆՈՒԿ ԿԸ ՊԱՏԿԵՐԱՑՆԵՆՔ ՄՍՈՒՐԻՆ ՔՈՎ



Եսայի Մարգարէութեան մէջ կը կարդանք.– «Եվը իր սեփականատէրը կը ճանչնայ, ու էջը՝ իր տիրոջ մտուրը, բայց Իսրայէլ պիս չի ճանչնար, իմ ժողովուրդս չըմբռներ» (Ես 1.3):

Իսկ ոչխարներուն ներկայութիւնը կը պատկերացնենք, նախ՝ ախոռին մէջ անոնց գոյութենէն եւ հովիւներու այցելութենէն:

Եզր խորհրդանիշ է ասուածային առատութեան, որովհետեւ Առակներու Գիրքին մէջ կը կարդանք. «Բերքին առատութիւնը եզին ոյժով կ'ըլլայ» (Առ 14.4):

Էջը խորհրդանիշ է խաղա-

ղութեան, որովհետեւ Զաքարիայի Մարգարէութեան մէջ կը կարդանք. «Մե՛ծապէս խայտա, ո՛վ Սիոնի աղջիկ, ցնծութեամբ գոչէ, ո՛վ Երուսաղէմի աղջիկ. ահա՛ Թագաւորդ քեզի կու գայ. Ան արդար է, ու փրկիչ. հեզ է, եւ իշու վրայ հեծած, իշու ձագի՝ աւանակի վրայ» (Զք 9.9, տես նաեւ ՅՀ 12.15):

Գառնուկը խորհրդանիշ է Քրիստոսի զոհողութեան: Գառնուկին մասին Յովհաննէս Մկրտաւորի հետեւեալ վկայութիւնը կու տայ. «Ահաւասիկ Աստուծոյ գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (ՅՀ 1.29):



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայենական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Նոր Տարին աղօթքով դիմաւորելու առաջադրութեամբ, Նոր Տարուան առաջին իսկ ժամուն, Հինգշաբթի, 1 Յունուար, 2014, կէս գիշերուան ժամը 12:45-1:00-ին, Ս. Գէորգ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ գոհարանական աղօթք, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, որ շնորհաւորեց եւ նուազ բաժնեց բոլոր հաւատացեալներուն:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Նոր Տարուան առաջին ժամերը Սուրբ Պատարագով սկսելու եւ որպէս նոր մարդ՝ Սուրբ Հաղորդութեամբ նորոգւելու հաւատքով, կէսօրուն ժամը 11:00-ին, Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Պատարագեց Արժ. Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեան: Քարոզեց Առաջնորդ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագի աւարտին, կէսօրուան ժամը 1:00-3:00, Առաջնորդ Սրբազան Հայրը Նոր Տարուան շնորհաւորութիւններ ընդունեց, Ազգային Առաջնորդարանի Դահլիճին մէջ:

ԿԻՐԱԿԻ, 4 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ եւ Քարոզեց Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագին:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 5 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, Ճրագալոյցի Երեկոյեան, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ Պատարագեց եւ Քարոզեց՝ Առաջնորդ Սրբազան Հայրը:



Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններ ընդունեց, Ազգային Առաջնորդարանի Դահլիճին մէջ:



Նոյն օրը իրիկուան, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Ճրագալոյցի Խթման Սիրոյ Սեղանին եւ շնորհաւորելով բոլոր ներկաները, անոնց մաղթեց օրհնեալ ծնունդ մը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 6 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօներուն առիթով, Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ Պատարագեց եւ Քարոզեց՝ Առաջնորդ Սրբազան Հայրը:



Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններ ընդունեց Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:



Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00-ին Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց Սուրբ Ծննդեան Սիրոյ Սեղանին: Այս առիթով, ընդառաջելով Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հովիւներու եւ Հոգաբարձութեանց փափաքին, «ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ» շնորհեց Պապ Ատուրեանին, իսկ «ԳՆԱՀԱՏԱԳԻՐ»՝ Ռաֆֆի Տէր Պօղոսեանին:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Չորեքշաբթի առաւօտեան, Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովի Ատենապետ՝ Տիար Գրիգոր Տէր Ղազարեանին, Տ. Ստեփանոս Վրդ. Փաշայեանին եւ Տիար Յարութ Սարգիսեանին, ներկայ գտնուեցաւ կլոր սեղանի մը, կազ-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, արսափեցան ազգերը երբոր տեսան հին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] այստին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

մակերպուած Դեսպան՝ Dr. Andrew Bennett-ի (The Ambassador for Religious Freedom) կողմէ, ներկայութեամբ՝ Christian Paradis-ի (Minister for International Development and La Francophonie) եւ Նախարար Chris Alexander-ի (Minister for Citizenship and Immigration): Նախարարները գեկուցեցին իրենց կատարած մարդկային եւ գաղթականական աշխատանքներուն մասին, առաւելաբար Սուրիայէն եւ Իրաքէն: Սրբազան Հայրը շնորհակալ ըլլալով հանդերձ կատարուած աշխատանքներուն համար, յիշեցուց որ «Այս ձեւով հարցերը չեն լուծուիր: Պէտք է տեղւոյն վրայ լուծումներ գտնել մանաւանդ՝ անոնց համար, որոնք գաղթելու կարողութիւն չունին»: Ապա յիշեցուց, որ «Կարելի չէ Միջին Արեւելք ունենալ առանց Քրիստոնէութեան, իսկ Միջին Արեւելքը քրիստոնէաներէն պարպել կը նըշանակէ մահացու հարուած տալ համայն Քրիստոնէութեան»:



Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00-ին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, կազմակերպութեամբ Թորոնթոյի Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, տեղի ունեցաւ Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ՝ Գերշ. Տ. Սուրէն Սրբ. Արք. Գաթարոյեանի «Ծիսական Գիտելիքներ» Հատորի Լոյս Ընծայման շնորհահանդէսի ձեռնարկը, ներկայութեամբ Հեղինակ Սրբազանին:

Հատորի ներկայացումը կատարեց Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդի Վարիչ՝ Հոգշ. Տ. Վարդան Աբղ. Թաշճեան:

Իր սրտի խօսքը ունեցաւ նաեւ Սուրէն Սրբազան, որ երախտագիտական ու շնորհակալական խօսքերով արտայայտուեցաւ:

Ձեռնարկի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ Սուրէն Սրբազանի անձին, գործունէութեան ու մա-

նաւանդ անոր անխոնջ ծառայութեան: Ապա կատարուեցաւ «Ծիսական Գիտելիքներ» Հատորի գինեձօնի արարողութիւնը:

ԿԻՐԱԿԻ, 11 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Առաջնորդ Սրբազանը, առաւօտեան ներկայ գտնուեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Ժամերգութեան:



Կէսօրին, Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Ստեփանոս Վրդ. Փաշայեանին եւ Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովի անդամ՝ Ժիւլիէթ Սարգիսեանին, մեկնեցաւ Սէնթ Գաթրինգ: Պատարագեց եւ քարոզեց Սուրբ Ծննդեան Տօնին առիթով: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Զըր-օրհնէք:



Յետմիջօրէին, Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Սէնթ Գաթրինգի ՀՕՄ-ի Շաբաթօրեայ Վարժարանի կազմակերպած տարեկան սիրոյ սեղանին, որու ընթացքին աշակերտները հանդէս եկան գեղարուեստական յայտագրով: Այս առիթով, Սրբազան Հայրը օրհնեց նաեւ Սէնթ Գաթրինգցիներու Աւանդական «Լաւաջ»ը: Աւարտին իր շնորհաւորութիւններով գնահատեց կատարուած աշխատանքը, քաջալերեց եւ աղօթքով փակեց սիրոյ սեղանը:



Նոյն օրը երեկոյեան, Markham Theatre-ի մէջ, Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ «Հորովել» եւ «Canar» համոյթներու գեղար-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսնդիսավայրը դարձած Կայէնական [հին] այխտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

Լեստական յայտագրին, ձօնուած Հայոց Ցեղասպանութեան 100-Ամեակին: Ձեռնարկը կազմակերպուած էր Թորոնթոյի «Հայ Ակումբ»-ին կողմէ: Հանդիսութեան ներկայ էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանն ու ընտանիքի անդամները: Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Սրբազան Հօր Պատգամով եւ Աղօթքով:

ԿԻՐԱԿԻ, 18 ՅՈՒՆՆՈՒԱՐ, 2015

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ եւ քարոզեց Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ՝ Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. -ի ձեռամբ մատուցուած Սուրբ Պատարագին: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Հայաստանի՝ Գիւմրի քաղաքին մէջ սպաննուած՝ Աւետիսեան ընտանիքի վեց անդամներու հոգիներու խաղաղութեան ի խնդիր: Հոգեհանգիստ կատարուեցաւ նաեւ Հրանդ Տինքի սպաննութեան 8-րդ տարելիցին առիթով:



Նոյն յետմիջօրէի ժամը 4:00-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Հոգչ. Տ. Վարդան Աբղ. Թաշձեանին եւ Արժ. Տ. Գաբրիէլ Քհնյ. Գամայեանին, ներկայ գտնուեցաւ Եկեղեցիներու միութեան նուիրուած աղօթքի արարողութեան, որ տեղի ունեցաւ Մոնթրէալի Santa Cruz (Mission Portuguese) Եկեղեցւոյ մէջ, մասնակցութեամբ Կաթողիկ, Անկլիքան, Արեւելեան եւ Արեւմտեան Ուղղափառ, Լուտերական, Աւետարանական, Ուքրանական, Հոգեգալստական, Մկրտչական, Երիցական եւ այլ Բողոքական Եկեղեցիներու:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 20 ՅՈՒՆՆՈՒԱՐ, 2015

Երեկոյեան ժամը 7:30-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ազգ. Վարչութեան Կրօնական Ժողովի Ատենապետ՝ Արժ. Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեանի եւ Առաջնորդարանիս Դիւանապետուհի

Տիկին Տանիա Օհանեանի, ներկայ գտնուեցաւ Մոնթրէալի Միջ-Յարանուենական հերթական հանդիպումին, Լաւալի Ս. Խաչ Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ: Ներկայ էին էջմիածնական Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Գեղչ. Տ. Արզար Սրբ. Եպս. Յովակիմեան, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հովիւ՝ Տ. Վազգէն Աւ. Քհնյ. Պօյաձեան, Ս. Խաչ Եկեղեցւոյ Հովիւ՝ Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան, Հայ Կաթողիկէ Առաջնորդական Փոխանորդ՝ Գեղչ. Հայր Գէորգ Ծ. Վրդ. Զապարեան, Հայ Աւետարանական Համայնքի ներկայացուցիչ՝ Վեր. Աւետիս Զարիֆեան: Հանդիպման զլխաւոր պատճառը Յեղասպանութեան 100-Ամեակին առիթով Միջ-Եկեղեցական արարողութեան մը կազմակերպման վերջին մանրամասնութիւններու լուծումն էր: Եղբայրական ջերմ միջնորդութիւններու շնորհիւ իր լրումին հասաւ Պատուելի Զարիֆեանի աղօթքով:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՅՈՒՆՆՈՒԱՐ, 2015

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան Տօներուն առիթով, Երեկոյեան ժամը 8:30-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, ընդունեց Հ.Մ.Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային Վարչութեան, Մոնթրէալի եւ Լաւալի Տեղական Վարչութեանց կազմերը: Սրբազան Հայրը գնահատելով հանդերձ Հ.Մ.Ը.Մ.-ին կազմակերպուածութիւնն ու մեծ ներդրումը ազգային մեր կեանքէն ներս, որոշ մտահոգութիւններ յայտնեց նոր սերունդին կապուած եւ անոնցմէ խնդրեց, որպէսզի Յեղասպանութեան 100-Ամեակին առիթով առաւել աշխատունակութեամբ լծուին իրենց վրատահուած առաքելութեան:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ՅՈՒՆՆՈՒԱՐ, 2015

Կէսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեց Կաթողիկոսարանի Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց եւ Տեղեկատուական Բաժանմունքներու Վարիչ՝ Գեղպ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Մարտիրոսեանը եւ ըն-



Չմայրեցան, սոսկացին բազմություններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ իսանդիսավայրը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արինն անդադար կ'աղաղակէ, [րսելով]։ «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց)։

դունուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ:

ՀԱՔԱԹ, 24 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Հայրը, ներկայ գտնուեցաւ Գանատայի Մարոնիթ Համայնքի Միութեան կողմէ կազմակերպուած տարեկան հանգանակային GALA ընդունելութիւն-ճաշկերոյթին, որուն այս տարուան գումարը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Լիբանանի Մարոնիթ վարժարաններուն: Այս առիթով ներկայ էին Մարոնիթներու Գանատայի Առաջնորդ Paul-Marwan Tabet **Եպիսկոպոս, Անտիոքի Յոյն Ուղղափառաց Առաջնորդ Alexander Mufarrrij Եպիսկոպոս Գանատայի Առաջապահութեան Նախարար՝ Gaétan Barrette (Minister of Health), Գանատայի Խորհրդարանի անդամ՝ Thomas Mulcair (Leader of the Official Opposition New Democratic Party of Canada), Լիբանանի Հանրապետութեան Գանատայի Դեսպան՝ Տիկին Micheline Abi-Samra, Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկաներէն**

Մարոնիթներու միութեանց ներկայացուցիչներ, եւ շուրջ հազար ներկաներ: Սրբազան Հայրը, Մարոնիթ եւ Յունաց Առաջնորդները առանձնակի հանդիպում մը ունեցան Gaétan Barrette-ի եւ Thomas Mulcair-ի հետ:

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ գրտնուեցաւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագին՝ ձեռամբ Գերպ. Տ. Յովսիկ Ծ. Վրդ. Մարտիրոսեանի, որ նաեւ տուաւ օրուան քարոզը:

ՀԻՆԳՇԱՔԹԻ, 29 ՅՈՒՆՈՒԱՐ, 2015

Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Կաթողիկոսարանի Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի անդամ՝ Բժիշկ Ժիրայր Պամաձեանի, մեկնեցաւ Սուրբ Աթոռ՝ Անթիլիաս, մասնակցելու համար 100-Ամեակի նըւիրուած ժողովներուն:

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

Հաւատացէք Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ,

ընդունեցէք Անոր միութիւնը անշունջ լուռ հաւատքով:

Մենք, Հողապատեան արարածներս,

ինչպէ՛ս կրնանք քննել Անիմանալին, Աքքննելին եւ կամ՝ ճանչնալ Բարձրեալը:

Մենք, որ ունեցած ենք սկիզբ, ինչպէ՛ս կրնանք ըմբռնել Անսկիզբը, Անհասանելին:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ես մարմինիս կանթեղին լոկ ձէթը կը կրեմ, իսկ դուն անոր լոյսն ես, Տէր:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

Աստուծոյ հանդէպ սէրը կը ծնի Անոր հետ գրուցելէն:

ԻՍԱՀԱԿ ԱՍՈՐԻ



Զմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղենն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [իին] պիտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):



Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տ. Մեղրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին եւ Ազգային Վարչութեան

Կազմակերպութեամբ
Ազգային Առաջնորդարանի
Հայեցի եւ Քրիստոնէական Դաստիարակութեան խորհուրդներուն

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ 2-6 ՄԱՐՏ 2015

- Քրիստոնէական եւ Հայեցի Դաստիարակութիւն
- Մանկավարժական, ժամանցային եւ մարզական խաղեր
- Արուեստի եւ ձեռային աշխտանքներու պահեր
- Պտոյտներ (Tubing եւ Tennis 13)
- Անակնկալներ եւ հաճելի ընկերային պահեր

Վայր՝ Սուրբ Յակոբ Ազգային վարժարան
Ժամ՝ առաւօտեան 8:00-էն կէսօրէ ետք 4:00
Յաւելեալ ծառայութիւն (Service de garde)՝ 4:00-6:00

Մասնակցութեան սակ՝ 125\$ (պտոյտները ներառեալ)
Ճամբարին կրնան մասնակցիլ 5-12 տարեկան մանուկներն ու պատանիները

Արձանագրուելու համար հեռաձայնել Ազգային Առաջնորդարան
514-856-1200 թիւին կամ գրել՝ prelacy@armenianprelacy.ca հասցէին
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԿԷՏ՝ 23 ՓԵՏՐՈՒԱՐ 2015

ԶԵՐ ԶԱԻԱԿՆԵՐԸ ՎՍՏԱՀԵՑԷՔ ՓՈՐՁԱՌՈՒ ԵՒ ՄԱՍՆԱԳԷՏ ՎԱՐԻՉՆԵՐՈՒ



Ձմայեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղենն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբէլին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ընելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):



Հովանաորութեամբ՝
Քերաշնորհ Տ. Մեղրիկ Սրբ. Եպկ. Բարիքեանի
 Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին եւ Ազգային Վարչութեան

Կազմակերպութեամբ՝
 Ազգային Առաջնորդարանի
 Հայեցի Դաստիարակութեան խորհուրդին

ՄԱՆԿԱԿԱՆ ՓԱՌԿՏՕՆ

21 ՓԵՏՐՈՒԱՐ, 2015

5-12 տարեկան մանուկներուն
 ու պատանիներուն համար



- Մանկական թատերական ներկայացում
 նուիրուած Կոմիտաս վարդապետին,
 առաւօտեան ժամը 11:00-ին եւ
 Կէսօրուան ժամը 1:30-ին

- Պատմութեան ժամ

- Ձեռային աշխատանքներու կրպակներ՝

- «Կը յիշեմ»
- «Կը ծաղկիմ»
- «Հայաստանը սրտիս մէջ»
- «Հայկական խոհանոց»
- «Հայկական նուագարներ»
- «Հայկական շապիկներու
 պատրաստութիւն»

եւ հետաքրքրական խաղեր
 աշխատանքներ

Վայր՝
 ՀՄԸՄ ԿԱՄՔ մարզասրահ
 Ժամ՝ առաւօտեան 10:00-էն
 կէսօրէ ետք 4:00

Արձանագրուելու համար հեռաձայնել
 Ազգային Առաջնորդարան 514-856-1200 թիւին




Մուտքը ազատ



Չմայրեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին Եղեմն՝ իանդիսավայրը դարձած Կայէնական [իին] ախտին դժոխաբորբ կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



Մայիս 2014-ին, Մոնթրէալի մէջ գումարուած Գանատայի Հայոց Թեմի Ազգային երեսփոխանական ժողովը, իր քննարկումներուն ընթացքին, լայնօրէն անդրադարձաւ Հայեցի դաստիարակութեան մարտահրաւէրներուն եւ զանոնք դիմակալելու գլխաւոր միջոցներուն, շեշտելով՝ որ հայակերտումի սատար հանդիսացող հիմնաքարերու գետեղումը այսօր, իւրֆանչիւր հայ անհատի եւ մանաւանդ հայ երիտասարդի սրբազան աշխատանքն է, որուն համար անհրաժեշտ է հաւատք, կամք եւ գիտութիւն:

Առ այդ, Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Հայեցի Դաստիարակութեան Խորհուրդին ու անոր կից յառաջացած Հայագիտական լսարաններու պատասխանատու կազմին, Մարտ 2015-էն սկսեալ, Առաջնորդարանէն ներս պիտի սկսի Հայագիտական լսարաններու շարք մը:

Այս լսարաններու շարքին գլխաւոր նպատակն է մասնակիցներուն փոխանցել հայագիտական նիւթերու վերաբերեալ անհրաժեշտ եւ հիմնական գիտելիքներ, որպէսզի անոնք առաւելագոյն չափով օգտակար հանդիսանան մեր գաղութի նորահաս սերունդին, շողկապելով իրենց ձեռք ձգած գիտութիւնը հայակերտումի աշխատանքին:

Հայագիտական լսարաններու առաջին ծրագիրը կը կրէ «Հայկական Մշակոյթ» ընդհանուր խորագիրը: Տասնըրկու լսարաններու ընթացքին, դասախօսները պիտի ներկայացնեն հայկական մշակոյթի տարբեր երեսները՝ երաժշտութիւն, գեղանկարչութիւն, ֆիլմարուեստ եւ թատրոն:

Լսարանները տեղի պիտի ունենան Ազգային Առաջնորդարանէն ներս, շաբաթական դրութեամբ՝ երեքշաբթի երեկոները, սկսեալ 10 Մարտ 2015-ին, երեկոյեան ժամը 19:30-21:30: Մասնակցելու համար սոյն լսարաններուն, պայման է արձանագրուիլ: Արձանագրութեան համար, հետաքրքրուողները կրնան դիմել Ազգային Առաջնորդարան, հեռաձայնելով 514-856-1200 թիւին եւ կամ գրել prelacy@armenianprelacy.ca հասցէին: Մասնակցութեան խորհրդանշական սակն է՝ \$50.00:



Չմայլեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]. «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց):

ՄԻՌՈՆՕՐՀՆԷՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ
ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ
ԿԸ ԾԱՆՈՒՅԱՆԵՆՔ ԹԷ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀԱՆԴԵՐՉԵԱԼ Է ՍՐԱՍՈՅՍ
ՄԻՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ,
ՇԱՐԱԾ, 18 ՅՈՒԼԻՍ 2015-Ի ԵՐԵՎԱՆԻ
ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱ



Սիրելի Հաւատացեալներ.

Գանատայի Հայոց Թեմը, այս առիթով պիտի կազմակերպէ ուխտագնացութիւն մը, դէպի Լիբանան: Անոնք, որոնք կը փափաքին սոյն ուխտագնացութեան մաս կազմել, կրնան դիմել Ազգային Առաջնորդարան, հեռաձայներով 514 856 1200 թիւին:

Մանրամասնութիւնները յառաջիկային պիտի յատարարուին:



Չմայլեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան իին եղեմն՝ հանդիսավայրը դարձած Կայենական [հին] ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, [ըսելով]։ «Տէ՛ր սուրբ, ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Շարական Ապրիլեան Նահատակաց)։

ԿԱՆՈՆ ՀԱՐԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ



Չմայլեցան, սոսկացին բազմութիւններն երկնային եւ մեծապէս ապշեցան, սարսափեցան ազգերը երբոր տեսան Հին Եղեմն Հանդիսավայրը դարձած Կայենական (Հին) ախտին դժոխաբորը կրակին, եւ նոր պատարագումը այս նորագոյն Աբելին, որուն արիւնն անդադար կ'աղաղակէ, (ըսելով) (Համեմատ՝ Եբրայեցի 11.4)։-

«Տէ՛ր սուրբ եւ ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը» (Յայնսոսկի 6.10)։

Հարազատ պատկերնէ՛րը Աստուծոյ Գառնուկին, որոնք սպանդ-քշուեցան ոչխարներու Հօտի պէս, անմուռնջ որոջներու նման կանգնած առջևը անասնական բնազդով գազանացած խուզողներուն. այնպէ՛ս չբացին իրենց բերանը (Համեմատ՝ Եսայի 53.7) բողբոջելու ընդդէմ դաժան դահիճներուն.-

«Տէ՛ր սուրբ եւ ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը»։

Իրենց խոնարհ ըլլալուն՝ վերցուեցա՛ւ դատաստանն, ինչպէս իրենք խլուեցան իրենց Հայրերու երկրէն, թեպէտ անոնք ոեւէ յանցանք մը չէին գործած եւ բնաւ իրենց բերնէն նենգութիւն մը չէր լսուած (Համեմատ՝ Եսայի 53.8-9)։

Քրիստոս Յիսուսի անդատաստան զենումին (Գործք Առաքելոց 8.32-35)։

«Տէ՛ր սուրբ եւ ճշմարիտ, մինչեւ ե՞րբ սպասես. ե՞րբ է որ պիտի դատես երկրի բնակիչները՝ անոնցմէ պահանջելու մեր արիւնին վրէժը»։



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
 ARMENIAN PRELACY OF CANADA
 PRÉLATURE ARMÉNIENNE DU CANADA
 3401 Olivar Asselin, Montreal, Quebec H4J 1L5
 TEL: 514-856-1200 ♦ FAX: 514-856-1805
 E-MAIL: prelacy@armenianprelacy.ca
 www.armenianprelacy.ca